Մայա Բլիաձե
Մանանա Սեխնիաշվիլի

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

Ուսուցչի գիրք

ՍՈՒԼԱԿԱՎՐԻՍ
ԳԱՄՈՄՑԵՄԼՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից, 2023 թվականին:

Աշխարհագրություն 11
Ուսուցչի գիրք
Հեղինակներ՝ **Մայա Բլիաձե, Մանանա Սեխնիաշվիլի**

Խմբագիր՝ **Մանանա Նիժարաձե**
Դիզայներ և նկարազարդող՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Թինաթին Բերբերաշվիլի**

Առաջին հրատարակություն, 2023
© Սուլակաուրիի հրատարակչություն, 2023
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-481-4

Geography 11
Teacher's Book

© Sulakauri Publishing, 2023
All rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԱՍՏԻՃԱՆԻ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ 8

3. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ 11

4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ 12

5. ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԴԱՍԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵՋ 18

6. ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱՆԵՐ 23

7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ 74

8. ԳՆԱՀԱՏՈՒՄ 88

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 104

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XI դասարանի աշխարհագրության դասագրքի գլխավոր կրթական գործառույթն աշակերտների մեջ աշխարհագրական գիտելիքների ձեռքբերման և օգտագործման հմտությունների ձևավորումն է:

Դասագիրքը բաղկացած է 3 միավորից. Աշակերտի գիրք, Ուսուցչի գիրք և Աշակերտի տետր:

Աշխարհագրության ուսումնառության նպատակներից ելնելով՝ XI դասարանի դասագրքի նպատակն է, որ աշակերտը կարողանա.

- Աշխարհագրական թաղանթն ընկալել ամբողջության մեջ և վերլուծել աշխարհագրական ոլորտների տեսակների (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ, նոոոլորտ, Երկրի ներքին կառուցվածքը) փոխկախվածությունը՝ որոշելու համար աշխարհագրական թաղանթների օրինաչափությունները:
- Վերլուծել բնական պայմանների և ռեսուրսների ազդեցությունը բնակչության տնտեսական գործունեության և կենսակերպի վրա՝ որոշելու համար աշխարհագրական թաղանթների օրինաչափությունները:
- Վերլուծել բնակչության հիմնական բնութագրիչները և դինամիկան՝ որոշելու համար բնական և հասարակական համակարգերի վրա նրանց ազդեցությունը:
- Ապագա սերունդների շահերի նախատեսմամբ՝ ռացիոնալ օգտագործել և կառավարել ռեսուրսները:

Ինչպես նաև՝ դասագիրքն աշակերտին կօգնի.

- Ճանաչել ընդհանուր աշխարհագրական օրինաչափությունները, հասարակական և բնական համակարգերի միջև պատճառահետևանքային կապերը:
- Ճիշտ որոշել իր տեղը բնական, սոցիալական և մշակութային կառույցներում տարբեր՝ տեղական, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում:

X դասարանի Աշխարհագրություն դասագիրքը ներառում է 2 թեմա.

1. Կլիմայի գլոբալ փոփոխություն:
2. Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները:

Դասագրքի բովանդակությունը, թեմայի շրջանակներում ներկայացված խնդիրները, լիովին համահունչ են Ազգային ուսումնական պլանով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքներին:

Դասագրքում տեքստային, դասի մասին կից տրված են բազմազան քարտեզագրական նյութեր (թեմատիկ քարտեզներ), ինչպես նաև գծագրեր, աղյուսակներ, դիագրամներ, սխեմաներ, ինֆոգրաֆիկաներ, նկարազարդումներ (լուսանկարներ, օդային լուսանկարներ): Դասագրքում ներկայացված բոլոր հարցերն ունեն ներդիր, որտեղ, ելնելով հարցի բովանդակությունից, տրված է խորագիր «Պահապան», իսկ յուրաքանչյուր հարց ավարտվում է «Սա հետաքրքիր է» խորագրով:

Յուրաքանչյուր քննարկված հարցի հետ տրված են առաջադրանքներ, որոնց մեծ մասը ուսուցչից պահանջում է վերլուծաբանական, քննադատական, ստեղծագործական մտածողություն և սեփական դիրքորոշման արձանագրում:

Առաջադրանքների բլոկում առանձնացվում է «Վրաստանը և և աշխարհը»: Այստեղ տրված առաջադրանքները, ելնելով մշակվելիք հարցից, կապվում են Վրաստանի հետ և աշակերտին հնարավորություն տալիս տեսնել և սահմանել սեփական երկրի տեղն ու դիրքը աշխարհում ընթացող տարբեր հասարակական գործընթացներում:

Դասագրքում առաջադրանքներից բացի ներկայացված են խորագրեր՝ Դեպքի վերլուծություն, Գործնական աշխատանք, Համալիր առաջադրանք, իսկ աշակերտի տետրում տրված է յուրաքանչյուր հարցի հետ կապված աշխարհագրական հետազոտություն: Հարկ է նշել, որ «Դեպքի վերլուծություն» և «Աշխարհագրական հետազոտություն» խորագրերում տրված

նյութը կարող է օգտագործվել ուսուցչի կողմից ինչպես համալիր առաջադրանքների մշակման փուլում, այնպես էլ, ուսուցչի ցանկության դեպքում, միանգամայն հնարավոր է դրանք վերածել համալիր առաջադրանքի:

XI դասարանի աշխարհագրության դասագրքում ներկայացված առաջադրանքները և խորագրերը հիմնված են դասավանդման կոնստրուկտիվիստական կրթական սկզբունքների վրա և միտված են երկարաժամկետ նպատակների, հասկացությունների մշակման և կայուն պատկերացումների ձևավորման: Դրանք կօգնեն աշակերտներին զարգացնել իրենց տեղեկությունների որոնման, կազմակերպման, մշակման և վերլուծության կարողությունը, դառնալ հետաքրքրասեր, նրանց մոտ կառաջանան աշխարհագրական հարցեր և իրենք կգտնեն դրանց պատասխանները և կկարողանան գիտելիքը տեղափոխել կենսական համատեքստ: Տրված առաջադրանքներն ու նախագծերը կօգնեն ուսանում-ուսուցման գործընթացը վարել դինամիկ, միտված կլինեն որակյալ կրթություն ստանալուն, այլ ոչ թե՝ նյութի մակերեսային ուսանմանը:

XI դասարանի Աշխարհագրության դասագիրքն ունի օժանդակ մեթոդական դասագիրք՝ Ուսուցչի գիրք: Դրանում տրված են հետևյալ տեղեկությունները.

- թեմաները և գնահատման չափանիշները կապակցող աղյուսակներ, թեմատիկ մատրիցաներ, որոնցում ըստ թեմաների մանրամասնորեն նկարագրված են համալիր առաջադրանքների նմուշներ և դրանց իրականացման փուլերը,
- չափորոշչի արդյունքներին հասնելու և գրքի բովանդակության փոխադարձ կապի քարտեզ,
- որոշող և զարգացնող գնահատման նմուշներ և համապատասխան գնահատման աղյուսակներ,
- լրացուցիչ կրթական ռեսուրսներ:

Ուսուցչի գիրքը կօգնի մանկավարժներին դասերի ժամանակ համալիր առաջադրանքների կատարման փուլերն արդյունավետ պլանավորելու և հետաքրքիր անցկացնելու հարցում:

Ուսուցչի գրքում տրված են նաև ուսուցման տարբերակված մոտեցման իրականացման համար անհրաժեշտ ակտիվություններ, ներառված են տարբեր տեսակի հանձնարարականներ:

Հուսով ենք, որ սույն դասագրքի օգնությամբ աշակերտը գիտելիք կստանա այն հարցերի մասին, որոնք նրան անհրաժեշտ կլինեն հետագա գործնական գործունեության մեջ և կնպաստեն աշակերտների մեջ իրենց երկրի և ամբողջ աշխարհի նկատմամբ հետաքրքրության բորբոքման և աշխարհագրական մտածողության, ինչպես նաև քաղաքացիական գիտակցության ձևավորման մեջ, իսկ Ուսուցչի գիրքը կօգնի աշխարհագրության ուսուցիչներին համալիր առաջադրանքի վրա հիմնված ուսուցումը հաջող իրականացնելու հարցում:

XI դասարանի «Աշխարհագրության» Աշակերտի գիրքը բաղկացած է 2 թեմայից և 16 հարցից: Դասագրքում ներկայացված են խորագրեր.

Հիշի՛ր

1. Ի՞նչ աղետալի բնույթի քամիներ գիտեք, և որտե՞ղ են դրանք տարածված:
2. Ի՞նչ վնաս են հասցնում երաշտը և կարկուտը բնակչությանը:
3. Ո՞ր գետն է Վրաստանի ամենասելավային գետը:

1. Հիշի՛ր. Հարցեր սովորած նյութից և նախապես ունեցած գիտելիքի ակտիվացում:

Առաջադրանք

1. Ինչ եք կարծում, բնական երևույթն ու բնական աղետը նո՞ւյնն են, թե՞ ոչ: Քո կարծիքը հաստատելու համար բե՛ր փաստարկներ:

Ռիսկ

Երևույթի հավանականության և դրա բացասական հետևանքների համադրությունը:

2. Բառարան. Նոր տերմինների, օտար բառերի բացատրություն

3. Առաջադրանքներ. դրանց մի մասը կատարվում է դասարանում, իսկ մի մասն աշակերտներին տրվում է տնային առաջադրանքի տեսքով:

Սա հետաքրքիր է

- Առաջին անգամ կանաչ տնտեսություն տերմինը հնչել է 1972 թվականին Ստոկհոլմում, Միավորված ազգերի կազմակերպության համաժողովում, իսկ 1980 թվականին օգտագործվել է Համաշխարհային պահպանության ռազմավարության զեկույցում («Ռեսուրսների պահպանում կայուն զարգացման համար»), որը համատեղ իրականացրել են այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Բնության պահպանության միջազգային միությունը (IUCN –International Union for Conservation of Nature), Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF – World Wildlife Fund) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP (United Nations Development Programme):

4. Սա հետաքրքիր է. այս մասում աշակերտները կծանոթանան լրացուցիչ տեղեկությունների՝ կապված դասի մեջ տրված նյութի հետ:

Վրաստանը և աշխարհը

Ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր պետություն փորձում է գտնել իր տեղն ու գործառույթը միջազգային տնտեսական տարածքում: Ըստ քեզ՝ ինչպիսի՞ն է Վրաստանի տեղն ու գործառույթը ժամանակակից համաշխարհային տնտեսական տարածքում:

5. Վրաստանը և աշխարհը. առաջադրանքներ, որոնք կապված են Վրաստանի հետ:

Դեպքի վերլուծություն 2

Ծանոթացի՛ր տեղեկություններին և պատասխանի՛ր հարցերին.

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը և Գլխավոր վեհաժողովը մշակել են երկու բանաձև, որոնք ջրբաժան են դարձել խաղաղության խնդրի ըմբռնման պատմության մեջ:

Մինչև 2016 թվականը խաղաղություն հասկացությունը ընկալվում էր որպես հետկոնֆլիկտային իրավիճակին/փուլին ուղեկցող գործընթաց: Սակայն, ըստ ՄԱԿ-ի բանաձևերի՝ կայուն խաղաղությունը սահմանվում է որպես «նպատակ և գործընթաց, որի խնդիրն է կանխել հակամարտության սրումը, կրկնությունը, բորբոքումը, վերսկսումը»: Այսպիսով, բանաձևը ՄԱԿ-ի անդամ երկրներին պարտավորեցնում էր խաղաղության քաղաքականություն մշակել և իրականացնել հակամարտությունից առաջ, հակամարտության ընթացքում և դրան հաջորդող ժամանակաշրջաններում:

2016 թվականից հետո խաղաղությունը, գործընթացին զուգընթաց, դարձավ նպատակ: Նպատակին հասնելու խնդիրն է կանխել սրումը, կրկնությունը, բորբոքումը և վերսկսումը մինչև հակամարտությունը սկսվելը, հակամարտության ժամանակ և դրան հաջորդող փուլում:

Հարցեր

ա. Ինչ ես կարծում, ինչո՞ւ անհրաժեշտ դարձավ բանաձևի փոփոխում 2016 թվականից հետո:

բ. Քո կարծիքով, ելնելով ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող աշխարհաքաղաքական վիճակից, արդյոք անհրաժե՞շտ է նորացնել բանաձևը:

6. Դեպքի վերլուծություն. իրավիճակի վերլուծություն, հարցերին պատասխանել և եզրահանգում անել:

ՆԵՐԴԻՐ

Կլիմայի պահապանները

Վախուշտի Բագրատիոնիի անվան աշխարհագրության ինստիտուտն իրականացնում է գիտահետազոտական, խորհրդատվական և փորձագիտական գործունեություն: Սառցադաշտաբանական հետազոտությունների հիման վրա ինստիտուտը հրատարակել է գիտական աշխատություններ՝ «Սառցադաշտաբանություն» (Ռամին Գոբեջիշվիլի, 2007) և «Սառցադաշտի մշտադիտարկում կլիմայի փոփոխության պայմաններում» (Ռամին Գոբեջիշվիլի, Ալեքսանդրե Ջալախիշվիլի և ուրիշներ, 2012):

Վախուշտի Բագրատիոնիի անվան աշխարհագրության ինստիտուտը

Վախուշտի Բագրատիոնիի անվան աշխարհագրության ինստիտուտում 1960 թվականից ընթանում են սառցադաշտաբանական հետազոտություններ: Կովկասյան լեռնաշղթայի սառցադաշտային հոսքի քարտեզներն ընդգրկվել են աշխարհի ձյունասառցային ռեսուրսների քարտեզագրի մեջ: Ինստիտուտի վերջին գործունեությունից հարկ է նշել 2010 թվականին անցկացված արշավները Ջուվիտոտ սառցադաշտ: Ինստիտուտը շարունակում է դաշտային և տեսանցիկային հետազոտությունները Վրաստանի ձյան և սառցադաշտերի մշտադիտարկման հիման վրա: Կարևոր հետազոտություններ են անցկացվում Վրաստանի կլիմայի և կլիմայական ռեսուրսների, կլիմայի փոփոխության դրսևորումների և ազդեցությունների վերաբերյալ:

Ինստիտուտի ժամանակակից աշխատություններից կարևորագույներն են «Վրաստանի ազգայի քարտեզագիրքը» (2012), «Աշխարհագրական քարտեզագրության տերմինաբանական տեղեկատու» (Գուլիկո Լիպարտելիանի, Դավիթ Լիպարտելիանի, 2012), «Վրաստանի ռելիեֆը» (Ռամին Գոբեջիշվիլի, 2011 թ.), «Վրաստանի կարստային քարանձավների կադաստրը» (Ջուրաբ Սատարշիձե և ուրիշներ, 2009) և այլն:

https://goo.su/7JI7K4

Եթե ցանկանում ես ավելին իմանալ Աշխարհագրության ինստիտուտի մասին, սեղմի՛ր կոպեկը՝

16

7. Ներդիր. Աշակերտներին ծանոթացնում է քննարկված հարցի հետ կապված բնագավառեր և մասնագիտություններ, կազմակերպություններ, գիտնականների և հետազոտողների, հայտնի և անհայտ մարդկանց, որոնք իենց ներդրում են անում տարբեր խնդիրների ուսումնասիրման և վճռման գործընթացում:

Դասագրքում և Աշակերտի տետրում ներկայացված խորագրերը որոշակի ռեսուրս են հանդիսանում համալիր առաջադրանքի վրա աշխատելու ժամանակ:

2. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԱՍՏԻՃԱՆԻ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

Ներածություն

Հասարակական գիտությունները միջնակարգ մակարդակում նշանակում է Պատմության, Հասարակական աշխարհագրության և Քաղաքացիական կրթության ինտեգրված ուսանում-ուսուցում: Ուսանում-ուսուցման համար ընտրված են այնպիսի թեմաներ և հարցեր, որոնք արդիական են ժամանակակից հասարակության համար և կարող են մշակվել բոլոր երեք առարկայական ուղղությունների տեսանկյունից:

Չափորոշչում արդյունքների և նպատակային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ նպատակներ:

Բովանդակությունը նկարագրված է թեմաների (ենթաթեմաների), հարցերի և ենթահասկացությունների տեսքով: Ազգային ուսումնական պլանը սահմանում է պարտադիր թեմաներ, իսկ թեմաներին առնչվող հարցերը դպրոցներն իրենք են ընտրում:

Յուրաքանչյուր թեմա ուղեկցվում է արդյունքների հասնելու ստուգիչներով: Դրանք որոշում են, թե ինչը պետք է գնահատվի ուսանում-ուսուման գործընթացում: Ստուգիչները խմբավորված են ըստ նպատակային հասկացությունների:

Աստիճանի արդյունքները

Միջնակարգ աստիճանում չափորոշչում ամրագրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է դասիչ, որը մատնանշում է առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարը, օրինակ. **Աշխարհ.միջն.1.**՝

«Աշխարհ.»՝ մատնանշում է «Աշխարհագրություն» առարկան,

«միջն.»՝ մատնանշում է միջնակարգ աստիճանը,

«կամընտր.»՝ մատնանշում է խորացված կամընտրական դասընթաց,

«1»՝ մատնանշում է չափորոշչի արդյունքի համարը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ		
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԻՉՆԵՐԸ	ԱՇԱԿԵՐՏԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ.	ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՐՀ.ՄԻՋՆ. ԿԱՄԸՆՏՐ.1.	Աշխարհագրական թաղանթն ընկալել ամբողջության մեջ և վերլուծել երկրոլորտի տեսակների (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ, նոոոլորտ, Երկրի ներքին կառուցվածքը) փոխկախվածությունը՝ աշխարհագրական թաղանթի օրինաչափությունները որոշելու համար:	Աշխարհագրական թաղանթ **(Արդյունքներ 1,2,3,4)**
ԱՇԽԱՐՀ.ՄԻՋՆ. ԿԱՄԸՆՏՐ.2.	Վերլուծել բնական պայմանների և ռեսուրսների ազդեցությունը բնակչության տնտեսական գործունեության և կենսակերպի վրա՝ որոշելու համար զարգացման ընդհանուր տարածական օրինաչափությունները:	Բնակչությունը և տնտեսությունը **(Արդյունքներ 3,4)**
ԱՇԽԱՐՀ.ՄԻՋՆ. ԿԱՄԸՆՏՐ.3.	Վերլուծել բնակչության հիմնական բնութագրիչները և դինամիկան՝ բնական և հասարակական համակարգերի վրա դրանց ազդեցությունը որոշելու նպատակով:	Կայուն զարգացում **(Արդյունքներ 1,2,3,4)**
ԱՇԽԱՐՀ.ՄԻՋՆ. ԿԱՄԸՆՏՐ.4.	Ապագա սերունդների շահերի նախատեսմամբ ռացիոնալ օգտագործել և կառավարել ռեսուրսները:	

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ
1. Գլոբալ ժողովրդագրական մարտահրավերները և փոփոխությունները
2. Ռեսուրսների օգտագործման և կառավարման գլոբալ մարտահրավերները և փոփոխությունները
3. Կլիմայի գլոբալ փոփոխություն
4. Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները
5. Զարգացած և զարգացող աշխարհ
6. Գլոբալ համագործակցություն և կապեր

Ուսանում-ուսուցման գործընթացում դպրոցները պետք է պահպանեն թեմաների առաջարկված հաջորդականությունը։

Պարտադիր թեմաները և գնահատման ստուգիչները կապակցող աղյուսակներ.

Յուրաքանչյուր աղյուսակում տրված են թեմայի անվանումը, նրա նկարագիրը և գնահատման ստուգիչները, որոնցում ցույց է տրված, թե ինչպես են իրացվում արդյունքները կոնկրետ թեմայի մեջ։

XI դասարան

ԹԵՄԱ. ԿԼԻՄԱՅԻ ԳԼՈԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
Թեման վերաբերում է բնակչության և նրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած կլիմայի փոփոխության հետևանքների ուսումնասիրմանը գլոբալ մակարդակով, դրանց կործանարար և վնասակար վտանգների թեթևացմանը, մեղմացմանը և կանխարգելմանը։
Առաջարկվող հարցեր. 1. Սառցադաշտերի հալչելը 2. Ջրագրական-օդերևութաբանական բնական վտանգներ 3. Փախստականներ, ներքին տեղահանվածներ 4. Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ (կանաչ էներգետիկա) 5. «Կանաչ» տնտեսություն 6. Օդի աղտոտումը 7. Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը 8. Բնական վտանգների հարմարվողական միջոցառումներ։ Մեղմացում և կանխարգելում։
Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները՝ ըստ նպատակային հասկացությունների. **Աշխարհագրական թաղանթ:** Աշակերտը պետք է կարողանա • Աշխարհագրական թաղանթն ընկալել ամբողջության մեջ և վերլուծել երկրոլորտի տեսակների (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ, նոոոլորտ) փոխկախվածությունը՝ աշխարհագրական թաղանթի օրինաչափությունները (ամբողջականություն, ռիթմիկություն) որոշելու համար և դրանք կապել կլիմայի գլոբալ փոփոխության հետ (սառցադաշտերի հալվել, ջրագրական-օդերևութաբանական բնական վտանգներ)։ **Բնակչությունը և տնտեսությունը:** Աշակերտը պետք է կարողանա. • Կապել բնակչության հիմնական բնութագրերը և նրանց տնտեսական գործունեությունը (փախստականներ, ներքին տեղահանվածներ, էներգիայի այլընտրանքային աղբյուրներ, «կանաչ» տնտեսություն) կլիմայի գլոբալ փոփոխության հետ։ **Կայուն զարգացում:** Աշակերտը պետք է կարողանա. • Ապագա սերունդների շահերի նախատեսմամբ ռացիոնալ օգտագործել և կառավարել ռեսուրսները (օդի աղտոտվածություն, քաղցրահամ ջրի խնդիր, բնական վտանգների հարմարվողական միջոցառումներ՝ միտիգացիա և կանխարգելում)։

ԹԵՄԱ. ԳԼՈԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Թեման ներառում է քաղաքական իրադարձությունների և գործընթացների պատճառների և հետևանքների ուսումնասիրությունը: Մասնավորապես, նրա վերլուծումը, թե ինչպես է բնական միջավայրն ազդում երկրի կազմաձևի, դրանց սահմանների տեսակների, գլոբալ քաղաքական, սոցիալական և մշակութային բնութագրերի և զարգացման վրա: Ինչպես ճիշտ կառավարել այս գործընթացները՝ խուսափելու համար բարդություններից և սպասվող սպառնալիքներից:
Առաջարկվող հարցեր. 1. Երկրների կազմաձևը, սահմանի տեսակները 2. Երկրների խմբավորումը: Հյուսիս և Հարավ 3. Քաղաքական և մշակութային գլոբալացում 4. Սոցիալական գլոբալացում՝ առողջապահություն, կրթություն, սով 5. Հակամարտություններ, ռեսուրսային «պատերազմներ», տարածքայնություն 6. Անվտանգություն, խաղաղության պահպանում
Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները՝ ըստ նպատակային հասկացությունների. **Աշխարհագրական թաղանթ:** Աշակերտը պետք է կարողանա. • Վերլուծել աշխարհագրական թաղանթի ազդեցությունը աշխարհի երկրների բնութագրերի (օրինակ՝ երկրների կազմաձև, սահմանների տեսակները) և գլոբալ քաղաքական և աշխարհաքաղաքական գործընթացների վրա (երկրների խմբավորում՝ Հյուսիս և Հարավ, քաղաքական և մշակութային գլոբալացում): **Բնակչությունը և տնտեսությունը:** Աշակերտը պետք է կարողանա. • Վերլուծել քաղաքական գործընթացների և բնակչության սոցիալական հիմնական բնութագրերի (առողջապահություն, կրթություն, սով) միջև փոխազդեցությունը: **Կայուն զարգացում:** Աշակերտը պետք է կարողանա. • Դատողություն անել համաշխարհային քաղաքական գործընթացների մասին (հակամարտություններ, ռեսուրսային «պատերազմներ», ահաբեկչություն, անվտանգություն, խաղաղության պահպանություն)՝ ապագա սերունդների շահերի նախատեսմամբ:

3. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ

Թեմաների և հարցերի անվանումը	ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ				
	Աշխարհ.միջն.1. Աշխարհագրական թաղանթն ընկալել ամբողջության մեջ և վերլուծել երկրոլորտի տեսակների (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ, նոոոլորտ, Երկրի ներքին կառուցվածքը) փոխկախվածությունը՝ աշխարհագրական թաղանթի օրինաչափությունները որոշելու համար:	**Աշխարհ.միջն.2. Վերլուծել բնական պայմանների և ռեսուրսների ազդեցությունը բնակչության տնտեսական գործունեության և կենսակերպի վրա՝ որոշելու համար զարգացման ընդհանուր տարածական օրինաչափությունները:**	**Աշխարհ.միջն.3. Վերլուծել բնակչության հիմնական բնութագրիչները և դինամիկան՝ բնական և հասարակական համակարգերի վրա դրանց ազդեցությունը որոշելու նպատակով:**	**Աշխարհ. միջն.4. Ապագա սերունդների շահերի նախատեսմամբ ռացիոնալ օգտագործել և կառավարել ռեսուրսները:**	**Նպատակային հասկացություններ և հասկացության կայուն պատկերացումներ.** **Աշխարհագրական թաղանթ (Արդյունքներ 1,2,3,4)** • Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: • Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա: **Բնակչությունը և տնտեսությունը (Արդյունքներ 3,4)** • Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: • Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: • Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ- տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա: **Կայուն զարգացում (Արդյունքներ 1,2,3,4)** • Տեղական գործողություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: • Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար:
	1	2	3	4	
Թեմա 1. Կլիմայի փոփոխություն					
1. Սառցադաշտերի հալչելը					
2. Զրագրական-օդերևութաբանական բնական վտանգներ					
3. Բնական վտանգների հարմարվողական միջոցառումներ: Մեղմացում և կանխարգելում					
4. Փախստականներ, ներքին տեղահանվածներ					
5. «Կանաչ» էկոնոմիկա					
6. Կանաչ էներգետիկա					
7. Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը					
8. Օդի աղտոտվածություն					
Թեմա 2. Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները					
9. Երկրների կազմաձևը, սահմանի տեսակները					
10. Երկրների խմբավորումը: Հյուսիս և Հարավ					
11. Գլոբալացումը և գլոբալ խնդիրները					
12. Քաղաքական և տնտեսական գլոբալացում					
13. Մշակութային գլոբալացում					
14. Առողջապահություն, կրթություն, սով					
15. Հակամարտություններ, ռեսուրսային պատերազմներ, ահաբեկչություն					
16. Անվտանգություն, խաղաղության պահպանում					

4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ի՞ՆՉ Է ԼԱՊԲՈՒՔԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾԵԼ ԱՅՆ

Լապբուքը տեղեկության փոխանցման և կազմակերպման օրիգինալ և նորարար միջոց է, միևնույն ժամանակ գեղեցիկ է և օգտակար: Նրա կիրառման գրավչությունը մեծանում է ինչպես ուսուցիչների և աշակերտների, այնպես էլ ծնողների շրջանում: Գրախանութներից արդեն կարելի է գնել տարբեր տեսակի տետրեր, սակայն աշակերտը կարող է դրանք ստեղծել նաև իր ձեռքով:

Լապբուքի գաղափարի հեղինակը համարվում է ամերիկուհի Թամմի Դյուբը: Նա մի ոչ այնքան մեծ թղթապանակին փակցրել է փոքրիկ գրպանիկներ, յուրաքանչյուր «գրպանիկին» անուն է տվել և դրանց մեջ դրել է նկարներ, բանաստեղծություններ, փոքրիկ կոմիքսներ և այլն: Նա պահպանել է այն ռեսուրսները կամ տեղեկատվության աղբյուրները, որոնք օգտագործում էր իր երեխաների հետ, այսինքն՝ օգտագործում էր «գրպաններով» թղթապանակ՝ տեսակավորված տեղեկությունները պահելու համար:

Այսօր լապբուքերը ուսուցման գործընթացում համարվում են նորարարական տեխնոլոգիա, որն ունի բազմաթիվ առավելություններ: Լապբուքը (ինչպես հաճախ անվանում են այն՝ ինտերակտիվ թեմատիկ թղթապանակը) թղթից պատրաստված ձեռագործ գիրք է՝ գրպաններով, պատուհաններով, դռներով և տարբեր շարժվող մանրամասներով: Այն օգտագործելիս երեխան կարող է հանել, տեղափոխել, վերադասավորել և տեսակավորել տարբեր բաժիններում դասավորված տեղեկությունները: Լապբուքը պարունակում է նյութեր մեկ կոնկրետ թեմայի վերաբերյալ: Բացի այդ, lapbook-ը աշակերտի ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական փուլն է, որը նա ավարտել է տվյալ հարցի/թեմայի ուսումնասիրության և հետազոտության շրջանակներում: Այս թղթապանակը լրացնելու համար աշակերտը պետք է կատարի տարբեր առաջադրանքներ, կատարի դիտարկում, փորձ, տարբեր աղբյուրներից մանրամասն ուսումնասիրի հարցը, գրանցի դիտարկման արդյունքները, դասակարգի տեղեկությունները և այլն:

Լապբուքի ստեղծումը կօգնի աշակերտին գտնել և համակարգել տեղեկություններ ուսումնասիրվող հարցի վերաբերյալ: Հետագայում այս թղթապանակները վերանայելիս նա հեշտությամբ կհիշի հարցը/թեման և հեշտությամբ կգտնի իր համար այդ պահին անհրաժեշտ և կարևոր կոնկրետ նյութը:

Լապբուք (lapbook) բառը անգլերենից թարգմանվում է որպես «ծալովի գիրք», «ծնկների գիրք», և երկու տարբերակներն էլ ընդունելի են, քանի որ լապբուքը մեծ չափերի չէ: Այն ծալվում է A4 ֆորմատի չափսով և հարմար է աշակերտին գրկում դնելու համար: Բացի այդ, այս զարմանալի գրքերը լի են առեղծվածներով և հանելուկներով՝ բացվում են և ունեն գրպանիկներ, ներդիրներ, նոթատետր, որոնք իրենց հերթին պարունակում են թեմատիկ տեղեկություններ, ինչը շատ են հավանում, և ինչը շատ է գրավում փոքրիկ քննիչներին և հետազոտողներին:

Լապբուքի նմուշներ



ԼԱՊԲՈՒՔՆ ՈՒՆԻ ԵՐԿՈՒ ՀՍՏԱԿ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ.

- **Ինտերակտիվություն:** Աշակերտը ոչ միայն դիտարկում է այն, այլ նաև շփվում է թղթապանակի հետ: Երեխայի արդյունավետ մասնակցությունը զգալիորեն մեծացնում է նրա հետաքրքրությունը այս օգտակար ուսումնական ռեսուրսի նկատմամբ: Հատկապես կարևոր է նման վերաբերմունքը կինեսթետիկ ուսանման ոճով աշակերտների համար, քանի որ բոլորը գիտեն, թե ժամանակակից կրթական գործընթացում ինչպիսի մեծ դեր է խաղում տեսողական ռեսուրսների (նկարազարդումներ, տեսանյութեր, սլայդներ և այլն) օգտագործումը:
- **Թեմատիկություն:** Փոքր թղթապանակում տարբեր թեմաների մասին տեղեկատվություն հավաքելն այնքան էլ հեշտ չէ: Տարրական մակարդակում՝ առաջին և երկրորդ դասարաններում, երեխաների համար դժվար կլինի յուրացնել և հասկանալ այն, ուստի լապբուքերը սովորաբար նվիրված են մեկ կոնկրետ թեմայի, օրինակ՝ տարրական մակարդակում դրանք կարող են լինել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ «Աշուն», «Թռչուններ», «Ընտանիք», «Սունկ», «Տիեզերք», «Եղանակ» և այլն: Ավելի բարձր դասարաններում (3-6-րդ դասարաններ), երբ աշակերտներն ավելի խորն են ուսումնասիրում թեմաները, լապբուքում հնարավոր է ավելի կոնկրետ ենթատեքստեր լուսաբանել, օրինակ՝ «Աշնանային բարիք», «Չվող թռչունները», « «Ընտանեկան տոնակատարություններ», «Արեգակնային համակարգի մոլորակները», «Եղանակի փոփոխություն» և այլ:

  Լապբուքի օգտագործման նպատակները նույնպես տարբեր են: Սա ինչպես նախագծի իրականացման գործընթացում սովորած նյութի ամրապնդումն է, այնպես էլ տեղեկությունների հավաքագրման և համակարգման ուսումնասիրությունը, ստեղծարարության և կրեատիվության զարգացումը, ստեղծածի նկատմամբ հոգատար վերաբերմունքը, խմբային աշխատանքի ընթացքում հաղորդակցման հմտությունների զարգացումը և ուրիշների աշխատանքի նկատմամբ հարգանքը:

  Շատ կարևոր է նաև, որ լապբուքերի միջոցով խթանվում է աշակերտների մեջ ստեղծագործական գործունեությունը, բարձրացվում է մոտիվացիան և ձգտումը նոր բաներ հասկանալու և սովորելու:

  Աշակերտները կարող են օգտագործել լապբուքերը որպես օժանդակ ռեսուրս համալիր առաջադրանքի վրա աշխատելիս (օրինակ, լապբուքի յուրաքանչյուր վանդակում պահեն որևէ գնահատման ստուգիչին համապատասխանող նյութ) կամ ստեղծել որպես համալիր առաջադրանքի վերջնական արդյունք: Լապբուքերն ըստ նշանակության կարող են լինել ժամանցային (խաղալու), ուսումնական, շնորհավորական, կենսագրական և այլն:

  Ժամանցային (խաղային) լապբուքը նախատեսված է խմբակային կամ ինքնուրույն խաղի համար, ուստի հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացվի ժամանցի, տեղեկության հեշտ ընկալման վրա: Այդպիսի լապբուքում բացի շարժական խաղի տարրերից (պատուհաններ, շրջաններ, հանվող գրպաններ) կարելի է ավելացնել քարտեր այնպիսի տրամաբանական խաղերի համար, ինչպիսիք են՝ «Գուշակի՛ր՝ ով եմ ես», «Ի՞նչ եմ պահել մտքումս» և այլն:

  Ուսումնական լապբուքը արտասովոր միջոց է կազմակերպված ուսումնական գործունեության և անհատական աշխատանքի համար: Այս տեսակի լապբուքում կարող են տեղավորվել ոչ միայն ուսումնական խաղեր, տեղեկատվական քարտեր, ասացվածքներ, վիճակագրական նյութեր, թեմատիկ լուսանկարներ և քարտեզներ, այլև հետաքրքիր փաստեր, հարցեր և այլն:

Աշխարհագրական բովանդակության լապբուքեր

Այսպիսով, կարելի է վստահորեն ասել, որ լապբուքը թեմատիկ ինտերակտիվ թղթապանակ (գիրք) է, որը ներառում է համակարգված և բազմազան տեղեկատվություն:

RAFT ՄԵԹՈԴԸ

RAFT մեթոդը նպատակ ունի ստեղծել գրավոր տեքստեր որոշակի թեմայի վերաբերյալ: Ստեղծագործական ապրանքը կարող է տարբեր լինել ժանրով և դիզայնով: Այս մեթոդը սովորեցնում է աշակերտներին քննարկել թեման տարբեր տեսանկյուններից ու տեսակետներից, զարգացնում է նրանց գրելու հմտությունները: Դա քննադատական մտածողություն սովորելու ուղիներից մեկն է և ձևավորում է մտածողության համակարգ, որն օգնում է աշակերտներին վերլուծել առարկաները և բովանդակությունը, ձևավորել սեփական եզրակացություններն ու գնահատականները:

RAFT-ը վերծանված է հետևյալ աղյուսակում.

R - ԴԵՐ	A - ԼՍԱՐԱՆ	F - ՁԵՎ	T - ԹԵՄԱ
Սահմանել դերը	Ում համար է նախատեսված տվյալ տեքստը	Ընտրել ժանրը և պատմելու ձևը	Ընտրել թեմա և հիմնական գաղափարները, որոշել տեքստը

RAFT մեթոդը կիրառելիս ուսուցիչը պետք է ընտրի թեմա: Դասը սկսելուց առաջ պետք է պատրաստեք աղյուսակ, պարզապես կարող եք այն նկարել գրատախտակին: Հարկ է նշել, որ աղյուսակը քննարկելիս ուսուցիչը սյունակում պետք է գրի բոլոր մտքերն այնպես, որ դրանք աշակերտների համար տեսանելի լինեն ամբողջ դասի ընթացքում, քանի որ դա կօգնի նրանց վերլուծության և գնահատման առումով:

Ըստ քննադատական մտածողության դասավանդման կառուցվածքի և մեթոդների՝ RAFT մեթոդի մի քանի փուլեր են առանձնացվում:

Խթանման փուլ. այս փուլում հիմնական խնդիրն աշակերտներին ակտիվացնելն է, նրանց մոտիվացնելը: Օպտիմալ է ընտրել այն մեթոդները, որոնք ամենաշատը կհետաքրքրեն և կներգրավեն բոլոր աշակերտներին, օրինակ, զուգորդական քարտեզի և մտագրոհի օգտագործումը:

Աղյուսակում արձանագրվում է 4-5 դիրքորոշում.

Երկրորդ սյունակում գրվում են այն մարդիկ, մարդկանց խմբերը, կազմակերպությունները, ում համար նախատեսված է այս տեքստը: Լսարանը որոշվում է ըստ թեմայի՝ բնակչություն, ծնողներ, ավագ

դպրոցի աշակերտներ, տարրական դասարանների աշակերտներ, կառավարության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ, տնտեսական բնագավառի աշխատակիցներ և այլն։

Հաջորդ սյունակում գրվում են այն հնարավոր ձևերը, որոնք կապված են սոցիալական դերերի և ենթադրյալ ընթերցողների հետ։ Դա կարող է լինել նամակ, գրքույկ, պաստառ և այլն։ Վերջին սյունակում արտացոլվում են տեքստի հիմնական գաղափարները։

Ուսուցիչը կարդում է լրացված աղյուսակը։ Մասնակիցների միջև բաշխվում են դերերը և սկսվում է տեքստը գրելը։ Աշխատանքը կարող է կատարվել ինչպես անհատական, այնպես էլ խմբակային։ Աշակերտներին անհրաժեշտ է բացատրել, թե որքան կարևոր է զգացմունքների և հույզերի փոխանցումը, միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնեն հերոսին, առարկան, իրադարձությունը, այսինքն՝ ինչ պայմաններում կարող է հայտնվել «թեմայի հերոսը»։ Աշխատանքը կարող է լինել խմբակային։ Նախապատվությունը շնորհվում է փոքր խմբերին։ Աշակերտները կներկայացնեն իրենց աշխատանքները։

Ըմբռնման փուլը ներառում է դասագրքի կամ լրացուցիչ նյութի ծանոթացում։ Այս փուլում աշակերտները ստանում են նոր տեղեկություններ, նշումներ կատարում։

Կշռադատման փուլը ներառում է ըմբռնում և վերլուծություն։ Այս փուլում աշակերտները ստանում են նոր տեղեկություններ, քննարկում և համեմատում են նախկինում հայտնի փաստերը և իրենց համար նոր տեղեկությունները։ Ավելի լավ ազդեցիկության հասնելու համար խորհուրդ է տրվում օգտագործել տվյալ թեմայով տեսանելի նյութ (լուսանկարներ, սլայդներ, գծագրեր)։ Այն նպաստում է ձեռք բերված գիտելիքների համախմբմանը, քննարկման ընթացքում պատկերի ձևավորմանը։

Այս ռազմավարությունը նաև խթանում է իմպրովիզացիայի, հաղորդակցության, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը, ինչպես նաև, մեզ հնարավորություն է տալիս հասկանալ և ըմբռնել ներկայացնելու կարևորությունն ու յուրահատկությունը։

QAR ՄԵԹՈԴ (QUESTION-ANSWER-RELATIONSHIP)

ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ-ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

QAR մեթոդի հեղինակը Տեֆի Ռաֆայելն է՝ QAR-ի կառուցվածքն օգնում է աշակերտին խնդիրը հասկանալու, վերլուծելու և գնահատելու գործընթացում։ Տարբեր տեսակի հարցերի օգնությամբ աշակերտները հասկանում են, որ ճիշտ պատասխանը կարող է պահանջել ոչ միայն տեղեկությունների ընթերցում, այլ նաև վերլուծություն և մեկնաբանություն։ Նրանք արտահայտում են իրենց վերաբերմունքը, կարծիքը, նրանք օգտագործում են իրենց փորձը կարդացածի շուրջ և գնահատում փաստը կամ միջոցառումը։

Հարցը, որը ներառում է գրաֆիկական տվյալներ կամ տեքստ, ներառում է համալիր, բազմակողմանի գործընթաց, որը պահանջում է ըմբռնել հարցը։ Սահմանում է, թե ինչպես կարելի է այն վերլուծել ու պատասխան ձևակերպել։

Հարցերը բաժանված են 4 խմբի՝ «Անմիջապես տեքստում», «Մտածի՛ր և գտի՛ր», «Հեղինակը և դու», «Դու ինքդ»։

QAR մեթոդը բարելավում է հարցի ըմբռնման մակարդակը.

- աշակերտին սովորեցնում է հարց տալ և դրան պատասխան տալու եղանակներ,
- օգնում է աշակերտին մտածել տեքստի մասին այն կարդալուց հետո,
- նպաստում է քննադատական և ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ընթերցողներին մղում է ավելի բարձր, խորքային մտածողության։

Ընդհանուր շրջանակ.

ՀԵՆՑ ԱՅԴՏԵՂ ԿԱՄ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՏԵՔՍՏԻ ՄԵՋ **Սահմանում.** Հարցին պատասխանելու համար տեղեկությունը բավական հստակ արտացոլված է գրաֆիկական կազմակերպիչներում և տեքստում: Սրանք ուղղակի հարցեր են, որոնց պատասխանները կարող եք գտնել տեքստում: Աշակերտներին անհրաժեշտ է միայն կարդալ գրաֆիկական պատկերը կամ տեքստը և օգտագործել տրամադրված տեղեկությունը, գտնել ճիշտ պատասխանները:	**ՀԵՂԻՆԱԿԸ ԵՎ ԴՈՒ** **Սահմանում.** Պատասխանը ուղղակիորեն չկա գրաֆիկական կազմակերպիչներում և տեքստում: Դուք կարող եք օգտագործել այն տեղեկությունը, ինչ արդեն գիտեք թեմայի մասին: Օգտագործեք ձեր գիտելիքները և հեղինակային տեղեկությունները հարցին պատասխանելու համար: Պատասխանը պահանջում է ոչ միայն տեղեկությունների օգտագործում, այլ նաև մեկնաբանություն:
ՄՏԱԾԻ՛Ր ԵՎ ԳՏԻ՛Ր **Սահմանում.** Պատասխանը գրաֆիկներում և տեքստի մեջ է, բայց դուք պետք է ուշադրություն դարձնեք բազմաթիվ տվյալների, գործոնների, պետք է կապակցեք տարբեր գրաֆիկական տարրեր՝ ճիշտ պատասխանելու համար: Դուք պետք է որոշեք պատճառահետևանքային կապը: Մտածի՛ր և գտի՛ր տարբեր տարրեր: Օլիի սահմանումը	**ԴՈՒ ԻՆՔԴ (ԱՆԿԱԽ)** **Սահմանում.** Պատասխանը չկա գրաֆիկական կազմակերպիչներում և տեքստում: Դուք կարող եք պատասխանել ձեզ արդեն հայտնի թեմայի մասին եղած տեղեկությունների օգնությամբ կամ ձեր փորձի հիման վրա: Գրաֆիկները և տեքստը, որպես կանոն, կօգնեն ձեզ կոնկրետ և հստակ պատասխանել հարցին:

«Անմիջապես տեքստի մեջ» ցածր մակարդակի հարցերի տեսակը ծառայում է էքսպլիցիտիվ (փաստացի) տեղեկության որոնմանը, իսկ բարձր մակարդակի հարցերի տեսակները ծառայում են իմպլիցիտիվ (այսինքն՝ թափանցմանն ու գիտակցմանը միտված) տեղեկությունների որոնմանը: Իմպլիցիտիվ հարցերն ապահովում են տեքստի մեջ տրված տեղեկությունների ըմբռնում, հերոսների բնույթների որոշում, խնդիրների բացահայտում, գնահատում և այլ գործոններ: **«Մտածի՛ր և գտի՛ր», «Հեղինակը և դու», «Դու ինքդ»** իմպլիցիտիվ ակտիվություններ են:

PRES ԲԱՆԱՁԵՎ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ

PRES – բանաձևը (դիրքորոշում – պատճառ կամ բացատրություն – սահմանում կամ օրինակ – ամփոփում) օգտագործվում է ուսումնասիրված նյութն ամրապնդելու, գիտելիքները համակարգելու, խմբային քննարկումներ կազմակերպելու ժամանակ:

Այս ինտերակտիվ մեթոդն ուսումնական նյութի իմացությունը վերահսկելու արդյունավետ միջոց է: Դրա հեղինակը հարավաֆրիկացի իրավունքի պրոֆեսոր Դեյվիդ Մակ-Քոիդ-Մեյսոնն է:

Այս բանաձևի օգտագործումը կօգնի աշակերտներին կազմակերպել իրենց բանավոր խոսքը, քանի որ դա խոսքի կազմակերպման ամենապարզ միջոցն է, որը շատ կօգնի մեր աշակերտներին ելույթների ժամանակ և գրելու գործընթացում:

Դրա բաղադրիչները մեզ հնարավորություն են տալիս մասերի բաժանել և մշակել կրթական խնդիրը, ամրապնդել անցած թեմաները: Ի տարբերություն ստուգողական թեստի ձևի, որում հաճախ տրվում են պատահական, ինտուիտիվ պատասխաններ, այս բանաձևն ավելի հստակ է բացահայտում աշակերտների գիտելիքների բացերը:

Այս տեխնիկան կարող է հիանալի գործիք լինել քննարկում անցկացնելու համար: Այն հնարավորություն է տալիս հակիրճ և ողջամտորեն անել համապատասխան եզրակացություն, ինչն առաջացնում է աշակերտների հետաքրքրություն և նրանց ներգրավում քննարկմանը:

PRES բանաձևի կառուցվածքը ներառում է 4 կարևոր բաղադրիչ, որոնք այս հապավման ծածկագրումն են։ Դա տեքստի կառուցման անհրաժեշտ տարր է։

P – դիրքորոշում. անհրաժեշտ է արտահայտել սեփական կարծիքը տվյալ խնդրի վերաբերյալ։ Դրա համար կարող են օգտագործվել հետևյալ ձևակերպումները՝ «Ես հավատում եմ, որ...», «Իմ կարծիքով, այս խնդիրն արժանի է / արժանի չէ ուշադրության», «Համաձայն եմ...», «Ես կարծում եմ, որ...»)։

R – հիմնավորում (ոչ միայն բացատրում է դիրքորոշումը, այլև հիմնավորում է իր սեփականը). այստեղ պետք է ներկայացնեն կարծիքը հաստատող բոլոր հնարավոր փաստարկները։ Պատասխանը պետք է լինի փաստարկված։ Նրա մասին պետք է խոսվի ուսումնասիրության թեմայից՝ օգտագործելով լուսաբանված հասկացությունները։ Այս բլոկի հիմնական հարցն է, թե ինչու եք այդպես կարծում։ Եվ դա նշանակում է, որ այն պետք է սկսել բառերով՝ «Որովհետև...», «Քանի որ...» կամ «Այն բանից հետո ...»։

E – օրինակ (իր դիրքորոշման էությունը բացատրելիս օգտագործում է կոնկրետ օրինակներ) – իրենց բառերի ըմբռնման հստակության և հաստատման համար անհրաժեշտ է փաստեր մեջբերել։ Այս կետը ցույց է տալիս աշակերտների ունակությունը որոշել իրենց դիրքորոշման ճիշտ լինելը պրակտիկայում։ Կարող են օգտագործել ինչպես սեփական փորձը, այնպես էլ տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներ կամ սոցիալական հետազոտությունների արդյունքներ։ Գլխավորը համոզիչ լինելն է։ Այս փուլում օգտագործում են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Օրինակ...», «Ես կարող եմ դա ապացուցել օրինակով...»։ «Սա հաստատելու համար կարող եմ ասել, որ...»։

S – արդյունք-ամփոփում (եզրակացություն) – այս բլոկը վերջնականն է։ Այն պարունակում է եզրակացություններ, որոնք կհաստատեն նշված դիրքորոշումը։ Դրանում նախադասությունների սկիզբը կարող է լինել. «Այս ճանապարհով ...», «Այնպես որ...», «Ուստի...», «Ելնելով վերը նշվածից՝ եզրակացրի, որ ...», «Սրանից ելնելով ես եզրակացնում եմ, որ...»)։

PRES-ին մենք կարող ենք համապատասխանեցնել հետևյալ հարցերը. ի՞նչ։ (P – դիրքորոշում), ինչո՞ւ (R – հիմնավորում, պատճառ), ինչպե՞ս (E – օրինակ – սահմանում) և What If, ինչ կլինի, եթե ... (ամփոփում / առաջարկ/արդյունք)։ Այս տեխնիկայի արժեքավորությունն այն է, որ այն հնարավորություն է ընձեռում աշակերտներին հակիրճ և լիարժեք արտահայտել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ։

5. ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԴԱՍԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵՋ

Դասարանում հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտ լինելու դեպքում ուսուցչի հիմնական խնդիրը դասապրոցեսում բոլոր աշակերտների հավասար ներգրավվածության ապահովումը և յուրաքանչյուր աշակերտի համար նախանշված նպատակին համապատասխան գիտելիքի փոխանցումն է: Ուսուցիչը պետք է կարողանա դա անել՝ չնայած նրան, որ նա տարբեր աշակերտների հետ աշխատում է տարբեր ռազմավարություններով և տարբեր պլանով:

Օրինակ, թույլատրելի է, որ ուսուցչի նպատակը լինի առաջին դասարանցիների համար գրատախտակից պարզ նախադասություններ արտագրելու ունակության զարգացումը, իսկ նրանց դասարանցի հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի համար նախանշված նպատակը լինի գրելուն նախորդող պատկերներ նկարելու կարողության զարգացումը: Անթույլատրելի է, որ ուսուցիչը դասարանի աշակերտների մեծ մասի համար պլանավորի նպատակին համապատասխան ակտիվություն՝ գրատախտակի վրա գրել նախադասություններ, աշակերտները դրանք արտագրեն տետրի մեջ, իսկ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտն այս ժամանակ անգործ նստի և ներգրավված չլինի որևե տեսակի գրավոր ակտիվության մեջ: Ճիշտ կլինի, եթե զուգահեռաբար հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին հանձնարարի երկրաչափական պատկերներ գունավորել կամ արտանկարել: Ավելին, ուսուցիչը կարող է մնալ նրա կողքին, մինչև մյուս աշակերտները գրում են, և հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին խրախուսի առաջադրանքի կատարման ընթացքում: Ուսուցիչը պետք է փորձի, որ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի համար ընտրված ակտիվությունները դասի համատեքստից և դասի թեմայից դուրս մնացած չլինեն, չնայած նրան, որ հնարավոր է մյուս աշակերտների նպատակներից բոլորովին տարբեր նպատակի ծառայեն: Կարևոր է, որ ուսուցիչը յուրաքանչյուր ակտիվությունը սահմանի հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հնարավորությունների և նախանշված նպատակների նախատեսմամբ և չմոռանա գլխավոր սկզբունքը՝ անկախ տարբեր նպատակներից, նա պետք է ապահովի յուրաքանչյուր աշակերտի հավասար ներգրավվածություն դասապրոցեսի և ակտիվությունների մեջ:

Իդեալական կլինի, եթե ուսուցիչը կարողանա նախատեսել հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հնարավորությունները և նպատակը և իր դասի գործընթացն այնպես պլանավորի, որ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը ճիշտ նույնպիսի կրթական ակտիվությունների մեջ լինի ներգրավված և այն տեղությամբ, ինչպես իր մյուս համադասարանցիները: Օրինակ, եթե ուսուցչի մեկ կոնկրետ օրվա դասացուցակը նախատեսում է աշակերտների բանավոր հարցում, ուսուցիչը բանավոր հարցման գործընթացում հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին ևս պետք է ներգրավի (միայն թե համապատասխանաբար ընտրված մեթոդով): Եթե մնացած դասապրոցեսը տրամադրվում է գրավոր ակտիվության կամ վարժության կատարման, հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը ևս պետք է կատարի նման ակտիվություն, սակայն, կարելի է, երբ ուրիշները գրում են, նա նկարի, ինչպես դա նախորդ օրինակում էր սահմանված:

Ելնելով գոյություն ունեցող իրականությունից՝ միշտ չէ, որ հնարավոր է լինում դասի գործընթացն այսպես պլանավորել, և հաճախ արդարացված է հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի բանավոր հարցումը հենց այն ժամանակ իրականացվի, երբ նրա համադասարանցիները գրում են: Այսպես ուսուցիչն ավելի է կենտրոնանում այս աշակերտի վրա: Կամ ընդհակառակը, արդարացված է, որ աշակերտը նկարի այն ժամանակ, երբ ուրիշների բանավոր հարցումն է ընթանում:

Այս դեպքում կարևոր է, որ ուսուցչի կողմից նախապես ընտրված ռազմավարությունը նախապես

լավ մտածված լինի և նախատեսի աշակերտի հնարավորությունները, դասարանի կառուցվածքն ու դասի գործընթացը: Գլխավորն այն է, որ ուսուցիչը թույլ չտա, որ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը դասի ժամանակ անգործ նստի այն ժամանակ, երբ իր համադասարանցիները ակտիվորեն մասնակցում են դասին:

Որոշ դեպքերում անհրաժեշտ է դառնում աշակերտին դասի ժամանակ դասարանի ակտիվություններից բոլորովին տարբեր ակտիվություններ առաջարկել: Գլխավորն այն է, որ յուրաքանչյուր դեպքում աշակերտի համար ընտրվեն հետաքրքրիր ակտիվություններ և այլ աշակերտների կողմից ավելորդ հետաքրքրության պատճառով չհանգեցնեն դասապրոցեսի խափանման: Այսպիսի ակտիվությունների կիրառման ժամանակ որոշիչն այն է, որ այս ակտիվությունները աշակերտին առաջադրանքի տեսքով տրվեն ուսուցչի կողմից և դասի ընթացքում վերահսկվեն:

Անհատական ուսումնական պլան

Աշակերտի համար անհատական ուսումնական պլան ստեղծելու անհրաժեշտության հարցը ծագում է, եթե աշակերտը. ունի հատուկ կրթական կարիք և պարբերաբար տարբեր մոտեցումների կարիք ունի ուսուցման և գնահատման ժամանակ: Հատուկ կրթության կարիք չունի, սակայն ինչ –ինչ պատճառներով (երկարատև հիվանդություն), որոշ ժամանակ պահանջում է հատուկ ուսումնական ծրագիր:

Անհատական ուսումնական պլանը կրթական և դպրոցական գործունեության մեջ կրթական հատուկ կարիքներ ունեցող աշակերտին ներգրավելու հնարավորություն է: Անհատական ուսումնական պլանը հնարավորություն է տալիս աշակերտակենտրոն պլան կազմել այն ժամանակահատվածի համար, որն աշակերտը անցկացնում է դպրոցական տարածքում կամ տրամադրում է ուսումնական գործունեությանը դպրոցում կամ տանը: Անհատականացված ուսումնական պլանը ուղեցույց փաստաթուղթ է, որպեսզի աշակերտը մեխանիկորեն չհաճախի դասերին, ինչը հաճախ տեղի էր ունենում վերջին տարիներին:

Հարկ է նշել, որ անհատական ուսումնական պլանը նպաստում է աշակերտի ներգրավվածությանը ոչ միայն դասարանում և ակադեմիական գործունեության մեջ, այլև ներառում է բոլոր ոչ ակադեմիական գործունեությունները, որն իրականացնում է աշակերտը դպրոցում, և ինչը ոչ պակաս կարևոր է:

Անհատական ուսումնական պլանը փաստաթուղթ է, որում սահմանված են ուսուցման անհատական նպատակները՝ ելնելով աշակերտի անհատական կարիքներից, նրա ուժեղ և թույլ կողմերից: Անհատական ուսումնական պլանում սահմանված ուսումնական նպատակները կարող են տարբերվել աշակերտի՝ մակարդակին համապատասխան ուսումնական ծրագրի նպատակներից: Ըստ այդմ, անհատական ծրագրով սահմանված ուսումնական նպատակների իրականացումը ենթադրում է ուսուցման կոնկրետ ռազմավարությունների և գործընթացի սահմանում:

Կարևոր է, որ այս գործընթացը տեղի չունենա հանրակրթության գործընթացից առանձին և այլ աշակերտներից մեկուսացված (միայն ռեսուրս-սենյակում): Ընդհակառակը, անհատական ծրագիրը պետք է ավելի նպաստի աշակերտի սոցիալականացմանը և դասարանին ինտեգրմանը:

Անհատական ուսումնական պլանն օգնում է ուսուցչին վերահսկել աշակերտի հաջողությունները և հանդիսանում է տարբեր անհատների միջև աշակերտի մասին տեղեկատվության փոխանակման միջոց: Անհատական ուսումնական պլանը պարբերաբար թարմացվում է նախապես համաձայնեցված ժամկետներում և նկարագրում է այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են աշակերտի արդյունավետ կրթություն ապահովելու համար: Ուսումնական պլանը կթարմացվի՝ հիմնվելով աշակերտի գնահատման արդյունքների և ուսումնական ձեռքբերումների վրա:

Անհատական ուսումնական պլանն արտացոլում է աշակերտի, ուսուցիչների, դպրոցի

տնօրինության, ծնողի և աշակերտի համաձայնությունը հատուկ ուսումնական ծրագրի և ծառայության վերաբերյալ, որը հնարավոր է ապահովել տվյալ դպրոցի շրջանակներում և առկա ռեսուրսների նախատեսմամբ:

Հետևաբար, անհատական ուսումնական պլանն ուղեցույց է, որն արտացոլում և հիմնավորում է որոշակի աշակերտի համար անհրաժեշտ աջակցությունը, որը պետք է համաձայնեցված լինի, և որին պետք է հետևեն նրա հետ աշխատող բոլոր ուսուցիչները կամ մասնագետները: Դա ոչ թե կոշտ փաստաթուղթ է, այլ՝ ավելի շուտ այն աշխատանքային փաստաթուղթ է, որը պահանջում է կանոնավոր փոփոխություններ: Այն պետք է վերանայվի/ վերագնահատվի որոշակի ժամանակահատվածում՝ ըստ աշակերտի հնարավորությունների և ձեռքբերումների, և սահմանի անհրաժեշտ փոփոխությունները:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ

Աշակերտի գիտելիքի հրատապ գոտու նկարագրություն

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿ/ՆՊԱՏԱԿՆԵՐ		ԱՇԱԿԵՐՏԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ
Կայուն պատկերացումներ	**Ուսանման արդյունքները**	
Հասկացություն. Աշխարհագրական թաղանթ		Աշակերտը տարբերում է քարոլորտի, մթնոլորտի, ջրոլորտի, կենսոլորտի բաղադրիչ մասերը:
• Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: • Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա:	Աշակերտը ծանոթանում է տարբեր երկրների ռելիեֆին, մթնոլորտին, ջրոլորտին, կենսոլորտին և նոոոլորտին:	
Հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը		Աշակերտը գիտի, որ տարբեր երկրներում տարբեր է բնակչության թվաքանակը և ազգային կազմը:
• Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: • Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: • Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա:	Աշակերտը գիտի բնակչության գործունեության մասին: Տարբերում է տարբեր երկրների բնակչության ցուցանիշները:	
Հասկացություն. Կայուն զարգացում		Աշակերտը հոգ է տանում շրջակա միջավայրի մասին և պաշտպանում է այն: Գիտի, որ իր արարքը կարող է բնապահպանական խնդիրներ հարուցել:
• Տեղական գործողություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: • Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար	Աշակերտը գիտի, որ անհրաժեշտ է պահպանել աշխարհագրական միջավայրը:	

Երկարաժամկետ նպատակներ

ԱՇԱԿԵՐՏԸ ՊԵՏՔ Է ԳԻՏԱԿՑԻ.	ԱՇԱԿԵՐՏԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ
Հասկացություն. Աշխարհագրական թաղանթ	
Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա:	Աշակերտը տարբերում է բնական և մարդածին լանդշաֆտները:
Հասկացություն.Բնակչությունը և տնտեսությունը	
Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն բնագավառը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման:	Աշակերտը տարբերում է տարբեր երկրների բնակչության տնտեսության բնագավառները: Օրինակ, գիտի, որ գյուղում մարդիկ, հիմնականում, զբաղված են գյուղատնտեսության մեջ:
Հասկացություն. Կայուն զարգացում	
Տեղական գործողություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ:	Աշակերտը գիտակցում է, թե ինչու և ինչպես պետք է պաշտպանի շրջակա միջավայրը, որպեսզի երջանիկ ապրի:

Համալիր առաջադրանք, կարճաժամկետ նպատակներ, ակտիվություններ

ԹԵՄԱ/ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. Համալիր առաջադրանքի իրականացման ժամանակահատվածը.		
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐ	ՀԱՐՑԸ/ՀԱՐՑԵՐԸ	ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
1. Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: 2. Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա:	**Տուպունգատոյի սառցադաշտը: Երկրի ամենափխրուն գոտիներից մեկը** **Ենթահարցեր.** լեռնային սառցադաշտեր, լեռնային սառցադաշտերի հալչելը, մարդածին գործունեություն, ջերմոցային գազեր, սառցադաշտաբանություն, օդերևութաբանություն:	Պատկերացրո՛ւ, որ դու «Լեռնային սառցադաշտերի պահապան» կազմակերպության անդամ ես և քո նպատակն է, որ հասարակությունը հասկանա սառցադաշտերի հալման գործընթացի դերի հետ կապված քո դերի կարևորությունը: Քո խնդիրն է ուսումնասիրել Տուպունգատո գագաթը՝ Երկրի փխրուն գոտիներից մեկը, պարզել, թե ինչպես են փոխվում տեղի շրջակա միջավայրի պայմանները, և ինչ փոխադարձ կապ կա լեռնային սառցադաշտերի հալման և մարդու գործունեության միջև: Հանրային իրազեկվածությունը բարձրացնելու համար ստեղծի՛ր բլոգ: **Բլոգում հստակ ցո՛ւյց տուր.** • Ինչպես է արտացոլվում մարդածին գործոնի հետևանքով առաջացած գլոբալ կլիմայափոխությունը Տուպունգատո լեռան և մեր մոլորակի այլ սառցադաշտերի վրա: **(Աշխարհագրական թաղանթ, կ.պ. 1)** • Ինչպես կփոխվի տեղի բնակչության առօրյան ու կյանքի որակը Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալվելու հետևանքով, և ինչպես է պետությունը հաղթահարում այս մարտահրավերները: **(Բնակչությունը և տնտեսությունը, կ.պ. 1, 2)** • Ինչու է կարևոր սառցադաշտերի, այդ թվում Տուպունգատո լեռան սառցադաշտի հալման դադարեցումը, և ինչպես է այս երևույթն արտացոլվում լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման վրա: **(Կայուն զարգացում, կ.պ. 1,2)** **Կարճաժամկետ նպատակներ.** 1. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել սառցադաշտը՝ հիմվելով ֆիզիկական հատկանիշների վրա: 2. Աշակերտը պետք է կարողանա գիտակցել, թե ինչ նշանակություն ունի սառցադաշտերի հալման գործընթացի դադարեցումը:

Աշակերտի առաջընթացի գնահատումը

Ի՞ՆՉՆ ԵՄ ԳՆԱՀԱՏՈՒՄ		
ՈՒԴԱԿ ՏԱՔՍՈՆՈՄԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ	ԱՇԱԿԵՐՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԶԱՐԳԱՑՆՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ
• Վերացական • Հարաբերական • Բազմակառուցվածքային • Ունիկառուցվածքային • Նախակառուցվածքային	Աշակերտը կարող է նկարագրել սառցադաշտը արտաքին բնութագրերի համաձայն: Կարող է, նկարագրել և խոսել սառցադաշտերի հալման գործընթացի, պատճառների և վտանգների մասին: Սակայն, չի կարող դրանք իրար հետ կապակցել:	Աշակերտին ցույց եմ տալիս սառցադաշտի հալման և դրա հետևանքների մասին տեսանյութ և խնդրում եմ նկարել ֆիլմում պատմված պատմությունը՝ ըստ ներկայացված սյուժեների: Այնուհետև խնդրում եմ սլաքներով իրար հետ կապակցել սառցադաշտերի հալչելը հարուցող պատճառներն ու վտանգները:

6. ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱՆԵՐ

Ինչպես աշակերտի, համապատասխանաբար, այնպես էլ Ուսուցչի գրքում մենք առաջարկում ենք գրեթե յուրաքանչյուր հարցի համալիր առաջադրանք, սակայն, ուսուցիչն ինքն է որոշում դրանցից որն օգտագործել՝ ելնելով աշակերտների կարիքներից և հետաքրքրություններից: Առաջարկում են նաև հանձնարարական, թե ինչպես և ինչ հաջորդականությամբ պետք է մշակվի համալիր առաջադրանքը: Թեմատիկ մատրիցաներում կոնկրետ համալիր առաջադրանքն արդեն իսկ ներկայացված է՝ ըստ մշակման փուլերի:

Համալիր առաջադրանքների մշակման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ).

Փուլ 1. Ծանոթանալ համալիր առաջադրանքի էությանը (ի՞նչ հարցի է վերաբերում, ի՞նչ ձևով կկատարվի համալիր առաջադրանքի շնորհանդեսը):

Հանգուցային հարց. Ի՞նչ նկատի ունի ուսումնասիրվելիք հարցը: Ի՞նչ ստեղծագործական արդյունքի միջոցով պետք է հավաստեմ, թե ինչ եմ սովորել այս հարցի վերաբերյալ:

1. Կծանոթացնեմ համալիր առաջադրանքի պայմանը: Նրանց ուշադրությունը կկենտրոնացնեմ այն բանի վրա, թե կոնկրետ ինչ արդյունք պետք է ստեղծվի համալիր առաջադրանքի վրա աշխատելու արդյունքում:
2. Կբացատրեմ, թե ինչ պետք է ներկայացնեն իրենց պատրաստած պաստառի մեջ, ուշադրությունը կկենտրոնացնեմ նրա վրա, որ դրանք գնահատման չափանիշներն են:
3. Կծանոթացնեմ, թե ինչ է նշանակում նկարագրել առաջադրանքի վրա աշխատելիս անցած աշխարհագրական հետազոտության փուլերը և կբացատրեմ, թե ինչ է նշանակում աշխարհագրական հետազոտությունը:
4. Կխնդրեմ նրանց՝ մտածել առաջադրանքի պայմաններից և չափանիշներից ելնելով, թե նրանց մոտ հարցեր առաջացել են, կամ եթե նրանց համար անորոշ բան կա, մեկ անգամ ևս նրանց ուղղություն կտամ:

Փուլ 2. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա: Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումների մշակում:

Հանգուցային հարցեր. Ինչպե՞ս կատարեմ տրված առաջադրանքը:

Ակտիվություն 1. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ՝ տեսաֆիլմ դիտել և քննարկել և այլն:

Ակտիվություն 2. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ՝ տեքստի կամ թեմատիկ քարտեզների վերլուծություն, պատճառահետևանքային կապերի որոշում և այլն:

Ակտիվություն 3. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ, համալիր առաջադրանքի մեջ տրված որոշակի ապրանքի ստեղծում, օրինակ՝ պաստառի ստեղծում:

Ակտիվություն 4. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ՝ Համալիր առաջադրանքների շնորհանդես կամ ներկայացում:

Հանգուցային հարց. Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ համալիր առաջադրանքի վրա աշխատելու արդյունքն այնպես, որ հետաքրքիր և հասկանալի լինի ունկնդիրների համար:

Աշակերտները կներկայացնեն պատրաստված աշխատանքը, ինչպես նաև մեզ հետ կկիսվեն հետազոտության այն փուլերով, որոնք նրանք անցել են համալիր առաջադրանք կատարելիս, կասեն, թե ինչ եզրակացություններ են արել, ինչ խնդիրների և դժվարությունների են հանդիպել, ինչը կնախատեսեն ապագա համալիր առաջադրանքների վրա աշխատելիս:

Այն դեպքում, երբ ուսուցիչը երկրորդ թեմայի շրջանակներում որոշում է գլոբալացման գործընթացի հետ կապված ցանկացած այլ համալիր առաջադրանք իրականացնել, նա կարող է լրացուցիչ ծանոթանալ ընթերցանության նյութին (էջ 74):

I ԳԼՈՒԽ

ԴԱՍԱՐԱՆ.	XI		
ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ.	ԿԼԻՄԱՅԻ ԳԼՈԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ		
ՀԻՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԸ.	ԴԱՍԱԳԻՐՔ		
Նպատակային հասկացություն	**Հարց 1** Սառցադաշտերի հալչելը. Տուպունգատոյի սառցադաշտը՝ Երկրի ամենափխրուն գոտիներից մեկը։	**Հարց 2** Փախստականներ, ներքին տեղահանվածներ. Տեյտիոտայի գործը։	**Հարց 3** Կանաչ էկոնոմիկա. Հարավային Կորեա՝ «Ասիական վագրի» կանաչ էկոնոմիկան։
Աշխարհագրական թաղանթ	**Ենթահարց.** Տուպունգատոյի լեռնային սառցադաշտի հալվելը, Մարդածին գործունեություն, Ջերմոցային գազեր։ **Ենթահասկացություն.** աշխարհագրական թաղանթի օրինաչափությունները,աշ խարհագրական թաղանթի ամբողջականությունը։	**Ենթահարց.** Կիրիբատիի կլիմայի փոփոխությունը, Ջերմոցային գազեր, Ջրհեղեղ։ **Ենթահասկացություն.** Նոոոլորտ։ Բնական վտանգներ՝ բնական աղետներ։	**Ենթահարց.** Հարավային Կորեայի աշխարհագրական դրությունը, Հարավային Կորեայի բնական պայմանները։ **Ենթահասկացութուն.** նոոլորոտ, մարդածին լանդշաֆտներ։
Բնակչությունը և տնտեսությունը	**Ենթահարց.** Աշխարհագրական միջավայր, Բնակչության կյանքի մակարդակը և բնակչության առօրյա կյանքը։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, բնակչության կյանքի մակարդակը, բնակչության կառուցվածքը։	**Ենթահարց.** Էկոմիգրացիա, Կլիմայական փախստականներ, Միգրացիայի մասին օրենք։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, բնակչության կյանքի մակարդակը։	**Ենթահարց.** Հարավայի Կորեայի տնտեսությունը, Շրջանաձև տնտեսություն, Կանաչ աշխատատեղեր, Պետական ռազմավարությունը։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, ծառայության ճյուղեր (չորրորդային և հինգերորդային ճյուղեր)։
Կայուն զարգացում	**Ենթահարց.** Տուպունգատոյի լեռնային սառցադաշտերի հալչելը, բնական և մարդածին վտանգներ։ **Ենթահասկացություն.** շրջակա միջավայր, ռացիոնալ բնօգտագործում։	**Ենթահարց.** Տեյտիոտայի ընտանիքի անվտանգությունը, Կլիմայական փախստական, մարդկանց իրավունքներ։ **Ենթահասկացություն.** Հասարակություն. բնակչության անվտանգություն և բարեկեցություն։	**Ենթահարց.** Գլոբալ կանաչ էկոնոմիկայի ինդեքսը, Բնապահպանական արդյունավետության ինդեքս։ **Ենթահասկացություն.** Հասարակություն. բնակչության անվտանգություն և բարեկեցություն։
Համալիր առաջադրանք	**Համալիր առաջադրանք 1** Տուպունգատոյի սառցադաշտը՝ Երկրի ամենափխրուն գոտիներից մեկը	**Համալիր առաջադրանք 2** Տեյտիոտայի գործը	**Համալիր առաջադրանք 3** Հետազոտության զեկույցի ստեղծում Հարավային Կորեա պետության զարգացման գործընթացի մասին

Ռեսուրսներ համալիր առաջադրանքը կատարելու համար	Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 1. Սառցադաշտերի հալվելը	Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 4. Փախստականներ, ներքին տեղահանվածներ	Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 5. Կանաչ տնտեսություն

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ.

- Աշխարհագրական դիրքը և բնական պայմանները ազդում են գլոբալացման գործընթացում երկրի զարգացման վրա։
- Հակամարտությունները կապված են աշխարհագրական դիրքի և ռեսուրսների հետ, ինչը հանգեցնում է նոռոլորտի փոփոխության։
- Միջպետական խաղաղ համակեցության մեջ կարևոր դեր է կատարում բնական միջավայրը։
- Մարդածին գործոններն ազդում են բնական գործընթացների վրա։
- Համաշխարհային քաղաքական իրադարձությունները որոշում են բնակչության սոցիալ-մշակութային գլոբալացման գործընթացը։
- Մշակութային գլոբալացումն արտացոլվում է բնակչության կյանքի մակարդակի և որակի վրա։
- Մշակույթի մեջ գլոբալացումը հանգեցնում է գլոբալ հասարակության ձևավորման։
- Հակամարտության մեջ ներգրավված բնակչության կյանքը փոխվում է, ինչն ազդում է նրանց դինամիկայի և ամենօրյա կյանքի վրա։
- Բնական պայմաններն ազդում են մարդու ամենօրյա կյանքի և անվտանգության վրա։
- Պետական քաղաքականության կարևոր խնդիրներից է բնակչության անվտանգության պաշտպանությունը։
- Երկրի բնական պայմանների և բնակչության փոխազդեցությունը կախված է բնակչության գիտակցության մակարդակից։
- Զանգվածային լրատվամիջոցները կարևոր դեր են կատարում մշակութային գլոբալացման գործընթացում։
- Հակամարտությունները ստեղծում են բնապահպանական խնդիրներ, որոնք ազդում են բնակչության առողջության և կյանքի որակի, ինչպես նաև շրջակա միջավայրի կայունության վրա։
- Գլոբալ աշխարհաքաղաքական խնդիրների լուծման գործում կարևոր է միջազգային համագործակցությունը։

Համալիր առաջադրանք 1

Թեմա. Կլիմայի գլոբալ փոփոխություն
Հարցը. Տուպունգատոյի սառցադաշտը՝ Երկրի ամենափխրուն գոտիներից մեկը։

Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ։ **Ենթահասկացություն.** աշխարհագրական թաղանթի օրինաչափությունները, աշխարհագրական թաղանթի ամբողջականությունը։ **Ենթահարց.** Տուպունգատոյի լեռնային սառցադաշտի հալվելը։ Մարդածին գործունեություն, Ջերմոցային գազեր։

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, բնակչության կյանքի մակարդակը, բնակչության կառուցվածքը։ **Ենթահարց.** Աշխարհագրական միջավայր, Բնակչության կյանքի մակարդակը և բնակչության առօրյա կյանքը։

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում. **Ենթահասկացություն.** շրջակա միջավայր, ռացիոնալ բնօգտագործում։ **Ենթահարց.** Տուպունգատոյի լեռնային սառցադաշտերի հալչելը, Բնական և մարդածին վտանգներ։

Հանգուցային հարց. Հասարակությանը բլոգի միջոցով ինչպե՞ս ծանոթացնեմ, թե ինչպես պետք է պաշտպանենք Տուպունգատոյի սառցադաշտը (լեռնային սառցադաշտերը) կլիմայի փոփոխության բացասական ներգործությունից։

Համալիր առաջադրանքի պայմանը



Կլիմայի ներկայիս փոփոխությունը սկսվելու հետ մեկտեղ արագացել է նաև սառցադաշտերի հալման գործընթացը, և այս եզակի աշխարհագրական օբյեկտներին, դրանց անկրկնելի էկոհամակարգին մեծ վտանգ է սպառնում: Ըստ գիտնականների՝ հենց սառցադաշտն է կլիմայի փոփոխության լավագույն չափանիշը:

ԱՄՆ Ձյան և սառույցի ազգային կենտրոնի տվյալներով զգալիորեն նվազել են ծանծաղուտային և լեռնային սառցադաշտերի տարածքները: Նահանջած սառցադաշտերը թողնում են հետքեր, որոնք «մեզ պատմում են դրանց անցյալի մասին»:

Հատուկ նշանակություն է շնորհվում լեռնային տարածքների գիտական ուսումնասիրությանը, կարևոր է նրանց՝ բնության պահպանության հետ կապված դժվարությունների վերհանումը, բնակչության ապրելակերպի և ավանդույթների ուսումնասիրությունը, հանգստի հնարավորությունների և ռեսուրսների պաշարի սահմանումը, կայուն տարածքային պլանավորման և տարածության կազմակերպումը:

Պատկերացրո՛ւ, որ դու «Լեռնային սառցադաշտերի պահապան» կազմակերպության անդամ ես և քո նպատակն է, որ հասարակությունը հասկանա սառցադաշտերի հալման գործընթացի դերի հետ կապված քո դերի կարևորությունը: Քո խնդիրն է ուսումնասիրել Տուպունգատո գագաթը՝ Երկրի փխրուն գոտիներից մեկը, պարզել, թե ինչպես են փոխվում տեղի շրջակա միջավայրի պայմանները, և ինչ փոխադարձ կապ կա լեռնային սառցադաշտերի հալման և մարդու գործունեության միջև:

Հանրային իրազեկվածությունը բարձրացնելու համար ստեղծի՛ր բլոգ:

Բլոգում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչպես է արտացոլվում մարդածին գործոնի հետևանքով առաջացած գլոբալ կլիմայափոխությունը Տուպունգատո լեռան և մեր մոլորակի այլ սառցադաշտերի վրա: **(Աշխարհագրական թաղանթ, կ.պ. 1)**
- Ինչպես կփոխվի տեղի բնակչության առօրյան ու կյանքի որակը Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալվելու հետևանքով, և ինչպես է պետությունը հաղթահարում այս մարտահրավերները: **(Բնակչությունը և տնտեսությունը, կ.պ. 1, 2)**
- Ինչու է կարևոր սառցադաշտերի, այդ թվում Տուպունգատո լեռան սառցադաշտի հալման դադարեցումը, և ինչպես է այս երևույթն արտացոլվում լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման վրա: **(Կայուն զարգացում, կ.պ. 1,2)**

Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.	**Գնահատման չափանիշ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
Աշխարհագրական թաղանթ 1. Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: 2. Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա: **Բնակչությունը և տնտեսությունը** 1. Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: 2. Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: 3. Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ- տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա: **Կայուն զարգացում** 1. Տեղական գործունեություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: 2. Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար:	**Աշխարհագրական թաղանթ** • Կոնկրետ օրինակների վրա հիմնվելով՝ վերլուծել աշխարհագրական թաղանթի մեջ ընդգրկված ոլորտների փոխկախվածությունը և ամբողջականությունը: **(կ.պ.1)** • Ըմբռնել մարդու ակտիվության ազդեցությունը Տուպունգատո սառցադաշտի խնդիրների վրա: **(կ.պ.2)** **Բնակչությունը և տնտեսությունը** • Գնահատել սառցադաշտի հալման հետևանքներով պայմանավորված փոփոխությունների ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա: **(կ.պ. 1, 2)** • Վերլուծել Տուպունգատո սառցադաշտի հալվելը դադարեցնելու համար պետության կողմից անցկացված միջոցառումների արդյունքները: **(կ.պ. 3)** **Կայուն զարգացում** • Գիտակցել Տուպունգատո սառցադաշտի հալումը դադարեցնելու նշանակությունը լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման և ապագա սերունդների բարեկեցության համար: **(կ.պ. 1, 2)**	• Ինչպես է արտացոլվում մարդածին գործոնի հետևանքով առաջացած գլոբալ կլիմայափոխությունը Տուպունգատո լեռան և մեր մոլորակի այլ սառցադաշտերի վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ. 1)** • Ինչպես կփոխվի տեղի բնակչության առօրյան ու կյանքի որակը Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալվելու հետևանքով, և ինչպես է պետությունը հաղթահարում այս մարտահրավերները: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1, 2)** • Ինչու է կարևոր սառցադաշտերի, այդ թվում Տուպունգատո լեռան սառցադաշտի հալման դադարեցումը, և ինչպես է այս երևույթն արտացոլվում լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման վրա: **(Կայուն զարգացում կ.պ. 1,2)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում
Ռեսուրսներ/քննարկվելիք դեպքեր (քեյսեր).

Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան
Պարագրաֆ 1.Սառցադաշտերի հալվելը

1. Ինչպես ստեղծեմ բլոգ. http://www.ict.tpdc.ge/video/48?ch=431
2. Ծրագիր.earth.google.com
3. Արկտիկայի զեկուցագիր. https://www.youtube.com/watch?v=_WbWjLUTvZM
4. Անտարկտիդայի սառույցի զանգվածի կորուստը 2002-2020 թվականներին. https://www.youtube.com/watch?v=AmSovbt5Bho
5. https://www.ge.undp.org/content/georgia/ka/home/post-2015.html. Կայուն զարգացման նպատակները
6. Տեսանյութ. «Սառցադաշտեր». https://www.youtube.com/watch?v=WJgpDyP9ewQ
7. Սառցադաշտերի հալվելու հետ մեկտեղ հայտնվում են կորած լեռնագնացների աճյուններ և հնագույն վիրուսներ. https://1tv.ge/news/myinvarebis-dnobastan-ertad-chndeba-dakargul-aplinistta-gvamebi-da-udzvelesi-virusebi/
8. Հյուսիսայի ժողովուրդներ. http://mastsavlebeli.ge/?p=13628
9. Հալվելու պահակետում. https://nationalgeographic.ge/story/dnobis-sadarajoze/
10. Սվանեթիում պլանավորվում է Սառցադաշտերի ազգային պարկի ստեղծում. https://mtisambebi.ge/news/ecology/item/377-svanetshi-mybinvarebis-erovnuli-parkis-sheqmna-igegmeba
11. Սառցադաշտ. Ջրի բնական պահեստարան. https://helloblog.ge/story/myinvari

Ռեսուրս 1
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 1-ի հիման վրա).

- Ինչպե՞ս ստեղծել բլոգ:
- Ի՞նչ պետք է նկատի ունենանք բլոգ պատրաստելիս:
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն բլոգ պատրաստելիս:

Ռեսուրս 2
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 2-ի հիման վրա).

Google Earth՝ Գուգլ երկրագունդ ծրագիրը կօգնի քեզ, որ ծանոթանաս.

- Տուպունգատո սառցադաշտի աշխարհագրական դիրքին:
- Գետերին, որոնք սկիզբ են առնում դրանից:
- Սառցադաշտի տարածքում գտնվող բնակավայրերին:

Ռեսուրս 3
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 3-ի հիման վրա).

Արկտիկայի օրինակի քննարկում.
- Որտե՞ղ և ինչո՞ւ են հալվում սառցադաշտերը:
- Որո՞նք են սառցադաշտերի հալման հետևանքները:

Ռեսուրս 4
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 4-ի հիման վրա).

Անտարկտիդայի օրինակի քննարկում.
- Որտե՞ղ և ինչո՞ւ են հալվում սառցադաշտերը:
- Որո՞նք են սառցադաշտերի հալման հետևանքները:

Ռեսուրս 5
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 5-ի հիման վրա).

Կօգնի քեզ ծանոթանալ կայուն զարգացման նպատակներին.
- Ի՞նչ դեր է կատարում մարդը և պետությունը կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացում:

Ռեսուրս 6. Տեսահոլովակ
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 6-ի հիման վրա).

Այս տեսահոլովակի քննարկումը կօգնի քեզ իմանալ.
- Ինչպե՞ս են առաջանում սառցադաշտերը:
- Ինչպե՞ս են սառցադաշտերն ազդում երկրոլորտների վրա:
- Ի՞նչ ազդեցություն ունի կլիմայի գլոբալ փոփոխությունը սառցադաշտերի հալման գործընթացի վրա:

Ռեսուրս 7 և 8
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 7-ի և 8-ի հիման վրա).
- Որո՞նք են սառցադաշտերի հալման հետևանքները:
- Սառցադաշտերը հալվո՞ւմ են արդյոք լեռներում:
- Ինչպե՞ս են ապրում հյուսիսային ժողովուրդները:
- Ի՞նչ ազդեցություն կունենա լեռնային սառցադաշտերի հալման արագացումը բնակչության կյանքի վրա:

Ռեսուրս 9 և 10
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 9-ի և 10-ի հիման վրա).
- Ո՞վ և ինչպե՞ս է պաշտպանում սառցադաշտերը:
- Ինչպե՞ս և ինչո՞ւ պետք է պաշտպանենք սառցադաշտերը:

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.
Ենթահարց. Փոխադարձ կապը գլոբալ կլիմայափոփոխությունների և սառցադաշտերի հալման միջև
- Ինչո՞ւ են հալվում լեռնային սառցադաշտերը:
- Ի՞նչ ազդեցություն է գործում սառցադաշտերի հալվելը ջերմոցային գազերի կոնցենտրացիայի վրա:

Ենթահարց. Փոխադարձ կապը բնական միջավայրի և բնակչության կյանքի մակարդակի միջև
- Ինչպե՞ս են բնական միջավայրի փոփոխություններն արտացոլվում բնակչության կյանքի մակարդակի վրա:
- Պետությունն ինչպե՞ս պետք է պաշտպանի բնակչության անվտանգությունը:

Ենթահարցեր. Բնակչության իրավունքների պաշտպանությունը պայմանավորում է բնակչության անվտանգությունը և կյանքի մակարդակը:
- Ինչպե՞ս պաշտպանենք բնակչությանը լեռնային սառցադաշտերի հալման հետևանքով առաջացած բնական և մարդածին վտանգներից:

Համալիր առաջադրանք
- Քո խոսքերով ձևակերպի՛ր, թե ինչին կվերաբերի այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատես մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք: Ցանկանո՞ւմ ես փոխել համալիր առաջադրանքի արդյունքը: Ինչո՞ւ:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա
Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ
Ենթահասկացություն. աշխարհագրական թաղանթի օրինաչափությունները, աշխարհագրական թաղանթի ամբողջականությունը
Ենթահարց. Լեռնային սառցադաշտեր, Լեռնային սառցադաշտերի հալվելը, Մարդածին գործունեություն, Ջերմոցային գազեր, Սառցադաշտաբանություն, Օդերևութաբանություն
Ենթահարց. Ցամաքային տրանսպորտ

Քայլ 1.

Ինչպե՞ս է արտացոլվում մարդածին գործոնի հետևանքով առաջացած գլոբալ կլիմայափոխությունը Տուպունգատո լեռան և մեր մոլորակի այլ սառցադաշտերի վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ. 1)**

Ակտիվություն 1. Աշխատանք ինտերակտիվ քարտեզի վրա.
1. https://earth.google.com/glue/ ծրագրի միջոցով ծանոթացի՛ր Տուպունգատո լեռան սառցադաշտին և որոշի՛ր նրա.
- աշխարհագրական դիրքը,
- գետերը, որոնք սկիզբ են առնում նրանից,
- բնակավայրերը, որոնք գտնվում են սառցադաշտի տարածքում:

Ակտիվություն 2. Աշխարհագրական հետազոտություն.

Աշակերտները ծանոթանում են աշխատանքային տետրում Առաջադրանք 7-ին՝ Աշխարհագրական հետազոտություն (էջ 16), պատասխանում կից հարցերին և դրանց հիման վրա դատողություն անում, թե ինչու են հալվում սառցադաշտերը:

Ակտիվություն 3. Տեքստի վերլուծություն

Աշակերտները դասագրքում տրված Սառցադաշտերի և կլիմայի պահապաններ (էջ 11) ներդիրին ծանոթանալուց հետո դատողություն են անում, թե ինչ դեր են կատարում սառցադաշտաբանները և օդերևութաբանները կլիմայի գլոբալ փոփոխության և սառցադաշտերի ուսումնասիրման գործընթացում:

Ակտիվություն 4. Գրաֆիկական կազմակերպիչների օգտագործում
Աշակերտները աշխատանքային տետրում կատարում են Առաջադրանք 3-ը (էջ 13), լրացնում են գրաֆիկական կազմակերպիչները և պատասխանում հարցերին.
1. Ինչպե՞ս է ազդում աշխարհագրական թաղանթի ոլորտների վրա սառցոլորտի փոփոխությունը:
2. Բացատրի՛ր՝ ի՞նչ ազդեցություն կունենա Տուպունգատո լեռան սառցադաշտի հալվելը շրջակա միջավայրի վրա:

Ակտիվություն 5. Աշխարհագրական հետազոտություն.

Աշխատանքային տետրում կատարում է Առաջադրանքը 4-ը (էջ 15) և որոշում, թե ինչպես է մարդու ազդեցության հետևանքով փոխվում ջերմաստիճանը, և ի՞նչ ազդեցություն ունի այն սառցադաշտերի վրա: Ինչպե՞ս կփոխվի Տուպունգատո լեռան սառցադաշտը:

Ակտիվություն 6.Դեպքի վերլուծություն.

Աշակերտները ծանոթանում են դասագրքում տրված Դեպքի վերլուծություն 1-ին (էջ 18), պատասխանում կից հարցերին և դրանց հիման վրա բացատրում, թե ինչպես է մարդն իր գործունեությամբ ազդում սառցադաշտերի հալման գործընթացի վրա:

Լրացնում են պատճառահետևանքային գրաֆիկական կազմակերպիչը.



Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը
Ենթահասկացություն. բնակչության կյանքի մակարդակը
Ենթահարց. Աշխարհագրական միջավայր, Բնակչության կյանքի մակարդակը, Բնակչության ամենօրյա կյանքը

Քայլ 2

Ինչպես կփոխվի տեղի բնակչության առօրյան ու կյանքի որակը Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալվելու հետևանքով, և ինչպես է պետությունը հաղթահարում այս մարտահրավերները: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1, 2)**

Ակտիվություն 7. Դերային խաղ.

Աշակերտները խմբերով քննարկում են դասագրքի «Լեռնային սառցադաշտերի պահապանը» ներդիրը, Դեպքի վերլուծություն 2-ը (էջ 21) և դատողություն անում.

Ինչպե՞ս է փոխվում ջերմաստիճանը մարդու ազդեցության հետևանքով և ի՞նչ ազդեցություն է գործում սառցադաշտերի վրա:
Ինչպե՞ս կփոխվի Տուպունգատո սառցադաշտը:
Արդյոք սառցադաշտերը հալվո՞ւմ են լեռներում և ինչո՞ւ:
Ո՞րն է մարդու գործունեության ազդեցությունը սառցադաշտերի հալման վրա:
Ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ լեռներում և նախալեռներում ապրող բնակչության համար Տուպունգատո լեռան սառցադաշտի հալման հետևանքով:
Ինչպե՞ս կփոխվի այն մարդկանց գործունեությունը, որոնք անհիշելի ժամանակներից հարմարվել էին սառցի սեզոնային ավելացմանն ու նվազմանը:
Ի՞նչ դրական արդյունքներ կարող են հետևել արկտիկական սառցադաշտերի հալմանը հյուսիսային ժողովուրդների կյանքում:
Որքանո՞վ է հնարավոր հյուսիսային տարածաշրջաններում գյուղատնտեսության՝ բուսաբուծության տարբեր ճյուղերի զարգացումը կլիմայի գլոբալ փոփոխության և սառցադաշտերի ինտենսիվ հալման պայմաններում:
Ինչպե՞ս կարող ենք օգնել հյուսիսում բնակվող բնակչությանը փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարվելու գործընթացում:
Ինչպե՞ս է սառցադաշտերի հալվելն ազդում մարդու կյանքի վրա:

Խմբերը լրացնում են գրաֆիկական կազմակերպիչը



Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում
Ենթահասկացություն. շրջակա միջավայր, ռացիոնալ բնօգտագործում
Ենթահարց. Տուպունգատո լեռան սառցադաշտերի հալվելը: Բնական և մարդածին վտանգներ

Քայլ 3

Ինչու է կարևոր սառցադաշտերի, այդ թվում Տուպունգատո լեռան սառցադաշտի հալման դադարեցումը, և ինչպես է այս երևույթն արտացոլվում լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման վրա: **(Կայուն զարգացում կ.պ. 1,2)**

Ակտիվություն 8. Դեպքի վերլուծության քննարկում.

Աշակերտները խմբերում քննարկում են աշխատանքային տետրում տրված Առաջադրանքը 8-ը, Դեպքի վերլուծություն 1-ը (էջ 18), և դատողություն են անում.

1. Ինչո՞ւ են սառցադաշտերը կոչվում կլիմայի փոփոխության ցուցիչներ, և ի՞նչ դեր է կատարում սառցադաշտերի հալվելը կլիմայի փոփոխության տեսանկյունից:

Ակտիվություն 8. Փազլի ցանցի լրացում.

Օգտվի՛ր ռեսուրսներից և լրացրո՛ւ ցանցը.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՌԵՍՈՒՐՍ 7	ՌԵՍՈՒՐՍ 8	ՌԵՍՈՒՐՍ 9	ՌԵՍՈՒՐՍ 10
Ինչպե՞ս կփոխվի Տուպունգատո սառցադաշտի հալման հետևանքով գյուղատնտեսության կառուցվածքը:				
Հնարավո՞ր է արդյոք Արկտիկական շրջանից այն կողմ՝ սառցադաշտերի հալման արդյունքում առաջացած տարածքներում, զարգացնել գյուղատնտեսություն:				
Ի՞նչ փոփոխություններ կարող են տեղի ունենալ Երկրի վրա և Վրաստանում XXI դարի վերջին այն դեպքում, եթե շարունակվի սառցադաշտերի հալվելը:				

Ամփոփիչ հարցեր.
Ի՞նչ դեր են կատարում սառցադաշտերի պահապանները կլիմայի փոփոխության հետևանքներից խուսափելու գործընթացում:
Ի՞նչ պետք է անի միջազգային հանրությունը կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած խնդիրների, այդ թվում սառցադաշտերի հալվելը կանխելու հարցում:

Ակտիվություն 9. Տեղեկությունների վերլուծություն.
http://tssts.ge.undp.org/tsontent/georgia/ka/home/post-2015.html կայքում ծանոթացի՛ր Կայուն զարգացման նպատակներին և որոշի՛ր, թե որի հետ է կապվում սառցադաշտերի հալումը: Պատասխանը հիմնավորի՛ր:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի ընթացքում ուսուցչի կողմից տրված հարցերը կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար.

Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթանում առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը.
1. Ինչպե՞ս ես պլանավորում համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: Ի՞նչ էիր նկատի ունենում այն պլանավորելիս:
2. Նախնական պլանն օգնե՞լ է քեզ աշխատանքի գործընթացում:
3. Ի՞նչ մանրամասների վրա էիր անում շեշտադրումը շնորհանդես պատրաստելու համար:
4. Համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացն ընթացե՞լ է ըստ պլանի:
5. Արդյոք անհրաժե՞շտ դարձավ փոփոխություններ կատարել սկզբնապես մշակված պլաններում:
6. Ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել առաջադրանքի նախնական տարբերակ:
7. Ինչո՞վ է տարբերվում կատարված առաջադրանքի սկզբնական տարբերակը վերջնական տարբերակից:
8. Ի՞նչ գործոններ հանգեցրին/կարող էին հանգեցնել նախնական եզրակացությունների վերանայման:
9. Ի՞նչ արդյունք եք ստացել համալիր առաջադրանքի տեսքով:
10. Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը շնորհանդես է:
11. Ի՞նչ հարցի մասին արտահայտեցիր քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:
12. Ինչո՞ւ կատարեցիք համալիր առաջադրանքը:
13. Ի՞նչ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ եք ունեցել համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
14. Ո՞ւմ համար և ինչո՞ւ է ստացված արդյունքն օգտակար և հետաքրքիր:
15. Ի՞նչ գիտեիր ուսումնասիրվող հարցի մասին: Ի՞նչ իմացար նորը: Ի՞նչ կցանկանայիր իմանալ լրացուցիչ:
16. Ի՞նչ եզրակացությունների ես հանգել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: Ի՞նչն է ապացուցում քո եզրակացությունների վավերականությունը/հետևողականությունը:
17. Ի՞նչ մեթոդներ ես օգտագործել ուսումնական նյութն ավելի լավ հասկանալու համար: / Համալիր առաջադրանքն ավելի լավ կատարելու համար:
18. Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելու ժամանակ: Ի՞նչն օգնեց քեզ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
19. Ո՞ւմ նկատմամբ էիր հաշվետու աշխատանքի գործընթացում (ուսուցիչ, դասընկերներ, թաղային համայնք):
20. Ո՞րն էր քո և քո ուսուցչի ընդհանուր նպատակը համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում:
21. Համադասարանցիներիդ հետ ընդհանուր նպատակներ ունեի՞ք: Ձեզ համար հետաքրքիր և հաճելի՞ էր համալիր առաջադրանքի վրա աշխատելը:
22. Ի՞նչ ես արել ինքնուրույն՝ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
23. Ի՞նչն է քեզ մոտ լավ ստացվել՝ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
24. Ո՞վ և ինչպե՞ս օգնեց քեզ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Ո՞ւմ հետ ես համագործակցել: (Ի՞նչ օգնություն ես ցուցաբերել դասընկերներիդ/թաղամասի համայնքի անդամներին/ուսուցչին, ի՞նչ աջակցություն ես ստացել նրանցից):
25. Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ բախվե՞լ եք կոնֆլիկտային իրավիճակների: Ինչպե՞ս կարողացաք լուծել հակամարտությունը:
26. Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ որևէ անորոշության հանդիպե՞լ եք: Ինչպե՞ս ես պարզել անորոշությամբ պատած հարցերը:
27. Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ հանդիպե՞լ եք տարբեր կարծիքների: Որքանո՞վ կարողացար համագործակցել տարբեր հայացքների տեր մարդկանց հետ: Ի՞նչը կօգնի քեզ ավելի լավ հասկանալու քո դասընկերների և ուսուցչի ասելիքը:
28. Վերլուծի՛ր, թե համալիր առաջադրանքի վրա աշխատելիս ինչ կանոնների/օրենքների եք հետևել և ինչո՞ւ (օրինակ, կարծիքների տարբերության ֆոնին որքանո՞վ է քեզ հաջողվել կենտրոնանալ խնդրի, այլ ոչ թե՝ հաղորդակցության մեջ ներգրավված մարդկանց վրա: Ինչո՞վ և ինչպե՞ս էիր արտահայտում հարգանքը մարդկանց նկատմամբ՝ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս):

29. Կռահո՞ւմ ես արդյոք համայնքում նախապես ձևավորված (դրական, թե բացասական) վերաբերմունքը ուսումնասիրության առարկա ընտրված հարցի նկատմամբ, և ի՞նչն է առաջացնում նման վերաբերմունքի ձևավորում:
30. Ինչո՞վ օգնեց քեզ ուսուցչի, այլ աշակերտների հետ երկխոսությունը համալիր առաջադրանքի կատարման մեջ:
31. Ինչպե՞ս կարող են քո հարցերն օգնել դասընկերներիդ ավելի լավ ձևակերպելու իրենց ասելիքը:
32. Ի՞նչ գործոններ նկատի ունեցար/պետք է նկատի ունենաս, որպեսզի համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լինի (օրինակ՝ պատմելը, նկարագրելը, դատողությունը, ճիշտ ընտրությունը, ժեստերի, դիմախաղի, ոչ խոսքային ազդանշանների օգտագործումը):
33. Օգտագործե՞լ ես արդյոք տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում, և ինչո՞վ են դրանք օգնել քեզ:
34. Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե հիմա սկսեիր աշխատել առաջադրանքի վրա:
35. Քո կարծիքով՝ ինչո՞վ է քո առաջադրանքը նման և ինչո՞վ է տարբերվում դասընկերներիդ աշխատանքներից: Ինչպե՞ս կարող ես այս տարբերությունները ներկայացնել հարցերի տեսքով:
36. Գնահատի՛ր, թե որքանով է քեզ մոտ ստացվել այն, ինչ քեզ հանձնարարել էր ուսուցիչը:

Հանձնարարական.

Բոլոր միջանկյալ նպատակների վերջում կրկնվում են համալիր առաջադրանքի կատարման և ներկայացման գործընթացում ուսուցչի կողմից տրվող հարցերը՝ կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար: Քանի որ ուսուցչի գրքերը տպագրվում են, կայուն զարգացման նպատակներից ելնելով, թղթի տնտեսման և, հետևաբար, ռեսուրսները պահպանելու համար մենք դրանք այլևս չենք կրկնի այլ միջանկյալ նպատակների վերջում: Ցանկացած դեպքում առաջնորդվեք առաջին միջանկյալ նպատակի նմուշով:

<u>Դեպք (քեյս) 1. Ներդիր: Լեռան սառցադաշտերի պահապան</u>

Աշխարհի ամենաբարձր օդերևութաբանական կայանը

2019 թվականին National Geographic ամսագրի և Rolex-ի շրջանակներում իրականացված երկու և կես ամսանոց «Հավերժական մոլորակ» նախագծի գիտարշավին մասնակցել են 34 գիտնականներ՝ երկրաբաններ, սառցադաշտաբաններ, կենսաբաններ և կլիմայագետներ: Նրանք Էվերեստի և նրա հարևան Խումբուի սառցադաշտի վրա դաշտային ուսումնասիրություններ են կատարել տարբեր բարձրությունների վրա և կազմակերպել են հինգ օդերևութաբանական կայան: Այդ թվում, աշխարհում ամենաբարձր օդերևութաբանական կայանը տեղադրվել է Էվերեստի վրա: Կայանից գիտնականներին շատ հազվագյուտ տվյալներ են տրամադրվում կլիմայի փոփոխության և արևադարձային փոթորիկներ առաջացնող գործընթացների մասին:

«Սա նոր պատուհան է մոլորակը ճանաչելու համար: Մենք համարում ենք, որ միայն համալիր գիտական մոտեցմամբ կկարողանանք ուսումնասիրել Էվերեստը», – ասում է Փոլ Մայևսկին՝ Մենի համալսարանի Կլիմայի փոփոխության ինստիտուտի տնօրենն ու այս արշավախմբի ղեկավարը:

National Geographic-ի թիմը օդերևութաբանական կայան է տեղադրել նաև Անդերի գագաթներին: Դրա շնորհիվ Չիլին կկարողանա ավելի լավ հաղթահարել երաշտը և տաքացումը, որոնք վտանգում են նաև ջրի մատակարարումը:

Հյուսիսային Կարոլինայի Ապալաչների պետական համալսարանի կլիմայագետ և սառցադաշտագետ դոկտոր Փերի Բեյքերն այն միջազգային թիմի առաջնորդներից է, որը 2021 թվականի փետրվարին, չնայած համավարակին, խիտ ձյան պայմաններում, համարձակվել է 15-օրյա արշավ կազմակերպել և մագլցել Տուպունգատո գագաթ: Նրանք Հարավային Անդերում հանգած հրաբխի տակ օդերևութաբանական կայան են տեղադրել, որը հարավային և արևմտյան կիսագնդերում ամենաբարձր վայրում գտնվողն է: Չիլիի և Արգենտինայի սահմանին գոյություն ունեցող կայանն օգնում է գիտնականներին հասկանալ, թե որքան արագ է կլիման փոխվում այս տարածաշրջանում:

Աղբյուր. Աշակերտի գիրք, էջ 29:

Համալիր առաջադրանք 2

Թեմա. Կլիմայի գլոբալ փոփոխություն
Հարցը. Տեյտիոտայի գործը (փախստականներ, ներքին տեղահանվածներ)։

Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ։ **Ենթահասկացություն.** նոոոլորտ, բնական վտանգներ, բնական աղետներ։ **Ենթահարց.** Կիրիբատիի կլիմայի փոփոխությունը, Ջերմոցային գազեր, Ջրհեղեղ։

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը. բնակչության կյանքի մակարդակը, բնակչության կառուցվածքը։ **Ենթահարց.** Կիրիբատիի բնակչության էկոմիգրացիան, Կլիմայական փախստականներ, Միգրացիայի մասին օրենք։

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում. **Ենթահասկացություն.** հասարակություն, բնակչության անվտանգությունը և բարեկեցությունը։ **Ենթահարց.** Տեյտիոտայի ընտանիքի անվտանգությունը, Կլիմայական փախստականներ, Մարդու իրավունքներ։

Հանգուցային հարց. Ինչպե՞ս պաշտպանենք մարդկանց կլիմայի փոփոխության բացասական հետևանքներից։

Համալիր առաջադրանքի պայմանը

Կլիմայի փոփոխությունն առաջացնում է տասնյակ միլիոնավոր մարդկանց արտագաղթ։ Նրանք ցանկանում են փրկվել տարբեր բնական աղետներից, այդ թվում, փոթորկից, երաշտից և ջրհեղեղից։ Շրջակա միջավայրի պահապանների գնահատմամբ, 2010 թվականին աշխարհում 40 միլիոնից ավելի կլիմայական միգրանտներ հարկադրված են եղել լքել բնակման միջավայրը՝ կլիմայի փոփոխության հետ կապված պատճառներով։ 2020 թվականին, չնայած Քովիդ 19-ի համավարակին, նրանց թիվը գերազանցել է 34 մլն-ը։ Ըստ կանխատեսման՝ էկոմիգրանտների թիվը 2050 թվականի դրությամբ հնարավոր է հասնի 200-250 միլիոն մարդու։

Պատկերացրո՛ւ, որ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) աշխատակից ես։ Որպես փախստականների իրավունքների պաշտպանության ու բարեկեցության մասին հոգացող կազմակերպության անդամի քեզ հանձնարարվել է ուսումնասիրել Կիրիբատի կղզու քաղաքացի Տեյտիոտայի դեպքը, պաշտպանել նրան դատավարության ժամանակ։ Նմանակած դատարավարության համար պատրաստի՛ր ճառ, որով կպաշտպանես քո պաշտպանյալի կլիմայական փախստականի իրավունքները։

Պաշտպանական ճառում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչպես է կլիմայի փոփոխությունն ազդում Կիրիբատի կղզու բնական միջավայրի վրա։ **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)**
- Ինչպես կանդրադառնան կլիմայի փոփոխության հետևանքները Կիրիբատիի բնակիչների կյանքի ու կենցաղի վրա։ **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1,2.)**
- Ինչպես է երկրների միգրացիոն քաղաքականությունն ազդում կլիմայական փախստականների խնդիրների և միգրացիոն ճգնաժամի վրա։ **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.3.)**
- Ինչպես կարող են լուծվել կլիմայական փախստականների խնդիրները։ **(Կայուն զարգացում կ.պ.1 2.)**

Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.	**Գնահատման չափանիշ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
Աշխարհագրական թաղանթ 1. Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: 2. Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա: **Բնակչությունը և տնտեսությունը** 1. Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: 2. Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: 3. Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա: **Կայուն զարգացում** 1. Տեղական գործունեություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: 2. Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար:	**Աշխարհագրական թաղանթ** • Կոնկրետ օրինակների վրա հիմնվելով՝ ըմբռնել աշխարհագրական թաղանթի մեջ ընդգրկված երկրոլորտների և նոոոլորտի փոխկախվածությունը: **(կ.պ. 1)** • Ըմբռնել մարդու գործունեության ազդեցությունը Տուպունգատո սառցադաշտի խնդիրների վրա: **(կ.պ.2)** **Բնակչությունը և տնտեսությունը** • Գնահատել կլիմայի փոփոխությամբ փոխակերպված բնական միջավայրի բացասական ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա: **(կ.պ. 1, 2)** • Վերլուծել կլիմայական փախստականների անվտանգության և բարեկեցության համար պետության կողմից անցկացված միջոցառումների նշանակությունը **(կ.պ. 3):** **Կայուն զարգացում** • Գիտակցել կլիմայական փոփոխության հետևանքով տուժածների խնդիրների լուծման նշանակությունը կայուն զարգացման և ապագա սերնդի բարեկեցության համար: **(կ.պ. 1, 2)**	• Ինչպես է կլիմայի փոփոխությունն ազդում Կիրիբատի կղզու բնական միջավայրի վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)** • Ինչպես կանդրադառնան կլիմայի փոփոխության հետևանքները Կիրիբատիի բնակիչների կյանքի ու կենցաղի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1,2.)** • Ինչպես է երկրների միգրացիոն քաղաքականությունն ազդում կլիմայական փախստականների խնդիրների և միգրացիոն ճգնաժամի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.3.)** • Ինչպես կարող են լուծվել կլիմայական փախստականների խնդիրները: **(Կայուն զարգացում կ.պ.1 2.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում
Ռեսուրսներ/քննարկվելիք դեպքեր (քեյսեր).

1. Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան
Պարագրաֆ 4. Փախստականներ, ներքին տեղահանվածներ

2. Փաստաբանի եզրափակիչ ճառը և նրա նշանակությունը. https://goo.su/0zHre
3. Կլիմայի փոփոխությունը և առողջությունը. https://goo.su/tzBU
4. ՄԱԿ-ի Փախստականների բարձրագույն հանձնակատարի գրասենյակ. https://www.unhcr.org/
5. ՄԱԿ-ի Փախստականների բարձրագույն հանձնակատարի գրասենյակ. https://data.unhcr.org/en/situations/rbap
6. Միգրացիայի միջազգային կազմակերպություն՝ IOM. https://worldmigrationreport.iom.int/wmr-2022-interactive/
7. IOM-ի ռազմավարությունը Միգրացիայի միջավայրի և կլիմայի փոփոխության մասին. https://environmentalmigration.

iom.int/

8. Միգրացիայի տվյալների հարթակ. https://www.migrationdataportal.org/themes/environmental_migration_and_statistics
9. Ընթերցանության նյութ համալիր առաջադրանքների համար՝ «Եվրոպայի միգրացիոն ճգնաժամը (Աշակերտի տետր, էջ 131)
10. Ջոն Լենոնի երգի ամբողջական տարբերակը. https://www.youtube.com/watch?v=YkgkThdzX-8

Ռեսուրս 2
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 1-ի հիման վրա).

- Ի՞նչ նշանակություն ունի եզրափակիչ ճառը։
- Ի՞նչ պետք է նկատի ունենանք եզրափակիչ ճառ պատրաստելիս։
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն ճառ պատրաստելիս։

Ռեսուրս 3
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 3-ի հիման վրա).

- Ի՞նչ ազդեցություն է ունենում կլիմայի փոփոխությունը մարդու առողջության վրա։
- Ինչպե՞ս են տեղի ունենում կլիմայի փոփոխության և մարդու առողջության ռիսկերի գնահատումը և դրանց արձագանքումը։

Ռեսուրս 4, 5, 6, 7
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 4-5-6-7-ի հիման վրա).

- Ինչպիսի՞ն է փոխադարձ կապը կլիմայի փոփոխության պայմաններում բնակչության տեղաշարժի և պետությունների որոշումների միջև։
- Ի՞նչ գործունեություններ պետք է ձեռնարկեն ՄԱԿ-ի կառույցները և երկրների կառավարությունները կլիմայական փախստականների և ներքին տեղահանվածների խնդիրները լուծելու համար։

Ռեսուրս 8
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 8-ի հիման վրա).

Այս ակտիվությունը կօգնի ծանոթանալ Համաշխարհային միգրացիայի նորագույն զեկույցին։

Ռեսուրս 9. Տեսահոլովակ
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 9-ի հիման վրա).

Արդյոք պետք է փոխվի՞ երկրի քաղաքականությունը՝ ներգաղթյալներին տարբեր կատեգորիաներ հատկացնելու վերաբերյալ և ինչո՞ւ:

Ռեսուրս 10
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 10-ի հիման վրա).

- Ըստ քեզ, ինչպիսի՞ն կլինի միգրացիայի գործընթացը այսպիսի առանց սահմանների աշխարհում:
- Այս տվյալների դեպքում կլինե՞ն արդյոք փախստականներ և ներքին տեղահանվածներ:

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.
Ենթահարց. Մարդածին գործոններով պայմանավորված ջերմոցային գազերի կոնցենտրացիան առաջացնում է կլիմայի փոփոխություն, որն արտահայտվում է բնակչության կենսամակարդակի վրա.
- Ի՞նչ ազդեցություն կունենա կլիմայի գլոբալ փոփոխությունը բնակչության կյանքի վրա:
- Ինչպե՞ս կարող են լուծվել կլիմայական միգրանտների խնդիրները:

Ենթահարց. Գլոբալ կլիմայի փոփոխության ազդեցությունը մեղմելու հարցում պետական որոշումներն ազդում են բնակչության բարեկեցության վրա.
- Ինչպե՞ս պետք է փոխվի Միգրացիայի մասին օրենքը:
- Ի՞նչ դեր են կատարում պետական որոշումները բնակչության իրավունքների պաշտպանության գործում:
- Ինչպե՞ս են կապված բնակչության անվտանգությունն ու իրավունքները:

Համալիր առաջադրանք
- Քո խոսքերով ձևակերպի՛ր, թե ինչին կվերաբերի այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատես մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք: Ցանկանու՞մ ես փոխել համալիր առաջադրանքի արդյունքը: Ինչո՞ւ:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա
Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ
Ենթահասկացություն. Նոոոլորտ: Բնական աղետներ (վտանգներ)
Ենթահարց. Կլիմայի փոփոխություն, Ջերմոցային գազեր, Ջրհեղեղ

Քայլ 1.

Ինչպես է կլիմայի փոփոխությունն ազդում Կիրիբատի կղզու բնական միջավայրի վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)**

Ակտիվություն 1. Աշխարհագրական հետազոտություն.

Աշակերտները կատարում են Աշակերտի տետրում տրված Առաջադրանք 3-ը (էջ 24) և 4-ը (էջ 24), պատասխանում են կից հարցերին և դրանց հիման վրա դատողություն անում.
Որո՞նք են բնական աղետների ընդհանուր օրինաչափությունները:

Ակտիվություն 2. Աշխարհագրական հետազոտություն.

Աշակերտները կատարում են աշխատանքային տետրում տրված Առաջադրանք 3-ը (էջ 28), պատասխանում են կից հարցերին և դրանց հիման վրա դատողություն են անում.
Որո՞նք են բնական աղետների մասշտաբների աճի պատճառները, և ի՞նչ գործոններով են գնահատվում բնական աղետների հետևանքները:
Ի՞նչ ազդեցություն ունի մարդածին գործոնը բնական գործընթացների զարգացման վրա:

Ակտիվություն 3. Տեքստի և քարտեզի վերլուծություն.

Աշակերտներն ըստ նկ. 4.2-ի (Աշակերտի գիրք, էջ 78)՝ ծանոթանում են փախստականների ծագման պատճառներին: Նրանք որոշում են, թե դրանցից որոնք են պատմական, որոնք՝ ժամանակակից: Պատասխանները պետք է հիմնավորված լինեն օրինակներով և պատասխանեն հարցերին.

ա) Դատողությո՛ւն արա, թե ինչու է աճում ժամանակակից աշխարհում հարկադիր միգրացիայի մեջ գտնվող մարդկանց՝ փախստականների, ապաստան հայցողների և ներքին տեղահանվածների թիվը:
բ) Ո՞ր երկրներում են հայտնվում կլիմայական փախստականները և ինչո՞ւ:
գ) Ինչո՞ւ Տեյտիոտայի ընտանիքը հաստատվեց Նոր Զելանդիայում: Ըստ քեզ, ո՞ր երկրներում կգտնեն ապաստան այս բնական աղետի պատճառով առաջացած պոտենցիալ կլիմայական միգրանտները:

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը
Ենթահասկացություն. Բնակչության կյանքի մակարդակը
Ենթահարց. Էկոմիգրացիա, կլիմայական փախստական, Միգրացիայի մասին օրենք

Քայլ 2

Ինչպես կանդրադառնան կլիմայի փոփոխության հետևանքները Կիրիբատիի բնակիչների կյանքի ու կենցաղի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1,2.)**

Ակտիվություն 4. Դեպքի վերլուծություն.

1. Աշակերտներն աշխատում են դասագրքում տրված տեքստի վրա, քննարկում Դեպքի վերլուծություն 1-ը (էջ 79), Աշակերտի տետրում Առաջադրանք 1-ը (էջ 39) և պատասխանում հարցին.

   ա) Ի՞նչը կարելի է համարել ընդհանրապես հարկադիր միգրացիայի և մասնավորապես Տեյտիոտայի ընտանիքի համար դրական կողմ:

2. Դեպքի վերլուծություն 2-ը (էջ 87) վերլուծելուց հետո դատողություն են անում, թե ինչու են կլիմայի փոփոխության հետևանքները հատկապես ծանր աշխարհի զարգացող երկրների համար, և ի՞նչ սոցիալական խնդիրներ են սրվում աշխարհում կլիմայի փոփոխության պատճառով:

Ակտիվություն 5. Հոդվածների վերլուծություն.

Կծանոթանան Ռեսուրս 3-ում տրված կայքերում հոդվածին՝ «Կլիմայի փոփոխությունը և առողջությունը», կորոշեն, թե ինչ ազդեցություն է ունենում կլիմայի փոփոխությունը մարդու առողջության վրա: Կլրացնեն գրաֆիկական կազմակերպիչը.



Ակտիվություն 6. Սխեմայի վերլուծություն.

Ըստ նկ.4.9-ի (դասագիրք, էջ 90)՝ կորոշեն, թե որ տարածաշրջաններն են առանձնանում միգրացիայի «ֆեմինիզացմամբ» և դատողություն կանեն հարուցող պատճառների մասին:

Աշակերտները կթվարկեն, թե ինչ դժվարությունների է հանդիպել Տեյտիոտայի ընտանիքը, ինչ այլ խնդիրներ կարող են առաջանալ ներգաղթի արդյունքում և լրացնում են սխեման:



Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում
Ենթահասկացություն. հասարակություն, բնակչության անվտանգությունը և կյանքի մակարդակը
Ենթահարց. Տեյտիոտայի ընտանիքի անվտանգությունը, Կլիմայական փախստական, Մարդու իրավունքներ

Քայլ 3

Ինչպես է երկրների կողմից իրականացված միգրացիոն քաղաքականությունն ազդում կլիմայական փախստականների խնդիրների և միգրացիոն ճգնաժամի վրա **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 3):**
Ինչպե՞ս կարող են լուծվել կլիմայական փախստականների խնդիրները **(Կայուն զարգացում կ.պ. 1, 2):**

Ակտիվություն 7. Գրաֆիկական կազմակերպիչի ստեղծում.

Աշակերտները դատողություն են անում, թե ինչ միջոցառումների անցկացումն են համարում նպատակահարմար կլիմայի փոփոխության հետևանքով հարուցված սոցիալական ռիսկերը նվազեցնելու համար:
Լրացնում են գրաֆիկական կազմակերպիչը.



Ակտիվություն 8. Աշխատանք տեքստի և աշխարհագրական դիդակտիկ նյութերի վրա.

1. Աշակերտները ծանոթանում են ընթերցանության նյութին համալիր առաջադրանքի համար՝ «Եվրոպական միգրացիոն ճգնաժամը» (տե՛ս Աշակերտի տետր, էջ 131) և պատասխանում են հարցերին.
   ա. Արդյոք պետք է փոխվի՞ երկրի քաղաքականությունը՝ ներգաղթյալներին տարբեր կատեգորիաներ հատկացնելու վերաբերյալ և ինչո՞ւ:
   բ. Ի՞նչ պատճառներով կարող է երկիրը ստիպված լինել ներգաղթի տարբեր սահմանափակումներ կիրառել:

2. Աշակերտները կատարում են Աշակերտի տետրում տրված Առաջադրանք 2-ը (էջ 40) և 3-ը (էջ 43) և պատասխանում են հարցերին:
   ա. Ինչ մարտահրավերների կարող են հանդիպել փախստականները օտար երկիր տեղափոխվելիս, և բացատրի՛ր, թե ինչպես կարող են դրանք լուծվել:
   բ. Բացի ՄԱԿ-ից, ո՞ր միջազգային կազմակերպություններն են զբաղվում փախստականների և ներքին տեղահանվածների խնդիրների լուծման գործընթացով:
   գ. Ո՞ր երեք գործողությունների միջոցով կարող է նա օգնություն ցուցաբերել Տեյտիոտայի ընտանիքին:

Ակտիվություն 9. Երաժշտական դադար.

Հայտնի անգլիացի երգիչ, «Beatles» անսամբլի մենակատար Ջոն Լենոնը «Imagine» երգում (Ռեսուրս 10) ասում է. «Պատկերացրե՛ք, որ երկրներ գոյություն չունենան, և աշխարհը միավորված լինի, առանց սահմանների»: Քո կարծիքով, ինչպիսի՞ն կլիներ միգրացիոն գործընթացը առանց նման սահմանների աշխարհում և գոյություն կունենա՞ն արդյոք փախստականներ և ներքին տեղահանվածներ:

Ակտիվություն 10. Կեղծակերպած դատավարություն.

Համալիր առաջադրանքի վրա աշխատանքն ավարտելուց հետո կանցկացվի կեղծակերպած դատավարություն, որտեղ պետք է ներկայացվի պաշտպանի պաշտպանական ճառը: Աշակերտները կընտրեն երդվյալ ատենակալներ, որոնց կազմը պարբերաբար փոխվելու է, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ունի աշխատանք ներկայացնելու պարտավորություն: Երդվյալ ատենակալները քննարկում են յուրաքանչյուր փաստաբանի պաշտպանական ճառը, նշում են նրանց ուժեղ և թույլ կողմերը և ընտրում այն փաստաբաններին, որոնք ամենաշատը համոզեցին իրենց Տեյտիոտայի ընտանիքի պահանջները բավարարելու անհրաժեշտության մեջ:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի ընթացքում ուսուցչի կողմից տրված հարցերը կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար. (տե՛ս հանձնարարական, էջ 34, հարցեր էջ. 33):

Դեպք (քեյս) 1. Ներդիր: Դեպքի վերլուծություն

Կլիմայական փախստականի կարգավիճակ ստանալու հայտի ամենահայտնի դեպքը կապված է Կիրիբատի կղզու քաղաքացի Իոհան Տեյտիոտայի հետ: Կլիմայական ճգնաժամը ծանր հարված է հասցրել նրա երկրին՝ ծովը գրոհում և գրավում է երկիրը, ստեղծվում է խմելու ջրի պակաս, ինչը հանգեցնում է հողի քայքայման և բերրի տարածքների կրճատման: Երկրում սովորական երևույթ են հողի հետ կապված հակամարտությունները: 2007 թվականին Տեյտիոտան ընտանիքի հետ վերաբնակվել է Նոր Զելանդիայում:

2010 թվականին նա Նոր Զելանդիայի կառավարությանը դիմել է կլիմայական փախստականի կարգավիճակ ստանալու համար, սակայն 2013 թվականին կառավարությունը հետ է վերադարձրել նրա դիմումը: 2016 թվականին Տեյտիոտան բողոք է ներկայացրել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե:

2020 թվականին ՄԱԿ-ի Դավոսի համաշխարհային տնտեսական համաժողովում ՄԱԿ-ի փորձագետները հրապարակել են այդ գործով որոշում՝ «Տեյտիոտան ընդդեմ Նոր Զելանդիայի»: Դրանում ասված է, որ Տեյտիոտան իրավունք ուներ փախստականի կարգավիճակ ստանալու, քանի որ նրա կյանքին, ինչպես նաև՝ նրա ընտանիքի անդամների կյանքին այդ ժամանակ վտանգ էր սպառնում:

Այս դեպքից հետո ավելի տեսանելի դարձավ էկոլոգիական միգրացիայի խնդիրը: ՄԱԿ-ը նոր իրավական որոշում է կայացրել: Ըստ այս որոշման՝ երկրները չեն կարող արտաքսել այն մարդկանց, որոնց կյանքին իրենց հայրենիքում վտանգ է սպառնում կլիմայական ճգնաժամի պատճառով: ՄԱԿ-ի սահմանման համաձայն՝ երկրները պարտավոր են հեշտացնել այն անձանց անդրսահմանային տեղաշարժը, ովքեր ապաստան են փնտրում կլիմայի փոփոխությամբ առաջացած այնպիսի հանկարծակի և բնական աղետներից պաշտպանվելու համար, ինչպիսիք են ուժեղ փոթորիկներն ու ջրհեղեղները, ինչպես նաև՝ համեմատաբար դանդաղ ընթացող գործընթացները՝ ծովի մակարդակի բարձրացումը, ջրի և հողի աղակալումը և հողերի քայքայումը:

ՄԱԿ-ի փորձագետներն ընդգծված նշել են, որ կլիմայի փոփոխության հետևանքներից տուժած երկրները միջազգային հանրության աջակցության կարիքն ունեն: Ըստ նրանց՝ անչափ կարևոր է գործուն որոշումների կայացումն ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մասշտաբով: Հակառակ դեպքում՝ շատ պետություններ հնարավոր է հայտնվեն ջրի տակ, ինչի հետևանքով վտանգ կսպառնա մարդկանց կյանքին, և ընդունող երկրներն այլևս չեն կարողանա այսպիսի երկրներից ապաստան հայցողներին վտարել:

Աղբյուր. Աշակերտի գիրք, էջ 87:

Համալիր առաջադրանք 3

Թեմա. Կլիմայի գլոբալ փոփոխություն
Հարցը. Հարավային Կորեա: «Ասիական վագրի» կանաչ տնտեսությունը (կանաչ տնտեսություն):

Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ: **Ենթահասկացություն.** նոոոլորտ, մարդածին լանդշաֆտներ: **Ենթահարց.** Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքը: Հարավային Կորեայի բնական պայմանները:

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը: **Ենթահասկացություն.** Տնտեսության կառուցվածքը: Տնտեսության բնագավառներ (երրորդային և չորրորդային բնագավառներ): **Ենթահարց.** Հարավային Կորեայի տնտեսությունը, Շրջանաձև տնտեսություն, Կանաչ աշխատատեղեր, Պետական ռազմավարություն:

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում. **Ենթահասկացություն.** Հասարակություն: Բնակչության անվտանգությունը և բարեկեցությունը: **Ենթահարց.** Գլոբալ կանաչ տնտեսության ինդեքս, Բնապահպանական արդյունավետության ինդեքս:

Հանգուցային հարց. Ինչպես փոխանցեմ իմ կարծիքը հետազոտության հաշվետվության միջոցով Հարավային Կորեայի տնտեսական հրաշքի մասին այնպես, որ հետաքրքրեմ հասարակությանը և գործընկերներիս:

Համալիր առաջադրանքի պայմանը

Տնտեսական զարգացման գոյություն ունեցող մոդելը չկարողացավ մարդկանց համար ապահովել առողջ բնապահպանական պայմաններ և առողջության համար անվտանգ արտադրանք ստեղծել: ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագիրը (UNEP) սահմանում է կանաչ տնտեսությունը որպես մարդու բարեկեցությանը և սոցիալական արդարության բարելավմանը նպաստող միջոց:

Կանաչ տնտեսության խթանման ճանապարհին առաջատար է Հարավային Կորեան, որը կանաչ աճը ճանաչել է որպես ազգային ռազմավարություն: Հարավային Կորեայի Հանրապետությունն առաջին երկիրն էր, որը հայտարարեց կանաչ աճի հայեցակարգի իրագործումը որպես ազգային ռազմավարություն: Այս ռազմավարությունը կենտրոնացած է երեք տարրերի վրա՝ արդյունաբերություն, էներգետիկա և ներդրումներ:

Պատկերացրո՛ւ, որ դու Գլոբալ կառավարման ինստիտուտի աշխատակից ես: Քո նպատակն է ծանոթանալ և ուսումնասիրել Հարավային Կորեայի տնտեսական զարգացման ուղին, որը դեռևս XX դարի սկզբին ցածր զարգացած ագրարային երկիր էր, իսկ այսօր նրա անվանումն օգտագործվում է բարձր զարգացած տնտեսությունն արտահայտելու համար: Քո խնդիրն է գործընկերներիդ մամուլի ասուլիսի ժամանակ ծանոթացնել «Հարավային Կորեայի տնտեսական հրաշքը» և համոզել կանաչ տնտեսության առավելության մեջ, քանի որ այն նորարարական տնտեսության այն մասն է, որում նվազագույն է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը և ուղղված է ներկա և ապագա սերունդների բարեկեցության բարելավմանը:

Հետազոտության զեկույցում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչ դեր են կատարում Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները «Տնտեսական հրաշքի» և որպես «Ասիական վագր» նրա ձևավորման գործընթացում: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ. 1, 2)**
- Ինչպես է կանաչ տնտեսության հրաշքն արտացոլվում բնակչության կյանքի ու կենցաղի և տնտեսական զարգացման մակարդակի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1, 2)**
- Ինչպես են պետության և բնակչության որոշումներն ազդում երկրի զարգացման գործընթացի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 3);**
- Ինչպես կզարգանա Հարավային Կորեան ապագայում, ինչպես կփոխվի մարդկանց բարեկեցությունը էկոլոգիական պահանջների ապահովման հիման վրա, և ինչ դեր կկատարի երկիրը կայուն աշխարհի կառուցման գործընթացում: **(Կայուն զարգացում կ.պ. 1, 2):**

Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.	**Գնահատման չափանիշ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
Աշխարհագրական թաղանթ 1. Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: 2. Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա: **Բնակչությունը և տնտեսությունը** 1. Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: 2. Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: 3. Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ- տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա: **Կայուն զարգացում** 1. Տեղական գործունեություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: 2. Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար:	**Աշխարհագրական թաղանթ** • Կոնկրետ օրինակների վրա հիմնվելով՝ ըմբռնել աշխարհագրական դիրքի և բնական պայմանների ազդեցությունը երկրի զարգացման գործընթացում: **(կ.պ. 1)** **Բնակչությունը և տնտեսությունը** • Որևէ երկրի օրինակի հիման վրա գնահատել կանաչ տնտեսության դերը բնակչության տնտեսական գործունեության մեջ: **(կ.պ. 1, 2)** • Վերլուծել տնտեսական զարգացման գործընթացում պետության կողմից իրականացված քաղաքականության հետևանքները: **(կ.պ. 3):** **Կայուն զարգացում** • Կոնկրետ երկրի օրինակով ըմբռնել կանաչ տնտեսության դերը կայուն աշխարհի ձևավորման գործընթացում: **(կ.պ. 1, 2):**	• Ինչ դեր են կատարում Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները «Տնտեսական հրաշքի» և որպես «Ասիական վագր» նրա ձևավորման գործընթացում: **(Աշխարհագրական թաղանթ, կ.պ. 1, 2)** • Ինչպես է կանաչ տնտեսության հրաշքն արտացոլվում բնակչության կյանքի ու կենցաղի և տնտեսական զարգացման մակարդակի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1, 2)** • Ինչպես են պետության և բնակչության որոշումներն ազդում երկրի զարգացման գործընթացի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 3);** • Ինչպես կզարգանա Հարավային Կորեան ապագայում, ինչպես կփոխվի մարդկանց բարեկեցությունը էկոլոգիական պահանջների ապահովման հիման վրա, և ինչ դեր կկատարի երկիրը կայուն աշխարհի կառուցման գործընթացում: **(Կայուն զարգացում կ.պ. 1, 2):**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում
Ռեսուրսներ/քննարկվելիք դեպքեր (քեյսեր).

Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան
Պարագրաֆ 5. Կանաչ տնտեսություն

1. Ինչպե՞ս ստեղծենք հետազոտության հաշվետվություն. https://www.living-democracy.com/ge/textbooks/volume-2/students-manual-10/tool-2/toolbox-1/
2. Ծրագիր. earth.google.com
3. Հարավային Կորեայի «Տնտեսական հրաշքը». http://geoeconomics.ge/?p=13343
4. Կանաչ տնտեսության երկընտրանքը. https://greenalt.org/app/uploads/2019/02/Green_Economy_Dilemma_Geo.pdf
5. Կանաչ տնտեսությունն ու աղքատությունը. https://goo.su/VH67GZ
6. Կանաչ և կապույտ տնտեսության հայեցակարգերը գլոբալ դեֆիցիտի պայմաններում. https://goo.su/Tzuii3
7. Կանաչ տնտեսություն: Էությունն ու մարտահրավերները. https://goo.su/rpy3
8. Կանաչ տնտեսությունը և Վրաստանը. http://geoeconomics.ge/?p=12751
9. Կանաչ տնտեության հայեցակարգը և Վրաստանի դիրքորոշումը գլոբալ կանաչ տնտեսության մեջ. https://goo.su/uGPu

Ռեսուրս 1
Առաջարկվող ակտիվությունը (Կատարվում է Ռեսուրս 1-ի հիման վրա).

- Ինչպե՞ս ստեղծել հետազոտության հաշվետվություն:
- Ի՞նչ պետք է նախատեսենք հետազոտության հաշվետվություն պատրաստելիս:
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն հետազոտության հաշվետվություն պատրաստելիս:

Ռեսուրս 2
Առաջարկվող ակտիվություն (Կատարվում է Ռեսուրս 2-ի հիման վրա).

Google Earth՝ Գուգլ երկրագունդ, ծրագիրը կօգնի ձեզ ճանաչել և որոշել.

- Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքը:
- Հարավային Կորեայի բնական պայմանները:

Ռեսուրսներ 3 և 4
Առաջարկվող ակտիվություն (Կատարվում է Ռեսուրս 3-ի և 4-ի հիման վրա).

- Որո՞նք են Հարավային Կորեայի տնտեսական ձեռքբերումներն ու ցուցանիշները:
- Ինչպե՞ս է պետության տնտեսական զարգացման ռազմավարությունն ազդում Հարավային Կորեայի զարգացման վրա:

Ռեսուրսներ 5, 6 և 7
Առաջարկվող ակտիվությունը (Կատարվում է Ռեսուրս 5, 6 և 7-ի հիման վրա).

- Ինչո՞ւ է կարևոր կանաչ տնտեսության հայեցակարգը:
- Ինչո՞ւ պետք է պետությունը ընտրի կանաչ տնտեսության հայեցակարգը:

Ռեսուրսներ 8 և 9
Առաջարկվող ակտիվությունը (Կատարվում է Ռեսուրս 8-ի և 9-ի հիման վրա).

- Ինչպիսի՞ն է Վրաստանի դիրքորոշումը կանաչ տնտեսության մեջ:
- Ինչպիսի՞ն են Վրաստանի հարաբերությունները Հարավային Կորեայի հետ:

Հարցեր, որոնք ուղղված են համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը.

Ենթահարց. Աշխարհագրական դիրք, Բնական պայմաններ, Գլոբալ խնդիրներ.

- Ի՞նչ է կանաչ տնտեսության հայեցակարգը և ի՞նչ դեր է խաղացել Հարավային Կորեայի զարգացման գործընթացում:
- Ինչպիսի՞ն է Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքի և երկրի բնական պայմանների ազդեցությունը բնակչության գործունեության վրա:

Ենթահարց. Տնտեսություն, Շրջանաձև տնտեսություն, Կանաչ աշխատատեղեր, Պետական ռազմավարություն.

- Ինչպե՞ս է անցումը կանաչ տնտեսության ազդում բնակչության կենսամակարդակի վրա:
- Ինչպե՞ս ազդեց բնակչության գործունեության վրա անցումը կանաչ տնտեսության:

Ենթահարցեր. Գլոբալ «կանաչ» տնտեսության ինդեքս, Բնապահպանական արդյունավետության ինդեքս.

- Ինչպե՞ս պետք է պետությունն ապահովի Հարավային Կորեայի բնակչության կայուն ապագան:

Համալիր առաջադրանք
- Քո խոսքերով ձևակերպի՛ր, թե ինչին կվերաբերի այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատես մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք: Ցանկանու՞մ ես փոխել համալիր առաջադրանքի արդյունքը: Ինչո՞ւ:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա
Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ
Ենթահասկացություն. Նոոոլորտ/մարդածին լանդշաֆտներ
Ենթահարց. Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքը, Հարավային Կորեայի բնական պայմանները

Քայլ 1.

Ինչ դեր են կատարում Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները «Տնտեսական հրաշքի» և որպես «Ասիական վագր» նրա ձևավորման գործընթացում: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1, 2)**

Ակտիվություն 1. Աշխատանք քարտեզի վրա.

Earth.Google.com ծրագրի միջոցով որոշի՛ր.
- Հարավային Կորեայի աշխարհագրական դիրքը:
- Հարավային Կորեային սահմանակից երկրները:
- Հարավային Կորեայի բնական պայմանները:

Ակտիվություն 2. Հոդվածի քննարկում.

Ծանոթացի՛ր հոդվածին (Ռեսուրս 3) և որոշի՛ր.
- Զարգացման ի՞նչ ուղի է անցել Հարավային Կորեան:
- Ինչպե՞ս Հարավային Կորեան զարգացող երկրից դարձավ զարգացած երկիր:
- Ինչպիսի՞ն են Հարավային Կորեայի տնտեսական ձեռքբերումներն ու ցուցանիշները:
- Ո՞ր գործոններն են պայմանավորել Հարավային Կորեայի ձևավորումը որպես «Ասիական վագր»:

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը
Ենթահասկացություն. տնտեսության կառուցվածքը, չորրորդայն և հինգերորդային ճյուղեր
Ենթահարց. Տնտեսություն, Շրջանաձև տնտեսություն, Կանաչ աշխատատեղեր, Պետական ռազմավարություն

Քայլ 2

Ինչպես է կանաչ տնտեսության հրաշքն արտացոլվում բնակչության կյանքի ու կենցաղի և տնտեսական զարգացման մակարդակի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1, 2)**
Ինչպես են պետության և բնակչության որոշումներն ազդում երկրի զարգացման գործընթացի վրա:
(Բնակչությունը և տնտեսությունը կ. պ. 3)

Ակտիվություն 3. Պատասխանի՛ր հարցին.

Աշխատանքային տետրում կատարի՛ր Առաջադրանքներ 1, 2 և 3-ը (էջ 45) և պատասխանի՛ր հարցին.
- Ի՞նչ նախապայմաններ գոյություն ունեին մինչև կանաչ տնտեսություն ստեղծումը:
- Ի՞նչ է ներառում կանաչ տնտեսությունը:
- Ըստ նկ. 5.7-ի (էջ 102)՝ կազմի՛ր ուղղագիծ և շրջանաձև տնտեսության մոդելները և քննարկի՛ր, թե ինչու է կարևոր ուղղագիծ տնտեսությունից շրջանաձևին անցնելը:

Ակտիվություն 4. Դեպքի վերլուծության քննարկում. Երկընտրանքի լուծում.

Որպեսզի լուծվի երկընտրանքը, թե որ՝ «կանաչ» թե՞ «կապույտ» տնտեսությանն ես առավելություն շնորհում և ինչո՞ւ, ծանոթացի՛ր Ռեսուրս 6-ին և դասագրքում տրված Դեպքի վերլուծություն 2-ին (էջ 106), պատասխանի՛ր կից հարցերին:

Լրացրո՛ւ աղյուսակը և դատողությո՛ւն արա երկընտրանքի մասին՝ ըստ քեզ, ո՞ր տնտեսության առաջընթացն է կայուն զարգացման նոր հայեցակարգը՝ «կանա՞չ», թե՞ «կապույտ»:

ԿԱՊՈՒՅՏ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ակտիվություն 4 . Դեպքի վերլուծության քննարկում.

Ծանոթացի՛ր Ռեսուրս 4-ին, դասագրքի տեքստին և Դեպքի վերլուծություն 4-ին (էջ 114), պատասխանի՛ր կից հարցերին և դրանց հիման վրա բացատրի՛ր.

- Ո՞րն է եղել ամենակարևոր և արդյունավետ գործողությունը կանաչ տնտեսությանն անցնելու գործընթացում, որն առաջացրել է Հարավային Կորեայի տնտեսական հրաշքը:

Ակտիվություն 5. Պատասխան հարցերին.

Ծանոթացի՛ր Ռեսուրս 5-ին, աշխատանքային տետրում կատարի՛ր Առաջադրանք 5-ը (էջ 46) և բացատրի՛ր.

- Ինչպե՞ս է անցումը կանաչ տնտեսության ազդում բնակչության կենսամակարդակի վրա:
- Ինչպե՞ս կանդրադառնա բնակչության գործունեության վրա անցումը կանաչ տնտեսության:

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում
Ենթահասկացություն. բնակչության անվտանգություն և բարեկեցություն.
Ենթահարց. Համաշխարհային «կանաչ» տնտեսության ինդեքսը, Բնապահպանական արդյունավետության ինդեքսը:

Քայլ 3

Ինչպես կզարգանա Հարավային Կորեան ապագայում, ինչպես կփոխվի մարդկանց բարեկեցությունը էկոլոգիական պահանջների ապահովման հիման վրա, և ինչ դեր կկատարի երկիրը կայուն աշխարհի կառուցման գործընթացում: **(Կայուն զարգացում կ.պ. 1, 2):**

Ակտիվություն 6. Պատասխան հարցերին և աշխատանք սխեմայի վրա.

Աշակերտներն աշխատում են խմբերով, քննարկում Ռեսուրսներ 7, 8 և 9-ը, քննարկում և պատասխանում են հարցերին.

- Ի՞նչը հանգեցրեց համաշխարհային տնտեսության էկոլոգիացմանը, և ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան համաշխարհային տնտեսության կառուցվածքում դրա ազդեցությամբ:
- Ինչպե՞ս է ազդում էկոլոգիապես վտանգավոր ձեռնարկության կառուցումը երկրների հարաբերությունների վրա:
- Համաձա՞յն ես այն կարծիքին, որ «կանաչ տնտեսությունը կայուն զարգացման հիմքն է և կայուն զարգացման նպատակների իրականացման հիմնաքարը»: Հիմնավորի՛ր քո պատասխանը:

Աշակերտի աշխատանքային տետրում կատարում են Առաջադրանք 4-ը (էջ 46), լրացնում են սխեման և դատողություն անում.

- Որքանո՞վ կայուն փաստարկներ ունեն կողմնակիցների և հակառակորդների թիմերի անդամները:

- Կարելի՞ է արդյոք կանաչ տնտեսության զարգացումը համարվել նոր (այսպես կոչված «կանաչ») արդյունաբերական հեղափոխություն:
- Կայուն զարգացման նպատակներին ծանոթացի՛ր կայքում՝ http://goo.su/к4ЕтY35 և որոշի՛ր, թե դրանցից որի հետ է կապվում «կանաչ» տնտեսությունը:
- Բացատրի՛ր՝ համաձա՞յն ես փորձագետների այն կարծիքին, որ «կանաչ տնտեսությունը փոխարինել է տնտեսական քաղաքականությանը, որպեսզի նպաստի դրական միջավայրի և սոցիալական պայմանների ստեղծմանը»: Բե՛ր քո կարծիքը հաստատող փաստարկներ:

Ակտիվություն 7. Գաղափարների անիվ.

Աշակերտները խմբում կպայմանավորվեն, թե ինչպես կհամոզեն շահագրգիռ անձանց կանաչ տնտեսության առավելության մեջ, կբացատրեն, թե ինչու:

- Ինչպե՞ս է զարգանում կանաչ տնտեսությունը Վրաստանում:
- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել:

Օգտագործելով Հարավային Կորեայի օրինակը, պլանավորեն, թե ինչ կարելի է անել կանաչ տնտեսությանն անցնելու գործընթացում:
Գաղափարները տեղադրվում են գաղափարների անիվի վրա (տե՛ս սխեմայի նմուշը):



Ակտիվություն 8. Դերային խաղ. Կոնֆերանս

Աշակերտները համալիր առաջադրանքները կներկայացնեն կոնֆերանսի ժամանակ: Դասարանի կողմից ընտրված փորձագետները կգնահատեն, թե որքանով փաստարկված ու համոզիչ էր բանախոսը ու հանձնարարականներ կտան:
Փորձագիտական խմբերը փոխվում են՝ ելնելով անհրաժեշտությունից: Այն աշակերտը, որը ներկայացնում է հետազոտության հաշվետվություն, ավտոմատ կերպով դուրս է մնում փորձագիտական խմբից:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի ընթացքում ուսուցչի կողմից տրված հարցերը կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար. (տե՛ս հանձնարարական, էջ 34, հարցեր էջ. 33):

Դեպք (քեյս) 3. Դեպքի վերլուծություն

Հարավային Կորեան առաջին պետություններից է, որը կանաչ տնտեսության գաղափարը ճանաչել է որպես ազգային ռազմավարություն։Կորեան ետպատերազմյան քանդված աղքատ երկրից ձևավորվեց աշխարհի ամենաառաջատար և հզոր տնտեսություն ունեցող մի պետության, սակայն արդյունաբերական զարգացման և ուրբանիզացիայի բարձր ցուցանիշը հանգեցրեց ջերմոցային գազերի ինտենսիվ աճի և կենսոլորտի աղտոտման։

XXI դարի սկզբին բացահայտ դարձավ, որ հին ռազմավարությունները, որոնք նպաստել էին երկրի հաջողությանը, այլևս չէին արդարացնում։ Ուստի 2008 թվականին կառավարությունը ներմուծեց պակաս ածխածին պարունակող կանաչ աճի (Low Carbon Green Growth) ռազմավարություն։ Այդ ժամանակից ի վեր երկրի ամբողջ ներքին արտադրանքի մոտ 2%-ը բաժին է ընկնում կանաչ տեխնոլոգիաների ներդրման ու զարգացման նախագծերին։ Ուշադրությունը կենտրոնացվում է կանաչ էներգիայի, տրանսպորտի կանաչ տեսակների, թափոնների վերամշակման կանաչ տեխնոլոգիաների և բնապահպանական ուսումնասիրությունների վրա։

2010 թվականի հունիսին Սեուլում զարգացող երկրներին օգնելու և խորհրդատվություն տրամադրելու նպատակով գործարկվել է գիտահետազոտական կենտրոն՝ Գլոբալ կանաչ աճի ինստիտուտ (GGGI), որը միավորում է 27 երկիր և բազմաթիվ միջազգային կազմակերպությունների և ինստիտուտների գործընկեր է։ Նրա շնորհիվ 2017 թվականին այս երկրներում կանաչ տնտեսության զարգացման գործընթացում կատարված ներդրումները կազմել են 524,6 մլն դոլար։

2011 թվականից Կորեայում գործում է կանաչ վճարման քարտերի եզակի համակարգ։ Ձեռք բերելով օրգանական արտադրանք (էկո-արտադրանք), օգտվելով հասարակական տրանսպորտից և նույնիսկ կանխիկ գումարից պարզապես հրաժարվելով՝ կորեացիները միավորներ են հավաքում, որոնք նրանք կարող են ծախսել կոմունալ վճարումների կամ բարեգործության համար։ Այս ծրագիրը հարավկորեական այն ծրագրի մաս է կազմել, որը նպատակ էր նախանշել մինչև 2020 թվականը ջերմոցային գազերի արտանետումների կրճատում 30%-ով։

Համաձայն ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (UNFCCC)՝ 2016 թվականի դեկտեմբերի դրությամբ Հարավային Կորեայում տրված կանաչ քարտերի թիվը գերազանցել է 15 միլիոնը, ինչը հավասար է երկրի տնտեսապես ակտիվ բնակչության 55%-ին։

Աղբյուր. Աշակերտի գիրք, էջ 114

II ԳԼՈՒԽ

ԴԱՍԱՐԱՆ.	XI		
ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ.	ԳԼՈԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
ՀԻՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԸ.	ԴԱՍԱԳԻՐՔ		
Նպատակային հասկացություն	**Հարց 1** Թուրքիա։ Օսմանյան կայսրությունից մինչև գլոբալ պետություն	**Հարց 2** Հակամարտություններ, ռեսուրսային պատերազմներ, Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը	**Հարց 3** Անվտանգություն, խաղաղության պահպանում։ Խաղաղության պարկը Վրաստանում՝ միջպետական հակամարտությունների կարգավորման կայուն միջոց
Աշխարհագրական թաղանթ	**Ենթահարց.** Թուրքիայի աշխարհագրական դիրքը, Թուրքիայի բնական պայմանները **Ենթահասկացություն.** նոոոլորտ՝ մարդածին լանդշաֆտներ։	**Ենթահարց.** Կիրիբատիի կլիմայի փոփոխությունը, Ջերմոցային գազեր, Ջրհեղեղ։ **Ենթահասկացություն.** նոոոլորտ՝ բնական և տեխնածին վտանգներ։	**Ենթահարց.** «Կանաչ գոտի», Խաղաղության պարկ։ **Ենթահասկացութուն.** նոոլորոտ, պահպանված տարածքներ։
Բնակչությունը և տնտեսությունը	**Ենթահարց.** Թուրքիայի մշակույթը։ Սոցիալական գլոբալացում, Թուրքիայի բնակչության կյանքի մակարդակը։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, բնակչության կյանքի մակարդակը։	**Ենթահարց.** Ռուսաստանի և Ուկրաինայի բնակչության մահացությունը, ծնելիությունը, գործազրկությունը, միգրացիան։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, ժողովրդագրական և սոցիալական խնդիրներ։	**Ենթահարց.** Խաղաղության ինդեքսը։ Բնակչության գործունեությունը։ Ապառազմականացում, ռազմականացում։ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, բնակչության կյանքի մակարդակը։
Կայուն զարգացում	**Ենթահարց.** Թուրքիայի բնակչության կյանքն ու կենցաղը։ **Ենթահասկացություն.** հասարակություն. բնակչության բարեկեցությունը։	**Ենթահարց.** Ռուսաստանի և Ուկրաինայի շրջակա միջավայրի աղտոտվածությունը, հիվանդությունների տարածումը, առողջապահություն, սով։ **Ենթահասկացություն.** շրջակա միջավայր՝ բնապահպանական խնդիրներ	**Ենթահարց.** Աշխարհաքաղաքական խնդիրներ, ապառազմականացված գոտի։ **Ենթահասկացություն.** հասարակություն. բնակչության անվտանգությունը և կյանքի մակարդակը։
Համալիր առաջադրանք	**Համալիր առաջադրանք 1** Լեպբուքի պատրաստում Թուրքիա պետության զարգացման մեջ գլոբալացման գործընթացի դերի և նշանակության մասին։	**Համալիր առաջադրանք 2** Հեռուստատեսային հաղորդման սցենարի ստեղծում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության և ենթադրյալ հետևանքների մասին։	**Համալիր առաջադրանք 3** Խաղաղության պարկի նախագծի պատրաստում միջպետական հակամարտությունների կարգավորման և բնապահպանական նպատակով։

Ռեսուրսներ համալիր առաջադրանքը կատարելու համար	Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 11. Մշակութային գլոբալացում:	Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 13. Հակամարտություններ, ռեսուրսային պատերազմներ, ահաբեկչություն	Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 14. Անվտանգություն, խաղաղության պահպանում

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ

- Աշխարհագրական դիրքը և բնական պայմաններն ազդում են գլոբալացման գործընթացում երկրի զարգացման վրա:
- Հակամարտությունները կապված են աշխարհագրական դիրքի և ռեսուրսների հետ, ինչն առաջացնում է նոոոլորտի փոփոխություններ:
- Բնական միջավայրը կարևոր դեր է կատարում միջպետական խաղաղ համակեցության մեջ:
- Մարդածին գործոններն ազդում են բնական գործընթացների վրա:
- Համաշխարհային քաղաքական գործընթացները որոշում են բնակչության սոցիալ-մշակութային գլոբալացման գործընթացը:
- Մշակութային գլոբալացումն ազդում է բնակչության կյանքի մակարդակի և որակի վրա:
- Մշակույթի գլոբալացումը հանգեցնում է գլոբալ հասարակության ձևավորման:
- Հակամարտությանը մասնակցող բնակչության կյանքը փոխվում է, ինչն արտացոլվում է նրա դինամիկայի և կենսակերպի վրա:
- Բնական պայմաններն ազդում են մարդու կյանքի և անվտանգության վրա:
- Պետական քաղաքականության կարևոր խնդիրներից է բնակչության անվտանգության պաշտպանությունը:
- Երկրի բնական պայմանների և բնակչության փոխազդեցությունը կախված է բնակչության գիտակցության մակարդակից:
- Զանգվածային լրատվության միջոցները կարևոր դեր են կատարում մշակութային գլոբալացման գործընթացում:
- Հակամարտություններն ստեղծում են բնապահպանական խնդիրներ, որոնք ազդում են բնակչության առողջության և կյանքի որակի, ինչպես նաև շրջակա միջավայրի կայունության վրա:
- Գլոբալ աշխարհաքաղաքական խնդիրների լուծման գործում կարևոր է միջազգային համագործակցությունը:

Համալիր առաջադրանք 1

Թեմա. Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները
Հարցը. Թուրքիա՝ Օսմանյան կայսրությունից մինչև գլոբալ պետություն

Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ՝ **Ենթահասկացություն.** նոոոլորտ, մարդածին լանդշաֆտներ՝ **Ենթահարց.** Թուրքիայի աշխարհագրական դիրքը, Թուրքիայի բնական պայմանները՝

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը՝ **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, բնակչության կյանքի մակարդակը՝ **Ենթահարց.** Թուրքիայի մշակույթը, սոցիալական գլոբալացում, Թուրքիայի բնակչության կյանքի մակարդակը՝

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում. **Ենթահասկացություն.** հասարակություն, բնակչության բարեկեցությունը՝ **Ենթահարց.** Թուրքիայի բնակչության կյանքն ու կենցաղը՝

Հանգուցային հարց. Լեպբուքի միջոցով ինչպես փոխանցեմ իմ կարծիքը Թուրքիայի զարգացման վրա գլոբալացման ազդեցության մասին այնպես, որ հետաքրքրեմ հանրությանը և լրատվամիջոցներին՝

Առաջադրանքի պայմանը

Ժամանակակից աշխարհում ընթացող գլոբալացման գործընթացի, ավելի կոնկրետ դրա արդյունքների և ազդեցության վերաբերյալ գոյություն չունի միասնական կարծիք՝ Գլոբալացումն ունի ինչպես կողմնակիցներ, այնպես էլ՝ հակառակորդներ, որոնք, հիմնվելով օրինակների վրա, վերլուծում են գործընթացը և դատողություն անում գլոբալացման դրական և բացասական կողմերի մասին՝ Գլոբալացումը կարող է նպաստել կամ ընդհակառակը, բացասական ազդեցություն ունենալ յուրաքանչյուր երկրի տնտեսության և մշակույթի զարգացման վրա՝

Գլոբալացման գործընթացը նպաստում է մարդկանց կյանքի որակի բարելավմանը, արտադրական հզորությունների ավելացմանը, արտադրված արտադրանքի և ծառայությունների բազմազանությանը, ինչպես նաև նորարարություններին ու տեխնոլոգիական ձեռքբերումներին, որոնք դրական են ազդում երկրի տնտեսության զարգացման վրա՝

Պատկերացրո՛ւ, որ դու Գլոբալ կառավարման ինստիտուտի աշխատակից ես՝ Քո նպատակն է անդրադառնալ Թուրքիայում գլոբալացման և ապագլոբալացման հարցերի վրա Թուրքիայի բնակչության և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնացմանը՝

Ստեղծի՛ր լեպբուք, որն արտահայտում է քո անձնական վերաբերմունքը/կարծիքը Թուրքիա պետության զարգացման գործում գլոբալացման գործընթացի դերի և նշանակության մասին՝ Լեպբուքի մեջ արտացոլի՛ր, թե որ գործընթացին ես աջակցում՝ գլոբալացմա՞նը, թե՞ ապագլոբացմանը՝

Լեպբուքի մեջ հստակ ցո՛ւյց տուր.

- Ի՞նչ դեր են կատարում աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները Թուրքիայի տնտեսական զարգացման ու նրա բնակչության, որպես համաշխարհային հասարակություն, ձևավորման գործընթացում: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ. 1)**
- Ինչպե՞ս է գլոբալացման գործընթացն ազդում Թուրքիայի բնակչության առօրյա կյանքի և տնտեսական զարգացման մակարդակի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1,2)**
- Ինչպե՞ս կզարգանա գլոբալացման գործընթացը Թուրքիայում, և ի՞նչ դեր կկատարի երկիրը կայուն աշխարհի կառուցման գործընթացում: **(Կայուն զարգացում 1,2)**

Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.	**Գնահատման չափանիշ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
Աշխարհագրական թաղանթ 1. Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: 2. Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա: **Բնակչությունը և տնտեսությունը** 1. Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: 2. Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: 3. Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ- տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա: **Կայուն զարգացում** 1. Տեղական գործունեություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: 2. Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար:	**Աշխարհագրական թաղանթ** • Կոնկրետ օրինակների վրա հիմնվելով՝ գիտակցել աշխարհագրական դիրքի և բնական պայմանների ազդեցությունը գլոբալ հասարակության ձևավորման գործընթացում: **(կ.պ.1)** **Բնակչությունը և տնտեսությունը** • Հիմնվելով որևէ երկրի օրինակի վրա՝ գնահատել գլոբալացման գործընթացի հետևանքները բնակչության տնտեսական զարգացման գործընթացում: **(կ.պ. 1, 2)** • Վերլուծել գլոբալացման գործընթացում պետության կողմից իրականացված քաղաքականության հետևանքները: **(կ.պ. 3)** **Կայուն զարգացում** • Կոնկրետ երկրի օրինակով վերլուծել գլոբալացման նշանակությունը կայուն աշխարհ ձևավորելու գործընթացում: **(կ.պ. 1, 2)**	• Ի՞նչ դեր են կատարում աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները Թուրքիայի տնտեսական զարգացման ու նրա բնակչության, որպես համաշխարհային հասարակություն, ձևավորման գործընթացում: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ. 1)** • Ինչպե՞ս է գլոբալացման գործընթացն ազդում Թուրքիայի բնակչության առօրյա կյանքի և տնտեսական զարգացման մակարդակի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1,2)** • Ինչպե՞ս կզարգանա գլոբալացման գործընթացը Թուրքիայում, և ի՞նչ դեր կկատարի երկիրը կայուն աշխարհի կառուցման գործընթացում: **(Կայուն զարգացում 1,2)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում

Ռեսուրսներ/քննարկվելիք դեպքեր (քեյսեր).

1. Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 11. Մշակութային գլոբալացում
2. Ինչպես ստեղծեմ լեպբուք. http://mastsavlebeli.ge/?p=34888
3. Ծրագիր.earth.google.com
4. Թուրքիա։ Գլոբալացում. https://www.theglobaleconomy.com/Turkey/kof_overall_glob/
5. Սանդրո Բակուրաձե։ Ուրբանիզացիան և փոփոխված թուրքական հասարակությունը։ https://goo.su/94ra9
6. Տեսնայութ՝ 42° զուգահեռական։ Թուրքական կասկածը շրջակա աշխարհի նկատմամբ։ Սևրի սինդրոմը/ Թրամփի տնտեսական քաղաքականության վերլուծություն. https://www.youtube.com/watch?v=LWrcdYTz-Wk&t=885s
7. Զուրաբ Դավիթաշվիլի։ Գլոբալացումը և մշակույթը. https://gfsis.org.ge/files/my-world/19/3.pdf

Ռեսուրս 1
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 1-ի հիման վրա).

- Ինչպե՞ս ստեղծել լեպբուք։
- Ի՞նչ պետք է նկատի ունենանք լեպբուք պատրաստելիս։
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն լեպբուք պատրաստելիս։

Ռեսուրս 2
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 2-ի հիման վրա).

Google Earth՝ Գուգլ երկրագունդ, ծրագիրը կօգնի քեզ, որ ծանոթանաս և որոշես.

- Թուրքիայի աշխարհագրական դիրքը։
- Թուրքիայի բնական պայմանները։

Ռեսուրս 3
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 3-ի հիման վրա).

- Ինչպիսի՞ն է Թուրքիայի գլոբալացման ցուցանիշը։
- Ինչպե՞ս է գլոբալացումն արտացոլվում մշակույթում։

Ռեսուրս 4
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 4-ի հիման վրա).

- Ի՞նչ ազդեցություն է գործում մարդու կյանքի ու կենցաղի վրա գլոբալացումը, և հասարակական կյանքի ո՞ր ոլորտներում է գլոբալացման գործընթացն ամենավիճահարույցը։
- Ո՞րն է մշակութային գլոբալացման շարժիչ ուժը։

Ռեսուրս 5. Տեսահոլովակ
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 5-ի հիման վրա).

Տրված տեսահոլովակի քննարկումը կօգնի, որ ծանոթանաս.
Ի՞նչ ազդեցություն ունի մշակութային գլոբալացումը գլոբալացման մնացած տեսակների վրա։

Ռեսուրս 6.
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 6-ի հիման վրա).

- Արդյոք մշակութային առումով տարբեր լինելը իր էությամբ արժեքավո՞ր նախապայման է:
- Ինչո՞ւմ և ինչպե՞ս է դրսևորվում ժամանակակից աշխարհի բազմազանությունը:

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

Ենթահարց. Աշխարհագրական դիրք, բնական պայմաններ, գլոբալ հիմնախնդիրներ
- Ի՞նչ է գլոբալացումը և ի՞նչ դեր է կատարում ժամանակակից աշխարհում:
- Ի՞նչ ազդեցություն է գործում Թուրքիայի աշխարհագրական դիրքը գլոբալացման գործընթացում նրա զարգացման վրա:

Ենթահարց. Մշակույթ, սոցիալական գլոբալացում, բնակչության կյանքն ու կենցաղը
- Ինչպե՞ս է արտացոլվում գլոբալացման գործընթացը բնակչության կյանքի մակարդակի վրա:
- Պետությունն ինչպե՞ս պետք է պաշտպանի բնակչության անվտանգությունը:

Ենթահարցեր. Մշակույթ, Բնակչության կյանքն ու կենցաղը
- Ի՞նչ դրական և բացասական հետևանքներ ունի մշակութային գլոբալացումը:
- Ո՞ր հետևանքներն են ամենակարևորը և ինչո՞ւ:

Համալիր առաջադրանք
- Քո խոսքերով ձևակերպի՛ր, թե ինչին կվերաբերի այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատես մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք: Ցանկանու՞մ ես փոխել համալիր առաջադրանքի արդյունքը: Ինչո՞ւ:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա
Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ
Ենթահասկացություն. նոոոլորտ, մարդածին լանդշաֆտներ
Ենթահարց. Թուրքիայի աշխարհագրական դիրքը, Թուրքիայի բնական պայմանները, Գլոբալ հիմնախնդիրներ

Քայլ 1

Ի՞նչ դեր են կատարում աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները Թուրքիայի տնտեսական զարգացման ու նրա բնակչության, որպես համաշխարհային հասարակություն, ձևավորման գործընթացում:
(Աշխարհագրական թաղանթ կ.պ. 1)

Ակտիվություն 1. Աշխատանք քարտեզի վրա.

Earth.Google.com ծրագրի միջոցով որոշի՛ր.
- Թուրքիայի աշխարհագրական դիրքը:
- Թուրքիային սահմանակից երկրները:
- Թուրքիայի բնական պայմանները. կարևոր լեռնագրական և ջրագրական օբյեկտները, կլիմայական վիճակը և բնական գոտիները:

Ակտիվություն 2. Գրաֆիկական կազմակերպիչի ստեղծում. Գնահատման սանդղակ.

Աշակերտները պատասխանում են հարցերին և աշխատում են գրաֆիկական կազմակերպչի վրա:

1. Քո խոսքերով սահմանի՛ր գլոբալացումը:
2. Թվարկի՛ր գլոբալացման տեսակները և բացատրի՛ր, թե որն է ամենակարևորը և ինչո՞ւ:

3. Լրացրո՛ւ վարկանշային սանդղակը։ Մուտքագրի՛ր քո թվարկած գլոբալ խնդիրներն ըստ կարևորության.

4. Ի՞նչ կապ կա գլոբալացման տեսակների միջև, և ինչպե՞ս են արտահայտված գլոբալացման ձևերը Թուրքիայի զարգացման գործընթացում։

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը
Ենթահասկացություն. բնակչության կյանքի մակարդակը և որակը
Ենթահարց. Մշակույթ, սոցիալական գլոբալացում, Բնակչության կյանքի մակարդակը

Քայլ 2

Ինչպե՞ս է գլոբալացման գործընթացն ազդում Թուրքիայի բնակչության առօրյա կյանքի և տնտեսական զարգացման մակարդակի վրա։ **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ. 1,2)**

Ակտիվություն 3. Փոքր քննարկում.

Շատ սոցիոլոգներ և մշակութաբաններ համարում են, որ մշակույթն այլևս չի ընկալվում որպես նախնիներից ժառանգած գիտելիքների համակարգ։ Նրանք այն քննարկում են որպես գաղափարների, բաղադրիչների և սպասումների ամբողջություն, որն այն ժամանակ է փոխվում, երբ մարդիկ արձագանքում են փոխակերպված հանգամանքներին։

Քննարկման հարց. Համաձա՞յն ես փորձագետների կարծիքի հետ։ Հիմնավորի՛ր քո պատասխանը։

Լրացուցիչ հարց. Ինչ ես կարծում, արդյոք սոցիալական գլոբալացումը մտածողության նոր հոսանքի զարգացման և կյանքի նոր ձևերի ու չափորոշիչների բացահայտո՞ւմ է։

Ակտիվություն 4. Աշխարհագրական հետազոտություն.

Լրացրո՛ւ աշխատանքային տետրի Առաջադրանքը 5-ը, Աշխարհագրական հետազոտություն 2-ը (էջ 93) և որոշի՛ր Թուրքիայի գլոբալացման ցուցանիշները։

Հարց.
Ի՞նչ ազդեցություն ունի սոցիալական գլոբալացումը գլոբալացման մյուս ձևերի վրա։

Ակտիվություն 5. Պատասխանի՛ր հարցերին.

1. Ծանոթացի՛ր դասագրքի նկ. 11.2-ում (էջ 259) տրված մշակույթների փոխազդեցության գործընթացի արդյունքներին և փորձի՛ր սեփական բառերով բացատրել, թե դրանցից յուրաքանչյուրը ինչ պետք է նշանակի: Բե՛ր քեզ ծանոթ օրինակներ յուրաքանչյուր արդյունքի համար:
2. Ըստ քեզ՝ մշակույթների փոխազդեցության գործընթացի արդյունքներից ո՞րն է ամենակարևորը և ինչո՞ւ:
3. Բացատրի՛ր, թե ինչպես է գլոբալացումն արտացոլվում մշակույթի մեջ, և ինչպես է ձևավորվում գլոբալ հասարակությունը:

Ակտիվություն 6. Դեպքի վերլուծության քննարկում.

Դասագրքում ծանոթացի՛ր Դեպքի վերլուծություն 1-ին (էջ 264), պատասխանի՛ր կից հարցերին և դրանց հիման վրա բացատրի՛ր.
ա. Ինչպիսի՞ն է գլոբալացման ազդեցությունը մարդու կյանքի և կենցաղի վրա:
բ. Հասարակական կյանքի ո՞ր ոլորտներում է գլոբալացման գործընթացն ամենավիճահարույցը: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

Ակտիվություն 7. Տեքստի վերլուծություն QAR մեթոդով.

Աշխատանքային տետրում կատարի՛ր Առաջադրանք 3-ը (էջ 96): Տեքստը վերլուծելու համար օգտագործի՛ր QAR մեթոդը և լրացրո՛ւ աղյուսակը:
QAR մեթոդի աղյուսակ.

Ընդհանուր շրջանակ.

ՀԵՆՑ ԱՅԴՏԵՂ ԿԱՄ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՏԵՔՍՏԻ ՄԵՋ Սահմանում. 1. Որո՞նք են այն չորս մշակույթները, որոնք մեծ քաղաքակրթություններ են անվանում: Աշխարհի ուրվագծային քարտեզի վրա նշի՛ր այս չորս քաղաքակրթությունների տարածման տարածքները: 2. Ո՞ր երկրներն են ընդունել և կամավոր յուրացրել Արևմտյան մշակույթը: 3. Տեքստում գտե՛ք այն բառերը, որոնք հավաստում են ամերիկյան մշակույթի առաջատար դերը ներկայիս փուլում: Որքանո՞վ օբյեկտիվ է դա, ըստ ձեզ:	**ՀԵՂԻՆԱԿԸ ԵՎ ԴՈՒ** Սահմանում. 1. Ինչպե՞ս է ազդել արդյունաբերական հեղափոխությունը հնագույն քաղաքակրթությունների մշակույթի վրա: 2. Հեղինակը ո՞ր հասարակություններն է հիշատակում որպես «մարգինալ աշխարհ»:
ՄՏԱԾԻ՛Ր ԵՎ ԳՏԻ՛Ր Սահմանում. 1. Ինչ ես կարծում, ինչո՞ւ է տարածվել Արևմտյան Եվրոպայի մշակույթը ամբողջ աշխարհում: 2. Ինչ ես կարծում, ի՞նչը կարող է առաջացնել մշակույթի մեջ դոմինանտ ձգտում՝ դառնալ միատարր: Դու ինքդ (ինքնուրույն)	**ԴՈՒ ԻՆՔԴ (ԱՆԿԱԽ)** Սահմանում. 1. Ի՞նչ իմացար այս տեքստից աշխարհի տարբեր մշակույթների փոխազդեցության մասին: 2. Ըստ քեզ, արդյոք մշակութային գլոբալացումն առաջացնո՞ւմ է յուրաքանչյուր մշակույթի ինքնության աստիճանական քայքայում և դրանց միավորում:

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում
Ենթահասկացություն. բնակչության բարեկեցություն
Ենթահարց. Մշակույթ, Բնակչության կյանքն ու կենցաղը

Քայլ 3

Ինչպե՞ս կզարգանա գլոբալացման գործընթացը Թուրքիայում, և ի՞նչ դեր կկատարի երկիրը կայուն աշխարհի կառուցման գործընթացում: **(Կայուն զարգացում 1,2)**

Ակտիվություն 8. Պատասխան հարցերին և աշխատանք սխեմայի վրա.

Աշակետներն աշխատում են խմբերով: Նրանք պետք է պատասխանեն հետևյալ հարցերին.

1. Ըստ քեզ, ո՞րն է մշակութային գլոբալացման շարժիչ ուժը: Ինչ ես կարծում, արդյոք մշակութային առումով տարբեր լինելը իր էությամբ արժեքավո՞ր նախապայման է: Ինչո՞ւմ և ինչպե՞ս է դրսևորվում ժամանակակից աշխարհի բազմազանությունը:
2. Եթե աշխարհի երկրները կտրուկ տարբերվում են միմյանցից, ապա ինչո՞ւ ենք մենք խոսում աշխարհի միասնության մասին:
3. Հիշի՛ր, թե արդյոք մարդկության պատմության մեջ եղել են այնպիսի պահեր, երբ միասնական, վերազգային մշակույթ է ձևավորվել և տարածվել: Ինչպե՞ս եք հասկանում ժամանակակից աշխարհի «միասնությունը բազմազանության մեջ է» կարգախոսը:
4. Բացատրի՛ր, թե ինչ դեր են կատարում զանգվածային լրատվության միջոցները մշակութային գլոբալացման գործընթացում:
5. Դատողությո՛ւն արա մշակութային գլոբալացման դրական և բացասական հետևանքների մասին և լրացրո՛ւ հայեցակարգային սխեման:

(տե՛ս սխեմայի նմուշները)



6. Այս արդյունքներից ո՞րն ես համարում ամենակարևորը և ինչո՞ւ:

Ակտիվություն 9. Գաղափարների անիվ.

Աշակերտները խմբում պայմանավորվում են, թե ինչպես կբարձրացնեն բնակչության իրազեկվածությունը և, ելնելով աշխարհագրական հեռանկարից, կբացատրեն, որ գլոբալացման գործընթացը բխում է Թուրքիայի շահերից: Կբերեն փաստարկներ:

Գաղափարները տեղադրվում են գաղափարների անիվի վրա (տե՛ս սխեմայի նմուշները):



Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի ընթացքում ուսուցչի կողմից տրված հարցերը կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար. (տե՛ս հանձնարարական, էջ 34, հարցեր էջ. 33):

Դեպք (քեյս) 4. Դեպքի վերլուծություն

Թուրքիայի մշակույթն առանձնանում է բազմազանությամբ և միավորում է Ասիայի տարբեր տարածաշրջանների, ինչպես նաև եվրոպական և կովկասյան տարրեր: Այն առավելապես ձևավորվել է Օսմանյան կայսրությունում, որտեղ ապրում էին տարբեր ազգությունների ու դավանանքների մարդիկ:

XX-XXI դարերի ընթացքում թուրքական մշակույթը զգալիորեն փոխվել է: Օսմանյան պետությունում էթնիկ խմբերը զարգանում էին առանձին-առանձին, և մշակութային առումով նրանք հիմնականում չէին միախառնվում միմյանց: Կայսրության փլուզումից և Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո իրականացվեց ունիտար քաղաքականություն, որի ընթացքում նոր ավանդույթներ և ազգային ինքնագիտակցություն ստեղծելու նպատակով տարբեր մշակույթները խառնվեցին իրար, ինչի արդյունքում երկրում առաջացավ հսկայական մշակութային բազմազանություն: Նոր քաղաքականությունը նախատեսում էր բոլոր ոլորտների՝ հասարակության, տնտեսության, կրթության, նորաձևության, մշակույթի արևմտականացում՝ արդիականացման նպատակով, ինչն իրականացվել է Աթաթուրքի կառավարման ժամանակ: Արդյունքում Թուրքիան այսօր ամենաժամանակակից և զարգացած մուսուլմանական երկիրներից մեկն է:

Աղբյուր՝ Աշակերտի գիրք, էջ 264:

Համալիր առաջադրանք 2

Թեմա. Գլոբալ քաղաքական մարտահրավերերը և փոփոխությունները
Հարցը. Հակամարտություններ, ռեսուրսային պատերազմներ, Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը

Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ: **Ենթահասկացություն.** նոոոլորտ, բնական և մարդածին լանդշաֆտներ: **Ենթահարց.** Ռուսաստանի և Ուկրաինայի բնակչության մահացությունը, ծնելիությունը, գործազրկությունը, միգրացիան:

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը: **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, ժողովրդագրական և սոցիալական խնդիրներ: **Ենթահարց.** Ռուսաստանի և Ուկրաինայի բնակչության մահացությունը, ծնելիությունը, գործազրկությունը, միգրացիան:

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում. **Ենթահասկացություն.** Բնապահպանական խնդիրներ: **Ենթահարց.** Ռուսաստանի և Ուկրաինայի շրջակա միջավայրի աղտոտվածությունը, հիվանդությունների տարածումը, առողջապահություն, սով:

Հանգուցային հարց. Ինչպե՞ս փոխանցեմ իմ տեսակետը սցենարի միջոցով Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության մասին այնպես, որ հետաքրքրեմ հասարակությանը:

Համալիր առաջադրանքի պայմանը

Ուկրաինայի և Ռուսաստանի հակամարտությունը շարունակվում է երկար տարիներ:Ռուս ազգայնականները հիմնականում Ուկրաինան չեն դիտարկում որպես անկախ պետություն, իսկ ուկրաինացի ժողովրդին՝ առանձին ազգ: Կիևյան Ռուսիայից ի վեր Ուկրաինան և Ռուսաստանը բազմաթիվ ողբերգություններ ու հաղթանակներ են ունեցել միասին: Այս երկու ժողովուրդների պատմությունն իսկապես միահյուսված է, սակայն ռուս ազգայնականները մերժում են Ուկրաինայի անկախության գաղափարը: Այսօր այսպիսի քննարկման համամասնակից է նաև Ռուսաստանի իշխանությունը, որի ներկայացուցիչները Ուկրաինայի անկախությունը նույնիսկ պաշտոնական հայտարարություններում են կասկածի տակ դնում: Սակայն, բացի պատմագիտական բանավեճից, վերջին տարիներին Ռուսաստանի իշխանությունն ակտիվորեն շահարկում է Ուկրաինայի նորագույն պատմությունը՝ ուկրաինացի ժողովրդի մեջ տարաձայնություններ ու հակասություններ հրահրելու նպատակով:

Պատկերացրո՛ւ, որ Կոնֆլիկտների և բանակցությունների միջազգային հետազոտական կենտրոնի (ICCN) աշխատող ես: Քո նպատակն է գիտակցել տալ բնակչությանը, որ հակամարտության կարգավորման լավագույն միջոցներից մեկը այն վերլուծելն ու համագործակցելն է:

Այդ նպատակով ուսումնասիրի՛ր Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը, ընտրի՛ր հակամարտությունների փորձագետներ և պատրաստի՛ր սցենար հեռուստահաղորդման համար, որտեղ կքննարկեք Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը տարածաշրջանային և գլոբալ կտրվածքում:

Հաղորդման սցենարի մեջ հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչ դեր են խաղում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունում այդ երկրների աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, և ինչպես է հակամարտությունն ազդում նոռոլորտի ձևավորման վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)**
- Ինչպես է ազդում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը բնակչության կյանքի վրա, և ինչ դեր են կատարում պետության որոշումները և միջազգային կազմակերպությունները ընթացող գործընթացներում: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1, 2, 3)**
- Ինչպես կանդրադառնա Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը տարածաշրջանի և աշխարհի կայուն ապագայի վրա և ինչպես կփոխի այն: **(Կայուն զարգացում կ.պ.1, 2)**

Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.	**Գնահատման չափանիշ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
Աշխարհագրական թաղանթ 1. Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: 2. Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոռոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա: **Բնակչությունը և տնտեսությունը** 1. Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: 2. Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: 3. Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ- տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա: **Կայուն զարգացում** 1. Տեղական գործունեություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: 2. Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար:	**Աշխարհագրական թաղանթ** • Կոնկրետ օրինակների վրա հիմնվելով՝ գիտակցել աշխարհագրական դիրքի և բնական պայմանների ազդեցությունը հակամարտությանը մասնակից կողմերի համար: **(կ.պ.1,2)** **Բնակչությունը և տնտեսությունը** • Հիմնվելով որևէ երկրի օրինակի վրա՝ գնահատել հակամարտության հետևանքները բնակչության տնտեսական զարգացման գործընթացում: **(կ.պ. 1, 2)** • Վերլուծել հակամարտության գործընթացում պետության կողմից իրականացված քաղաքականության հետևանքները: **(կ.պ. 3)** **Կայուն զարգացում** • Կոնկրետ երկրի օրինակով վերլուծել հակամարտությունների նշանակությունը կայուն աշխարհ ձևավորվելու գործընթացում: **(կ.պ. 1, 2)**	• Ինչ դեր են խաղում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունում այդ երկրների աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, և ինչպես է հակամարտությունն ազդում նոռոլորտի ձևավորման վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)** • Ինչպես է ազդում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը բնակչության կյանքի վրա, և ինչ դեր են կատարում պետության որոշումները և միջազգային կազմակերպությունները ընթացող գործընթացներում: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1, 2, 3)** • Ինչպես կանդրադառնա Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը տարածաշրջանի և աշխարհի կայուն ապագայի վրա և ինչպես կփոխի այն: **(Կայուն զարգացում կ.պ.1, 2)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում
Ռեսուրսներ/քննարկվելիք դեպքեր (քեյսեր).

Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան,
Պարագրաֆ 13. Հակամարտություններ, ռեսուրսային պատերազմներ, ահաբեկչություն

1. Ինչպես ստեղծել հաղորդման սցենար. https://goo.su/NDWcA
2. Ծրագիր՝ earth.google.com
3. Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության հետ կապված ապատեղեկատվություն՝ բացահայտված է յոթ առասպել.https://goo.su/IzSkYXz
4. ՄԱԿ. Ե՛վ Ուկրաինան, և՛ Ռուսաստանը խոշտանգում են ռազմագերիներին. https://goo.su/bkZJt
5. «Կեղտոտ վառելիքի» տենդ. Պուտինի պատերազմը մոլորակին սպառնում է գերտաքացումով. https://goo.su/iENeR26
6. Տարիներ կպահանջվեն Ուկրաինային պատերազմի պատճառած բնապահպանական վնասը վերացնելու համար. https://goo.su/sa7doJ7
7. Ինչպես կարող է Ուկրաինայի պատերազմը ազդել համաշխարհային սննդի վրա. https://ourworldindata.org/
8. Ռուսաստանի պատերազմն Ուկրաինայում և Վրաստանի մոռացության տրված հակամարտությունները. https://www.freiheit.org/ka/germany/rusetis-omi-ukrainashi-da-sakartvelos-mivicqebuli-konpliktebi
9. Ռուսաստան և Ուկրաինա. https://nationalgeographic.ge/ruseti-da-ukraina-gadakhlartuli-istoria-romelic-mat-akavshirebs-daashorebs-ertmanetisgan/
10. Պատերազմ Ուկրաինայում. https://ourworldindata.org/ukraine-war

Ռեսուրս 1
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 1-ի հիման վրա).

- Ինչպե՞ս ստեղծել հաղորդման սցենար:
- Ի՞նչ պետք է նկատի ունենանք հաղորդման սցենար պատրաստելիս:
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն հաղորդման սցենար պատրաստելիս:

Ռեսուրս 2
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 2-ի հիման վրա).

Google Earth՝ Գուգլ երկրագունդ ծրագիրը կօգնի քեզ, որ ծանոթանաս և որոշես.

- Ռուսաստանի և Ուկրաինային աշխարհագրական դիրքը:
- Ռուսաստանի և Ուկրաինայի բնական պայմանները՝ կարևոր լեռնագրական և ջրագրական օբյեկտները և բնական ռեսուրսները:

Ռեսուրս 3 և 4
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 4-ի հիման վրա).

- Ի՞նչ ազդեցություն ունեն հակամարտությունները մարդու կյանքի վրա:
- Ինչպե՞ս են հակամարտությունները փոխում բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և միգրացիոն գործընթացները:
- Ի՞նչ սոցիալական խնդիրներ են առաջանում հակամարտությունների պատճառով:

Ռեսուրս 5, 6 և 7
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 5, 6, 7-ի հիման վրա).

- Ինչպե՞ս են կոնֆլիկտների հետևանքներն ազդում շրջակա միջավայրի վրա:
- Ինչպե՞ս են հակամարտություններն ազդում կլիմայի գլոբալ փոփոխության վրա:
- Ինչպե՞ս են հակամարտություններն ազդում բնակչության կենսամակարդակի վրա:

Ռեսուրս 8.
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 8-ի հիման վրա).

- Ինչի՞ պետք է սպասենք Աբխազիայում և Ցխինվալիի տարածաշրջանում/Հարավային Օսիայում:

Ռեսուրս 9.
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 9-ի հիման վրա).

- Ռեսուրսը կօգնի քեզ ծանոթանալ Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության նորություններին:

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

Ենթահարց. Աշխարհագրական դիրք, ռելիեֆ, կլիմա, ջրոլորտ, բնական գոտիներ, գլոբալ հիմնախնդիրներ

- Ինչպիսի՞ կոնֆլիկտներ կան և ի՞նչ դեր են կատարում ժամանակակից աշխարհում:
- Ի՞նչ ազդեցություն ունի Ռուսաստանի և Ուկրաինայի աշխարհագրական դիրքը հակամարտության գործընթացի վրա:

Ենթահարց. Մահացություն, ծնելիություն, գործազրկություն, միգրացիա

- Ինչպե՞ս են հակամարտություններն ազդում բնակչության կենսամակարդակի վրա:
- Ինչպե՞ս պետք է պետությունը պաշտպանի բնակչության անվտանգությունը:

Ենթահարց. Շրջակա միջավայրի աղտոտում, հիվանդությունների տարածում, առողջապահություն, սով

- Որո՞նք են կոնֆլիկտների դրական և բացասական հետևանքները:
- Ո՞ր արդյունքներն են առավել կարևոր և ինչո՞ւ:

Համալիր առաջադրանք.
- Քո խոսքերով ձևակերպի՛ր, թե ինչին կվերաբերի այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատես մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք: Ցանկանու՞մ ես փոխել համալիր առաջադրանքի արդյունքը: Ինչո՞ւ:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա
Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ
Ենթահասկացություն. նոոոլորտ, բնական և տեխնածին վտանգներ
Ենթահարց. Ուկրաինայի և Ռուսաստանի աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, գլոբալ հիմնախնդիրներ

Քայլ 1

- Ինչ դեր են խաղում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունում այդ երկրների աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, և ինչպես է հակամարտությունն ազդում նոոոլորտի ձևավորման վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)**

Ակտիվություն 1. Աշխատանք քարտեզի վրա.

Earth.Google.com ծրագրի միջոցով որոշի՛ր.
- Ռուսաստանի և Ուկրաինայի աշխարհագրական դիրքը:
- Ռուսաստանի և Ուկրաինայի բնական պայմանները:
- Կարևոր լեռնագրական և ջրագրական օբյեկտները:
- Բնական պաշարները:

Ակտիվություն 2. Աշխատանք աշխարհագրական դիդակտիկ նյութերի վրա.

Ծանոթացի՛ր դասագրքի տեղեկություններին և կատարի՛ր աշխատանքային տետրի Առաջադրանք 1-ը (էջ 104):

1. Ինչ ես կարծում, ինչպիսի՞ կոնֆլիկտ է ըստ դրսևորման, պատճառի, ազդեցության մասշտաբի, տևողության և ձևի:
2. Հակամարտության ո՞ր տեսակին ես վերագրում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը:
3. Ինչ ես կարծում, ազդո՞ւմ է արդյոք երկրի աշխարհագրական, հատկապես քաղաքական-աշխարհագրական դիրքը նրա՝ տարածաշրջանային հակամարտություններին մասնակցության վրա:
4. Քո կարծիքով, որո՞նք են Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը լուծելու ուղիները, և ի՞նչ դեր է կատարում միջազգային հանրությունը:

Ակտիվություն 3. Դեպքի վերլուծությունների քննարկում

Աշակերտները ծանոթանում են դասագրքում տրված Դեպքի վերլուծություն 1-ին և 2-ին (էջ 298-300), պատասխանում են կից հարցերին և համեմատում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը՝ ըստ դրսևորման, պատճառի, ազդեցության մասշտաբի, տևողության և ձևի:
Արդյունքներն արտացոլում են իրենց մշակած սխեմայի տեսքով:

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը
Ենթահասկացություն. բնակչության կառուցվածքը, ժողովրդագրական և սոցիալական հիմնախնդիրները:
Ենթահարց. Ուկրաինայի մահացությունը, ծնելիությունը, գործազրկությունը, միգրացիան

Քայլ 2

- Ինչպես է ազդում Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը բնակչության կյանքի վրա, և ինչ դեր են կատարում պետության որոշումները և միջազգային կազմակերպությունները ընթացող գործընթացներում: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1, 2, 3)**

Ակտիվություն 4. Տեքստի վերլուծություն.

Ծանոթացի՛ր Ռեսուրս 3-ին և 4-ին և պատասխանի՛ր հարցերին.

- Ի՞նչ ազդեցություն ունեն հակամարտությունները մարդու կյանքի վրա:
- Ինչպե՞ս են հակամարտությունները փոխում բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և միգրացիոն գործընթացները:
- Ի՞նչ սոցիալական խնդիրներ են առաջանում կոնֆլիկտների ժամանակ:
- Https://goo.su/CbbVvNm կայքում ծանոթացի՛ր Երեխաների իրավունքների կոնվենցիային և դատողությո՛ւն արա, թե որ իրավունքն է խախտվում տարածաշրջանային հակամարտություններին նրանց մասնակցության ժամանակ: Ըստ քեզ՝ ինչպե՞ս պետք է լուծվի այս խնդիրը:

Ակտիվություն 5. Դեպքի վերլուծության քննարկում.

Ծանոթացի՛ր դասագրքում տրված Դեպքի վերլուծություն 3-ին և 4-ին (էջ 304-311), պատասխանի՛ր կից հարցերին և դրանց հիման վրա բացատրի՛ր.

- Որո՞նք են XXI դարի աշխարհաքաղաքական հիմնական խնդիրները: Ներկայացրո՛ւ քո տեսլականը դրանց լուծման ուղիների մասին:
- Դատողությո՛ւն արա, թե ինչու է պատերազմի և խաղաղության խնդիրը համարվում ժամանակակից մարդկության հիմնական նպատակը:
- Դատողությո՛ւն արա, թե ինչու է համաշխարհային հանրությունը միահամուռ Ուկրաինային օգնելու հարցում:
- Ինչպե՞ս են միգրացիոն գործընթացներն ազդում բնակչության կենսամակարդակի վրա:

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը
Ենթահասկացություն. շրջակա միջավայր, բնապահպանական խնդիրներ
Ենթահարց. Ուկրաինայի շրջակա միջավայրի աղտոտվածությունը, հիվանդությունների տարածում, սով

Քայլ 3

- Ինչպես կանդրադառնա Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը տարածաշրջանի և աշխարհի կայուն ապագայի վրա և ինչպես կփոխի այն: **(Կայուն զարգացում կ.պ.1, 2)**

Ակտիվություն 6. Դերային խաղ.
Աշակերտներն աշխատում են խմբերով:

Պատկերացրեք, որ դուք մասնակցում եք հաղորդման և հավաքվում եք՝ համաձայնեցնելու և նախանշելու առաջնահերթ քննարկվելիք հարցերը: Դերերը կարող են բաշխվել՝ ելնելով հետաքրքրություններից կամ պատահականության սկզբունքով:

Հաղորդման ժամանակ դերերը կբաշխվեն, հավանաբար, ըստ հետևյալ մասնագիտությունների՝ կոնֆլիկտաբաններ, բնապահպաններ, տնտեսագետներ, բժշկության և առողջապահության ներկայացուցիչներ, սոցիոլոգներ և ժողովրդագիրներ, հաղորդավարներ:

- Ծանոթացի՛ր դասագրքում տրված տեքստին (էջ 308), գծապատկերներին և բացատրի՛ր, թե ինչ դրական կողմեր ունեն զինված հակամարտությունները, և ինչպե՞ս կարող է այդ դրական արդյունքը մարդն օգտագործել ապագայի համար:
- Դրանցից ո՞ր արդյունքներն եք համարում ամենակարևորը և ինչո՞ւ:
- Բե՛ր կոնկրետ օրինակներ, թե ինչպես կարող են դրսևորվել զինված հակամարտության երկարաժամկետ հետևանքները բնապահպանական, տնտեսական, բժշկական և առողջապահական, սոցիալական և ժողովրդագրական առումով:

Դասագրքի և Ռեսուրս 5, 6-ի և 7-ի օգնությամբ դատողությո՛ւն արա.

- Ինչպե՞ս են հակամարտությունների հետևանքներն ազդում շրջակա միջավայրի վրա:
- Ի՞նչ ազդեցություն ունի հակամարտությունը կլիմայի գլոբալ փոփոխության վրա:
- Ինչպե՞ս են հակամարտություններն ազդում բնակչության կենսամակարդակի վրա:

Հարցերի քննարկումից հետո կկազմակերպվի քննարկում:

Ակտիվություն 7. Հաղորդման սցենար.

Աշակերտները խմբում համաձայնության կգան, թե ինչպես ծանոթացնեն բնակչությանը և ինչպես բացատրեն, ելնելով աշխարհագրական հեռանկարից, որ նրանք հակամարտությունների հետևանքները ապագայում էլ ավելի սուր կզգան:
Կբացատրեն նաև դրանց պատճառները:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի ընթացքում ուսուցչի կողմից տրված հարցերը կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար. (տե՛ս հանձնարարական, էջ 34, հարցեր էջ. 33):

Դեպք (քեյս) 4. Դեպքի վերլուծություն

Հետսոցիալիստական հակամարտությունների պատճառը քաղաքական պայքարն էր։ Դրանցում որոշ քաղաքական ուժեր փորձում էին և փորձում են պահպանել այն երկրների տարածքային ամբողջականությունը, որոնք ղեկավարում էին, իսկ որոշները՝ ձգտում են անկախ պետություններ ձևավորել։ Նորանկախ պետություններն այն 15 ինքնիշխան երկրներն են, որոնք առաջացել են հետխորհրդային տարածքում 1991 թվականին Խորհրդային Միության փլուզումից հետո։

Այս հակամարտությունների չլուծման արդյունքը ինքնահռչակ, չճանաչված հետխորհրդային՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստր-Մոլդովայի, Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունների գոյությունն է։

2022 թվականի փետրվարի 24-ի առավոտյան Ռուսաստանը լայնամասշտաբ պատերազմ սկսեց Ուկրաինայում։ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Դոնբասի և Լուգանսկի անջատողական տարածաշրջանները պաշտպանելու պատրվակով, հայտարարել է Ուկրաինայում «ռազմական գործողություն» սկսելու մասին։ Նա ուկրաինացի զինվորներին կոչ է արել վայր դնել զենքերը։ Ռուսաստանը հրթիռային հարձակումներ է իրականացրել Ուկրաինայի վրա, այդ թվում՝ մայրաքաղաք Կիևի մոտակայքում։ Արևմտյան երկրները դատապարտել են Ուկրաինայի վրա հարձակումը։ Ուկրաինայի դեմ վարած պատերազմն արդեն իսկ հազարավոր մարդկանց զոհվելու պատճառ է դարձել և մեծ տնտեսական վնաս է հասցրել ողջ աշխարհին։

Աղբյուր. Աշակերտի գիրք, էջ 304

Համալիր առաջադրանք 3

Թեմա. Գլոբալ քաղաքական մարտահրավերերը և փոփոխությունները
Հարցը. Խաղաղության պարկը Վրաստանում՝ միջպետական հակամարտությունների կարգավորման կայուն միջոց (անվտանգություն, խաղաղության պահպանություն)

Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ: **Ենթահասկացություն.** նոոոլորտ, պահպանվող տարածքներ: **Ենթահարց.** «Կանաչ գոտի», Խաղաղության պարկ

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը: **Ենթահասկացություն.** բնակչության կառուցվածքը, բնակչության կենսամակարդակ: **Ենթահարց.** Խաղաղության ինդեքս, Բնակչության գործունեությունը, Ապառազմականացում, Ռազմականացում:

Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում. **Ենթահասկացություն.** Հասարակություն, բնակչության անվտանգությունը և կենսամակարդակը: **Ենթահարց.** Աշխարհագրական հիմնախնդիրներ, ապառազմականացված գոտի:

Հանգուցային հարց. Նախագծում ինչպե՞ս ցուցաբերեմ խաղաղության պարկի կարևորությունը միջպետական հակամարտության կարգավորման և բնապահպանական ուղղությամբ:

Համալիր առաջադրանքի պայմանը

Խաղաղության պարկերի գաղափարը, որը ենթադրում է սահմանամերձ պահպանվող տարածքների համատեղ կառավարում, պետությունների միջև համագործակցությունը բարելավելու նպատակով, մտահղացվել է դեռևս 19-րդ դարից: Ժամանակակից աշխարհի քարտեզի վրա արդեն 100-ից ավելի խաղաղության պարկ կա:

Պատկերացրո՛ւ, որ դու «Բնության պահպանման միջազգային միություն» միջազգային կազմակերպության ներկայացուցիչ ես Վրաստանից: Քո նպատակն է ուսումնասիրել երկրների փորձը, ընտրել Վրաստանի սահմանամերձ գոտում գտնվող տարածք և պատրաստել Խաղաղության պարկի նախագիծ:

Նախագծում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչպես է բնական միջավայրն ազդում Վրաստանի անվտանգության և աշխարհաքաղաքական գործընթացների վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1, 2)**
- Ինչ ազդեցություն կունենա պետական խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի սահմանամերձ գոտում ապրող բնակչության առօրյայի վրա, և ինչպես կփոխվի նրանց կյանքի որակը: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1, 2)**
- Ինչպես կանդրադառնա Խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի կայուն զարգացման վրա տեղական և գլոբալ մակարդակներում: **(Կայուն զարգացում կ.պ.1, 2)**

Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.	**Գնահատման չափանիշ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
Աշխարհագրական թաղանթ 1. Աշխարհագրական թաղանթը կազմված է երկրոլորտներից (քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ), որոնք բնութագրվում են մի շարք օրինաչափություններով: 2. Մարդկանց շնորհիվ ձևավորվում է նոոոլորտ (մտքի ոլորտ), որն ազդում է այլ երկրոլորտների վրա: **Բնակչությունը և տնտեսությունը** 1. Բնական միջավայրն ազդում է բնակչության և տնտեսության վրա: Տարբեր երկրներում առաջատար է տնտեսության այս կամ այն ոլորտը, ինչը հանգեցնում է աշխատանքի աշխարհագրական բաշխման: 2. Բնակչության և տնտեսության կառուցվածքը, բաշխումը և դասավորությունը փոփոխական են ժամանակի և տարածության մեջ: 3. Պետությունն ազդում է երկրում ընթացող սոցիալ- տնտեսական գործընթացների վրա, ինչն արտացոլվում է նրա զարգացման մակարդակի վրա: **Կայուն զարգացում** 1. Տեղական գործունեություններին կարող են հետևել գլոբալ հետևանքներ: 2. Կայուն զարգացման նպատակների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական և բարեկեցություն) կատարումը էական նշանակություն ունի գալիք սերունդների բարեկեցության համար:	**Աշխարհագրական թաղանթ** • Կոնկրետ օրինակների վրա հիմնվելով՝ գիտակցել աշխարհագրական թաղանթի մեջ ընդգրկված երկրոլորտների և նոոլորտի փոխկապակցվածությունը: **(կ.պ.1,2)** **Բնակչությունը և տնտեսությունը** • Վերլուծել որևէ երկրի բնական միջավայրի ազդեցությունը բնակչության կյանքի ու կենցաղի, անվտանգության և կյանքի մակարդակի վրա: **(կ.պ. 1, 2)** • Վերլուծել պետության կողմից իրականացված միջոցառման նշանակությունը բնակչության անվտանգության և բարեկեցության համար: **(կ.պ. 3)** **Կայուն զարգացում** • Գիտակցել խաղաղության պարկերի ստեղծման կարևորությունը երկրի կայուն զարգացման և ապագա սերունդների բարեկեցության համար տեղական և գլոբալ մակարդակով: **(կ.պ. 1, 2)**	• Ինչպես է բնական միջավայրն ազդում Վրաստանի անվտանգության և աշխարհաքաղաքական գործընթացների վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1, 2)** • Ինչ ազդեցություն կունենա պետական խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի սահմանամերձ գոտում ապրող բնակչության առօրյայի վրա, և ինչպես կփոխվի նրանց կյանքի որակը: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1, 2)** • Ինչպես կանդրադառնա Խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի կայուն զարգացման վրա տեղական և գլոբալ մակարդակներում: **(Կայուն զարգացում կ.պ.1, 2)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում

Ռեսուրսներ/քննարկվելիք դեպքեր (քեյսեր).

1. Դասագիրք. Աշխարհագրություն XI դասարան, Պարագրաֆ 13. Անվտանգություն, խաղաղության պահպանում
2. Ինչպես գրենք դասարանական նախագիծ. http://mastsavlebeli.ge/?p=22050
3. Բնության պահպանության միջազգային միություն. https://www.iucn.org/
4. Խաղաղության պարկ։ Միջազգային հակամարտությունների կարգավորման կայուն ճանապարհ. https://sustainability.ge/peace-park/
5. 147 խաղաղության պարկ ամբողջ աշխարհում. http://peace.maripo.com/p_parks.htm
6. Խաղաղության պարկեր. https://www.peaceparks.org/
7. Համաշխարհային ժառանգության ցանկ. https://whc.unesco.org/en/list/
8. Ինտերակտիվ քարտեզ. https://www.visionofhumanity.org/maps/#/

Ռեսուրս 2
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 2-ի հիման վրա).

- Ինչպե՞ս ստեղծել նախագիծ:
- Ի՞նչ պետք է նկատի ունենանք նախագիծ պատրաստելիս:
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն նախագիծ պատրաստելիս:

Ռեսուրս 3,4
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 3, 4-ի հիման վրա).

- Ի՞նչ է խաղաղության պարկը։
- Ինչպե՞ս կարող է խաղաղության պարկը լուծել միջպետական հակամարտությունը։

Ռեսուրս 5, 6 և 7
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 5, 6 և 7-ի հիման վրա).

- Ինչպիսի՞ն է խաղաղության պարկերի աշխարհագրությունը։
- Ի՞նչ դեր են կատարել խաղաղության պարկերը երկրների միջև խաղաղության հաստատման գործընթացում։

Ռեսուրս 8.
Առաջարկվող ակտիվություն (կատարվում է Ռեսուրս 8-ի հիման վրա).

Կօգնի, որ ծանոթանաս աշխարհի երկրների գլոբալ խաղաղության ինդեքսի ցուցանիշին։

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.
Ենթահարց. Բնական միջավայրը կարևոր դեր է խաղում միջպետական խաղաղ գոյակցության առումով։

- Ի՞նչ ազդեցություն ունեն խաղաղության պարկերը բնակչության կյանքի ու կենցաղի վրա։
- Ինչպե՞ս են միջպետական խաղաղ գոյակցությունը և շրջակա միջավայրի պահպանությունն ազդում բնակչության բարեկեցության վրա։

Ենթահարց.Միջազգային համագործակցությունը և պետական որոշումները կարևոր դեր են կատարում գլոբալ աշխարհաքաղաքական խնդիրների լուծման գործընթացում։

- Ի՞նչ դեր են խաղում պետական որոշումները բնակչության անվտանգության պաշտպանության գործում։
- Ինչպե՞ս են կապված բնակչության անվտանգությունը և շրջակա միջավայրի պահպանությունը։

Համալիր առաջադրանք.

- Քո խոսքերով ձևակերպի՛ր, թե ինչին կվերաբերի այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատես մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք: Ցանկանու՞մ ես փոխել համալիր առաջադրանքի արդյունքը: Ինչո՞ւ:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա
Նպատակային հասկացություն. Աշխարհագրական թաղանթ
Ենթահասկացություն. նոոոլորտ, պաշտպանված տարածքներ
Ենթահարց. «Կանաչ գոտի», խաղաղության պարկ

Քայլ 1

- Ինչպես է բնական միջավայրն ազդում Վրաստանի անվտանգության և աշխարհաքաղաքական գործընթացների վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1, 2)**

Ակտիվություն 1. Դեպքի վերլուծության քննարկում.

Աշակերտները քննարկում են դասագրքում տրված Դեպքի վերլուծություն 5-ը (էջ 353) և պատասխանում են հարցերին.

1. Ի՞նչ դեր են կատարում աշխարհագրական դիրքը և բնական միջավայրը միջպետական զինված հակամարտությունների առաջացման մեջ:
2. Ի՞նչ է նշանակում «երկաթե վարագույր» տերմինը:

Ակտիվություն 2. Աշխատանք քարտեզի վրա.

Աշակերտները վերլուծում են դասագրքում տրված քարտեզը և պատասխանում հարցերին:

Օգտվելով նկ.14.12-ից (դասագիրք, էջ 335) և աշխարհի ֆիզիկական քարտեզից (Հավելված 1)՝ պետք է որոշեն.

1. Ո՞ր պետությունների տարածքներով է անցնում Եվրոպայի «կանաչ գոտու» յուրաքանչյուր մաս և ո՞ր աշխարհագրական գոտիներն է այն ընդգրկում:
2. Դատողությո՛ւն արա, թե ինչ մշակութային և բնապահպանական նշանակություն ունի Եվրոպայի «կանաչ գոտին», և ինչ դեր է կատարել խաղաղության հաստատման գործընթացում:
3. Դատողությո՛ւն արա, թե ինչպես ես հասկանում անգլիացի ռազմական պատմաբան և տեսաբան Բազիլ Հենրի Լիդելի Հարթի խոսքերը, որ «Խաղաղությունն է բոլոր պատերազմների նպատակը»:

Նպատակային հասկացություն. Բնակչությունը և տնտեսությունը
Ենթահասկացություն. Բնակչության կյանքի մակարդակը
Ենթահարց. Խաղաղության ինդեքսը, Բնակչության գործունեությունը, Ապառազմականացում, ռազմականացում

Քայլ 2

- Ինչ ազդեցություն կունենա պետական Խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի սահմանամերձ գոտում ապրող բնակչության առօրյայի վրա, և ինչպես կփոխվի նրանց կյանքի որակը: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ.1, 2)**

Ակտիվություն 3. Իրավիճակային խնդիր.

Ծանոթացի՛ր տեղեկություններին և պատասխանի՛ր հարցին.
Խաղաղության հարցերի նորվեգացի հետազոտող Յոհան Գալթունգը առաջ է քաշել բացասական և դրական խաղաղության հասկացությունները, ըստ որոնց բացասական խաղաղությունը պարզապես բռնության կանխումն է, իսկ դրական խաղաղությունն այնպիսի մեխանիզմների և կառույցների ստեղծումն է, որի ժամանակ հակամարտություններ կամ ընդհանրապես չեն առաջանում, կամ դրանք կարող են լուծվել վաղ փուլում:

Հարց.
Ինչ ես կարծում, ինչպիսի՞ բացասական և դրական խաղաղություն է գերակշռում ժամանակակից աշխարհում: Բե՛ր քո կարծիքը հաստատող օրինակներ:

Ակտիվություն 4. Դեպքի վերլուծության քննարկում և ինտերակտիվ քարտեզի վերլուծություն.

Կատարի՛ր դասագրքում տրված Դեպքի վերլուծությունը 1-ը (էջ 332), պատասխանի՛ր կից հարցերին, դրանց հիման վրա և http://tssts.visionofhumanitk.org/maps/#/ կայքի ինտերակտիվ քարտեզի օգտագործմամբ որոշի՛ր.

ա. Աշխարհի ամենախաղաղասեր և ոչ խաղաղասեր երկրների տասնյակը:
բ. Ինչպիսի՞ն է Վրաստանի վարկանիշը, մյուս երկրներից ո՞րն ունի նման ցուցանիշ, ինչպիսի՞ն է մեր երկրի ինդեքսի հարաբերակցությունը տարածաշրջանի երկրների ինդեքսի հետ և ըստ խաղաղության մակարդակի՝ ո՞ր խմբին է պատկանում նա:
գ. Դատողությո՛ւն արա, ըստ քեզ, ինչու է ռազմական ծախսերի «ծանրության կենտրոնը» տեղափոխվում Եվրոպայից և Հյուսիսային Ամերիկայից Ասիա մայրցամաք:

Ակտիվություն 5. Հիմնախնդիրների ծառ.

Ծանոթացի՛ր դասագրքի Դեպքի վերլուծություն 3-ին (էջ 342) և 4-ին (էջ 350), պատասխանի՛ր կից հարցերին և դատողությո՛ւն արա, թե ինչպես կարող է մարդ խուսափել կոնֆլիկտային իրավիճակներով հարուցված բացասական հետևանքներից:

Ստեղծի՛ր հիմնախնդիրների ծառ.



Ակտիվություն 6. Կազմել գրաֆիկական կազմակերպիչ «Հաջորդականության շղթա».

Բացատրի՛ր, թե ինչպես է անդրադառնում խաղաղության պարկերի գոյությունը շրջակա միջավայրի և այս տարածքում ապրող մարդկանց կյանքի, առօրյայի ու գործունեության վրա և ստեղծի՛ր հաջորդականության շղթա:



Նպատակային հասկացություն. Կայուն զարգացում
Ենթահասկացություն. Հասարակություն, բնակչության անվտանգությունն ու կենսամակարդակը
Ենթահարց. Աշխարհաքաղաքական հիմնախնդիրներ, ապառազմականացված գոտի

Քայլ 3

Ինչպես կանդրադառնա խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի կայուն զարգացման վրա տեղական և գլոբալ մակարդակներում: **(Կայուն զարգացում կ.պ.1, 2)**

Ակտիվություն 1. Դերային խաղ. Խաղաղության պահապան.

Աշակերտները ստանձնում են խաղաղության պահապանի դեր և ստեղծում ուղերձ (կարգախոս) աշխարհի համար:
Աշակերտները ծանոթանում են դասագրքի տեղեկություններին, այդ թվում՝ խաղաղության մասին ներդիրներին (էջ 335 և 348) և պատասխանում են հարցերին.

ա. Ըստ գերմանացի քահանա, պրոֆեսոր, աստվածաբան և եկեղեցու բարեփոխիչ Մարտին Լյութերի՝ «Խաղաղությունը բոլոր արդարություններից ավելի կարևոր է»: Համաձա՞յն ես արդյոք այս կարծիքի հետ: Ինչ ես կարծում, ինչո՞ւ է Մարտին Լյութերը համեմատել խաղաղությունն ու արդարությունն իրար հետ:
բ. Ի՞նչ դեր է խաղում միջազգային համագործակցությունը գլոբալ աշխարհաքաղաքական խնդիրների լուծման գործընթացում:
գ. Կայքում՝ http://georgia.un.org/ka/shdgs, ծանոթացի՛ր կայուն զարգացման նպատակներին և բացատրի՛ր. որո՞նց հետ է կապվում խաղաղության և անվտանգության խնդիրը:
դ. Ի՞նչ կարող ես անել Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:
ե. ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Պան Գի Մունը Խաղաղության միջազգային օրվան (սեպտեմբերի 21) նվիրված իր ելույթում նշել է, որ «այժմ այն ժամանակն է, երբ մարդիկ պետք է մտածեն պատերազմի սարսափների և հակամարտությունների խաղաղ ճանապարհով կարգավորման անհրաժեշտության մասին»: Ո՞րն է այս օրվան նվիրված քո ուղերձը համաշխարհային հանրությանը:

Ակտիվություն 2. Խնդիրի լուծում.

- Ինչ ես կարծում, որքանո՞վ արդիական է մեր տարածաշրջանում, Վրաստանում և նրա սահմանակից երկրներում խաղաղության պարկերի հիմնումը: Ի՞նչ ռեսուրսներ և ներուժ ունի մեր երկիրը դրանք ստեղծելու համար: Որտե՞ղ կհիմնեիր նման պարկեր և ինչո՞ւ:
- Ինչպե՞ս կարող է մարդը խուսափել հակամարտությունների պատճառով առաջացած բացասական հետևանքներից:
- Որո՞նք են խաղաղության պարկերի առավելությունները ապառազմականացված գոտիների համեմատ:

Վենների դիագրամի նմուշ.



Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի ընթացքում ուսուցչի կողմից տրված հարցերը կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար. (տե՛ս հանձնարարական, էջ 34, հարցեր էջ. 33):

Դեպք (քեյս) 6. Դեպքի վերլուծություն

Աշխարհում, որը ծանրաբեռնված է հակամարտություններով և վեճերով, խաղաղությունը ապագայի անկյունաքարերից մեկն է: «Խաղաղության պարկերն այս գործընթացի կառուցվածքային միավորներն են ոչ միայն մեր տարածաշրջանում, այլև ապագայում ամբողջ աշխարհում», – Նելսոն Մանդելա:

Էկվադոր-Պերու հակամարտության «կանաչ» ավարտը

Էկվադորի և Պերուի միջև Կորդիլերա դել Կոնդորի լեռնային շրջանում սահմանային վեճը շարունակվում էր տասնամյակներ: Կենսաբազմազանությամբ հարուստ այս տարածաշրջանը վեճի առարկա էր դարձել դեռևս XIX դարում և երկար տարիների դիմակայություններից հետո՝ 1995 թվականին, այս երկու երկրների միջև վեճը վերածվել է հակամարտության: Միացյալ Նահանգները, Արգենտինան, Բրազիլիան և Չիլին փորձում էին հասնել խաղաղության համաձայնության:

Կորդիլերա դել Կոնդորի



Նրանից հետո, երբ պետությունները չեն կարողացել պայմանավորվել սահմանի սահմանազատման հարցում, ԱՄՆ այն ժամանակվա նախագահ Բիլ Քլինթոնը անձամբ է հորդորել Էկվադորի և Պերուի առաջնորդներին պայմանավորվել սահմանային գծի և անտառածածկ տարածքի պահպանման շուրջ: Իրոք, նրանք այս վայրը բնության պահպանության գոտի են հռչակել, և ինչպես Էկվադորը, այնպես էլ Պերուն առաջին անգամ այնտեղ սկզբից հիմնել են պահպանության միջանցք, իսկ 2004 թվականին այն վերածել են խաղաղության պարկի: Ավելի ուշ բնապահպան հասարակական կազմակերպությունների օգնությամբ նրանք կարողացել են ստեղծել ընդհանուր բնապահպանական կառավարման համակարգ, որը հակամարտության բնապահպանական կայուն լուծումներով կարգավորման հետ մեկտեղ էլ ավելի է ամրապնդել միջպետական բարիդրացիական հարաբերությունները: Ներկայումս Էկվադորի և Պերուի ընդհանուր սահմանին գտնվող Կորդիլերա դել Կոնդորի լեռնային համակարգի շուրջը գտնվող տարածքը համարվում է խաղաղության պարկի հաջողված օրինակ:

Աղբյուր՝ Աշակերտի գիրք, էջ 353:

7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Գլոբալացումը և գլոբալ հիմնախնդիրները

Ի՞նչ է գլոբալացումը:

Գլոբալացումը օբյեկտիվ, անշրջելի և պատմական-տրամաբանական գործընթաց է, որն ընդգրկում է հասարակական գործունեության բոլոր ոլորտները: Գլոբալացման համընդհանուր համաձայնեցված սահմանում չկա: Այս հարցի վերաբերյալ գիտնականների կարծիքները տարբեր են: Օրինակ, հասարակական գիտությունների ներկայացուցիչները քննարկում են գլոբալացման ազդեցությունը քաղաքական, սոցիալական, բնապահպանական, պատմական, աշխարհագրական և մշակութային ոլորտների վրա: Տնտեսագետները գլոբալացման մեջ նկատի ունեն ապրանքների, կապիտալի և աշխատաշուկաների միջազգային ինտեգրումը: Հարկ է նշել, որ «գլոբալացում» տերմինն ի սկզբանե միայն տնտեսական նշանակություն ուներ: Հետագայում այն ձեռք բերեց ավելի լայն իմաստ և «առանց սահման աշխարհ» արտահայտող հասկացության իմաստ է ձեռք բերել:

Գլոբալացումը համաշխարհային տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ինտեգրման և միավորման գործընթաց է: Դա նպաստում է աշխարհի «սերտացմանը», խախտում է ազգային սահմանները, մերձեցնում է տարբեր ազգային տնտեսությունները, մշակույթները, տեխնոլոգիաները, կառավարումը, արտադրությունը և մեծացնում է դրանց փոխկախվածության աստիճանը: Ըստ պարզ սահմանման՝ գլոբալացում նշանակում է մեկ երկրում տեղի ունեցող փոփոխությունների անդրադառնալը այլ պետությունների վրա, ինչը նրանց փոխկախվածության և փոխկապակցվածության հետևանք է:



Գլոբալացման զարգացման հիմնական պատճառները

Գլոբալացման գործընթացն ամենից սուր դրսևորվել է տնտեսության ոլորտում:

Չնայած նրան, որ տնտեսական ինտեգրումը գլոբալացման կարևորագույն բնութագրիչն է, հստակորեն ընդգծվում են դրա սոցիալական, մշակութային, քաղաքական և ինստիտուցիոնալ և այլ կարևոր ուղղություններ: Ըստ այդմ, առանձնանցում են գլոբալացման 4 տեսակ. շատ կարևոր է հասկանալ դրանց բովանդակությունը, քանի որ այսօրվա աշխարհը աննախադեպ արագությամբ նկրտում է դեպի ինտեգրում:

Տնտեսական
- Աշխատանքի համաշխարհային բաժանում:
- Միջազգային տնտեսական կազմակերպությունների առաջացում (օրինակ՝ IMF, WTO):
- Անդրազգային ընկերությունների առաջացում (Toyota, Google, Samsung):

Սոցիալական
- Սոցիալական նորմերի միավորում տարբեր երկրներում:
- Քաղաքացիական հասարակության ձևավորում տարբեր երկրներում:

Քաղաքական
- Պետական ինքնիշխանության թուլացում:
- Միջազգային ռազմաքաղաքական կազմակերպությունների (ՆԱՏՕ, CSTO) դերի հզորացում:
- Ժողովրդավարության գլոբալացում:

Մշակութային
- Ինտերնետի զարգացում:
- Միջազգային հաղորդակցության լեզվի առաջացում (անգլերեն):
- Ճաշակի և նախապատվությունների միավորում (կոկո-կոլա, ինստեգրամ):
- Տարբեր երկրների մշակույթների և կենսակերպի ծանոթացում:

Գլոբալացման տեսակները

Գլոբալացման հիմնական արդյունքը աշխատանքի միջազգային բաժանումն է, կապիտալի, աշխատանքային և արտադրական ռեսուրսների միգրացիան ամբողջ մոլորակի մասշտաբով, օրենսդրության տնտեսական և տեխնոլոգիական գործընթացների միասնականացումը, տարբեր երկրների մշակույթների մերձեցումն ու միաձուլումը:

Գլոբալացման թեմայի ժողովրդականությունը գալիս է XX դարի 90-ական թվականներից: Շատ գիտնականներ փորձում էին գտնել ժամանակակից գլոբալացման և նրա պատմական անալոգների ընդհանուր հատկանիշները, հետևաբար, գլոբալացման ծագման վերաբերյալ տեսակետները տարբեր են. պատմաբանները դա համարում են կապիտալիզմի զարգացման մի փուլ, տնտեսագետները հաշվարկը սկսում են անդրազգային ֆինանսական շուկաների ծագման ժամանակվանից, քաղաքագետները հիմնական պատճառ են անվանում ժողովրդավարական կազմակերպությունների տարածումը, մշակութաբանները գլոբալացման դրսևորումը կապում են մշակույթի արևմտականացման, այդ թվում՝ ամերիկյան տնտեսական էքսպանսիայի հետ:

Գլոբալացման արդյունքում աշխարհի երկրներն ավելի ու ավելի են կապվում միմյանց հետ և ստեղծում է ընդհանուր գլոբալ պատկեր:

Օրինակ 1

Գլոբալացման պատմական դեպքերը տեղի էին ունենում XIX դարի երկրորդ կեսի իմպերիալիստական պետությունների դիմակայության ժամանակ, սակայն գլոբալացման վաղ ձևեր գոյություն են ունեցել նաև հին աշխարհում: Եթե հիշենք հունական գաղութացումը. այս գործընթացը ազատ կարելի է անվանել գլոբալացում: Հույներն այլ երկրներում տարածում և ներդնում էին իրենց մշակույթը: Ինչպես նաև, դարեր շարունակ վաճառականները ճանապարհորդում էին, հետևաբար, տեղի էր ունենում համաշխարհային կապիտալի շրջանառություն:

Գլոբալացման օրինակներ են Հռոմեական կայսրությունը, Պարթևստանը, Հան դինաստիան: Վերջինիս իշխանության ժամանակահատվածում է տեղի ունեցել «Մետաքսի ճանապարհի» «առաջխաղացումը»: Հարկ է նշել նաև «Իսլամի ոսկե դարը»՝ մուսուլման վաճառականները կարողացան ապրանքները և գիտելիքը գլոբալացնել: Մոնղոլական կայսրությունում մեծ նշանակություն է շնորհվել մետաքսի ճանապարհին:

Գլոբալացման առաջին ալիքը, որը պայմանավորող պատճառը տրանսպորտի զարգացումն ու առևտրային խոչընդոտների նվազեցումն էր, շարունակվել է 1870 թվականից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Առևտրի ծաղկման արդյունքում աշխարհի եկամուտի մեջ արտահանումից ստացվող բաժնեմասը կրկնապատկվել է՝ հասնելով 8%-ի: Այս գործընթացները հանգեցրել են մարդկանց զանգվածային գաղթի: Աշխարհի բնակչության մոտ 10%-ը ավելի լավ աշխատանքի որոնման մեջ այլ երկրներ է տեղափոխվել: 60 միլիոն մարդ Եվրոպայից Հյուսիսային Ամերիկա և Նոր աշխարհի տարբեր կողմեր է ուղևորվել: Նույնը տեղի է ունեցել խիտ բնակեցված Չինաստանում և Հնդկաստանում, որտեղից մարդիկ ճանապարհորդում էին ավելի քիչ բնակեցված երկրներ, ինչպիսիք են Շրի Լանկան, Մյանմարը, Թաիլանդը, Ֆիլիպինները և Վիետնամը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսվել է գլոբալացման երկրորդ ալիքը, և տևել մոտավորապես մինչև1950-80 թվականները: Սա հիմնականում դրսևորվել է Ճապոնիայի, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների ինտեգրմամբ, որոնք վերականգնել են իրենց առևտրային հարաբերությունները: Այս շրջանում եկել է երկրների տնտեսական զարգացման դարաշրջանը, որը դարձել է բարձր որակավորում ունեցող աշխատուժով առևտրի ծաղկման պատճառներից մեկը: Սակայն, զարգացող երկրները դուրս են մնացել ինտեգրման այս ալիքից, քանի որ նրանք հիմնականում կարող էին միայն հումքի առևտուր անել:

1980 թվականին գլոբալացման նորագույն ալիքն առաջացրել է տրանսպորտային և կապի տեխնոլոգիաների ձեռքբերումների համադրությունը: Կարևոր դեր են կատարել այն զարգացող մեծ երկրների գործողությունները, որոնք տնտեսության հզորացման համար փորձում էին օտարերկրյա ներդրումներ ներգրավել:

Գլոբալացումն ընդհանուր առմամբ հսկայական օգուտներ է բերում երկրներին և բնակչությանը: Այն բարելավում է արտադրողականությունը, օգնում գիտելիքի և նոր տեխնոլոգիաների տարածմանը, հղկում սպառողների ընտրության շրջանակը: Գլոբալացման արդյունքում երկրները, տարածաշրջանները, մայրցամաքներն այնքան սերտորեն են կապված միմյանց հետ, որ աշխարհը ձեռք է բերել «փոքր գյուղի» հատկանիշներ:

Կան մարդկանց որոշակի խմբեր, որոնք դիմադրում են գլոբալացման բնույթին: Նման խմբերը բավականին ամուր փաստարկներ են ներկայացնում, որոնցից ամենակարևորը երկրների միջև անհավասարության խնդիրն է:

Օրինակ 2

Գլոբալացման տեսության հիմնադիրները

Գլոբալացման տեսության հիմնադիրը բրիտանացի սոցիոլոգ Մարտին Էլբրոուն է:

Նա առաջին հետազոտողներից է, ով ձևավորել է գլոբալացման հայեցակարգը:

Ըստ Էլբրոուի սահմանման, «Գլոբալացումն արտացոլում է այն բոլոր գործընթացները, որոնց միջոցով աշխարհի ժողովուրդները միավորվում են մեկ համաշխարհային, այսինքն՝ գլոբալ հասարակության մեջ»:

Մարտին Էլբրոուն «Չինաստանի դերը մարդկության ընդհանուր ճակատագիր ունեցող հասարակության մեջ» գրքի հեղինակն է, որում նա նոր գաղափարներ ու կարծիքներ է հաղորդում Չինաստանի և գալիք համաշխարհային աշխարհում նրա դերի մասին:

Գերմանացի սոցիոլոգ և փիլիսոփա, Մյունխենի համալսարանի և Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի պրոֆեսոր Ուլրիխ Բեկի ուսումնասիրության առարկան ժամանակակից գլոբալացումն է: Նա գլոբալացման մեջ նկատի ունի մի երևույթ, որի ընթացքում համաշխարհային շուկան սահմանափակում կամ նույնիսկ փոխում է քաղաքական գործողությունը: Այս առումով, գլոբալացման քաղաքական և տնտեսական ասպեկտները ենթակա են համաշխարհային շուկային: Բեկի կարծիքով՝ գլոբալացումն այնպիսի գործընթաց է կամ գործընթացների ամբողջություն, որի ժամանակ ազգային պետություններին և նրանց ինքնիշխանությունը ծածկում են անդրազգային ընկերությունները:

Որո՞նք են գլոբալ խնդիրները:

Գլոբալացման սահմանումների մեջ ուշադրությունը կենտրոնացնում են նրա այս կամ այն արդյունքի, այլ ոչ թե՝ հենց գործընթացի էության վրա: Տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ փորձում են գլոբալացման սահմանման մեջ համապատասխան ասպեկտներ ներկայացնել: Գլոբալացումը միջառարկայական երևույթ և, հետևաբար, դրա ընդհանուր սահմանման ձևակերպումը պահանջում է այս գործընթացի նկատմամբ ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական, քաղաքական թե այլ տեսանկյունից մոտեցում:

Գլոբալացման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ այն ընդհանուր խնդիրները, որոնք կանգնած են մարդկության առջև: Այս առումով գլոբալացումը նշանակում է ընդհանուր, բովանդակությամբ նման խնդիրների (օրինակ՝ բնապահպանական, պարենային, ժողովրդագրական, միգրացիոն, առողջապահական և այլ) առաջացում աշխարհի տարբեր տարածաշրջաններում, պետությունների մշտական փոխադարձ սոցիալ-տնտեսական կախվածություն և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտների ձևավորում:

Աշխարհում ընթացող բազմակողմանի գլոբալացման պայմաններում մարդկության առջև ծառացած են գլոբալ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է համաշխարհային մասշտաբով համագործակցության խորացում, բոլոր երկրների և մարդկանց համատեղ գործողություններ: Դա էլ ավելի կնպաստի գլոբալացման գործընթացին, ինչի արդյունքում այն անշրջելի բնույթ ձեռք կբերի:

Գլոբալ խնդիրները ներառում են այնպիսի հրատապ հարցեր, ինչպիսիք են համաշխարհային հանրությունը և երկրների միջև հարաբերությունները, բնության և մարդկանց միջև փոխհարաբերությունները, ռացիոնալ բնօգտագործումը և շրջակա միջավայրի պահպանությունը, ռեսուրսապահովման համատեղ լուծումը և այլն: Գլոբալ խնդիրները բաժանվում են չորս հիմնական խմբերի.

ՔԱՂԱՔԱԿԱՆ	ՏՆՏԵՍԱԿԱՆ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ	ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
Պատերազմ և խաղաղություն, ապառազմականացում, ահաբեկչություն, հակամարտություններ:	Զարգացման ցածր մակարդակ, պարենային, կենսամակարդակ և որակ, ռեսուրսների սպառում:	Ժողովրդագրական, առողջապահություն, կրթություն, էթնիկական, մշակութային:	Միջավայրի յուրացում, մթնոլորտի, ջրոլորտի, ներքնոլորտի պահպանություն, համաշխարհային օվկիանոսի, ափամերձ գծի և լեռնային տարածքի յուրացում և պահպանություն, բնական և տեխնածին աղետներ:

Արդիականության կարևորագույն հիմնախնդիրները

Գլոբալ հիմնախնդիրներն ըստ բնույթի տարբեր են, բայց դրանք բոլորն էլ տոգորված են մարդկության աշխարհագրական միասնության և դրա գոյատևման գաղափարով:

Գլոբալ խնդիրները սերտորեն փոխկապակցված են, և դրանք կազմում են մի ամբողջ «շղթա»: Անհնար է մեկ որևէ խնդիր լուծել առանց մյուսի և այլն:

Օրինակ 3

Յուրաքանչյուր գլոբալ խնդիր բնութագրվում է որոշակի բովանդակությամբ, բայց դրանք սերտորեն կապված են միմյանց հետ, օրինակ՝ էներգետիկական և հումքի խնդիրը՝ էկոլոգիականի, էկոլոգիականը՝ ժողովրդագրականի, ժողովրդագրականը՝ պարենայինի և այլն: Բացի այդ, նրանցից յուրաքանչյուրն իր հերթին համատեղում է այլ, համեմատաբար «փոքր» խնդիրներ: Օրինակ՝ էկոլոգիականում կարելի է առանձնացնել անապատացումը, անտառահատումը, ջրոլորտի և մթնոլորտի աղտոտվածությունը և այլն: Ժողովրդագրական խնդրի շրջանակներում առանձնացվում են ժողովրդագրական պայթյունը և ժողովրդագրական ճգնաժամը, անվերահսկելի ուրբանիզացիան, փախստականների և աշխատանքային միգրացիան և այլն:

ՄԱԿ-ի անդամ երկրները 2015 թվականի սեպտեմբերի 25-27-ին Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած Կայուն զարգացման գագաթնաժողովում հաստատվել են Կայուն զարգացման նպատակները: Կայուն զարգացման նոր գործողությունների ծրագիրը ներառում է 17 նպատակ և 169 խնդիր: Համաձայնագրի մասնակից բոլոր 193 պետություններն առաջիկա 15 տարիների ընթացքում պետք է բարեփոխումներ իրականացնեն Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Կայուն զարգացման նպատակները համաշխարհային ռազմավարություն են, որը վերաբերում է ողջ աշխարհին՝ և՛ զարգացող, և՛ զարգացած երկրներին: Կայուն զարգացման նպատակները ոչ թե միմյանցից անկախ պետք է իրականացվեն, այլ համատեղ, համաձայնեցված: Դրանք լրացնում են միմյանց, անմիջականորեն առնչվում և հավասարակշռում են կայուն զարգացման բոլոր երեք ուղղությունները՝ տնտեսական աճը, սոցիալական ներառումը և շրջակա միջավայրի պահպանությունը:



Գլոբալ հիմնախնդիրները և կայուն զարգացման նպատակները

Օրինակ 4

Համաշխարհային տնտեսական ֆորում

Համաշխարհային տնտեսական ֆորումը (WEF) միջազգային ոչ կառավարական և լոբբինգով զբաղվող կազմակերպություն է, որը 1971 թվականի հունվարի 24-ին հիմնադրել է գերմանացի ինժեներ և տնտեսագետ Կլաուս Շվաբը Շվեյցարիայի Ժնև կանտոնի գաղութում:

Համաշխարհային տնտեսական ֆորումը ամենահեղինակավոր միջազգային կազմակերպությունն է, որն անդրադառնում է արդիականության գլոբալ խնդիրներին, այդ թվում աշխարհաքաղաքականին: Ֆորումի անդամ են շուրջ 1000 խոշոր ընկերություններ և կազմակերպություններ տարբեր երկրներից: Կազմակերպության հանդիպումներն անցկացվում է շվեյցարական հանգստավայր Դավոսում, որտեղ ամեն տարի հավաքվում է աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային էլիտան:

Ֆորումը մեզ առաջարկում է այնպիսի գլոբալացված աշխարհի մոդել, որը լավագույնս կառավարում է անդրազգային ընկերությունների, կառավարությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ընտրված կոալիցիան, ինչն արտահայտվում է այնպիսի նախաձեռնություններով, ինչպիսիք են «Մեծ զերաբեռնումը» և «Գլոբալ փոխակերպումը»: Ֆորումը համաշխարհային անկայունության ժամանակաշրջանները, օրինակ՝ 2007-2008 թվականների ֆինանսական ճգնաժամը և Covid-19-ի համավարակը, համարում է ծրագրային ջանքերի հզորացման հնարավորություն:

WORLD ECONOMIC FORUM

https://www.weforum.org/

Եթե ցանկանում ես ավելին իմանալ Տնտեսական ֆորումի մասին, այցելի՛ր կայք.

Ի՞նչ միտումներով է առանձնանում XXI դարը:

XXI դարում մարդկությունը տեղափոխվել է զարգացման որակապես նոր փուլ, որը բնութագրվում է այնպիսի աշխարհաքաղաքական փոխակերպումներով, ինչպիսիք են՝ գլոբալացումը, թվայնացումը, համաշխարհային տնտեսության տեղեկատվականացումը և ինտեգրումը, կրոնական և էթնիկ հակամարտությունները: Այս գործընթացներն ազդում են պետության գործունեության բոլոր

ասպեկտների, միջազգային հարաբերությունների, տնտեսական և սոցիալական ոլորտների, անվտանգության, մշակույթի և էկոլոգիայի հարցերի վրա։

XXI դարի ամենակարևոր աշխարհաքաղաքական միտումներից առանձնացնում են.

- Գլոբալացման այնպիսի երկու հիմնական հետևանքների դրսևորումը, ինչպիսիք են՝ արդիականության գլոբալ խնդիրների սրվելը (ահաբեկչական սպառնալիքների աճ,տարածաշրջանային հակամարտությունների գոտու ընդլայնում, անջատողականություն, էթնոկրոնական ծայրահեղականություն, բնապահպանական խնդիրների սրում, շրջակա միջավայրի դեգրադացում և այլն) և գոյություն ունեցող աշխարհի բաժանումը բարգավաճ, առաջադեմ փոքրամասնության (զարգացած երկրներ՝ Հյուսիս) և ցածր սոցիալական բարեկեցության մեծամասնության (զարգացող երկրներ՝ Հարավ)։
- Համաշխարհային տնտեսության կառուցվածքի արմատական փոփոխությունը դեպի բազմաբևեռություն, որը տեղի է ունենում նոր ուժային կենտրոնների առաջացման ու հզորացման ֆոնին։ Ասիա-Խաղաղօվկիանոսյան, Լատինական Ամերիկայի տարածաշրջանների և Եվրամիության դերը միաժամանակ աճում է։
- Համաշխարհային քաղաքականության ձևավորման վրա տնտեսական գործոնների, առաջին հերթին էներգետիկայի, ազդեցության կտրուկ աճը և էներգետիկայի վերածվելը աշխարհաքաղաքական գործընթացների հիմնական բաղադրիչների մեկի, տնտեսական գործընթացների տեղափոխումը համաշխարհային քաղաքականության կենտրոն։
- Ազգային, էթնիկ և դավանանքային հակամարտությունների սրման և դրա հետևանքով միջազգային կազմակերպությունների դերի բարձրացումը դրանց գործնական լուծման գործում։
- Տարածքի վիրտուալացման միտումը, որն աշխարհի աշխարհաքաղաքական պատկերի այնպիսի առանձնահատուկ չափում է ստեղծում, որտեղ հիմնական գործընթացները տեղափոխվում են գլոբալ համակարգչային ցանց։

Աշխարհաքաղաքական նոր տեղեկատվական պարադիգմի համաձայն, XXI դարում պետությունների միջև փոխհարաբերությունների հեռանկարները, առաջին հերթին, սահմանվում են վիրտուալ տարածքում տեղեկատվական առավելությամբ։

Աշխարհում աշխարհաքաղաքական գործընթացների զարգացման ամենաազդեցիկ մասնակիցներ են չորս տարածաշրջաններ՝ Եվրոպական, Ասիական-Խաղաղօվկիանոսյան, Լատինաամերիկյան և Ամերիկայի Միացյալ Նահանգների։

Վրաստանը, ինչպես մյուս երկրները, գտնվում է գլոբալացման ընդհանուր տարածության մեջ և աստիճանաբար տեղ է զբաղեցնում՝ ելնելով իր աշխարհաքաղաքական իրավիճակից։

Մեր երկիրը աշխարհի շատ երկրների հետ ունի տնտեսական և այլ տիպի համագործակցություն։

Քաղաքական և տնտեսական գլոբալացում

Ի՞նչ է քաղաքական գլոբալացումը:

XXI դարում գլոբալացումն ընդգրկել է ամբողջ աշխարհը և այն տարածվել է բոլոր ոլորտներում և պետություններում (բացի Հյուսիսային Կորեայից):

Ժամանակակից քաղաքական կյանքում էական և առանցքային դեր են խաղում անկախ պետությունները: Նրանք մեզ ներկայանում են որպես համաշխարհային քաղաքականության որոշիչ սուբյեկտներ, իսկ դրանցից մի քանիսը «քաղաքական եղանակ» են ստեղծում: Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած պետությունների ղեկավարները Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսներում հաստատել են աշխարհի «նոր» կազմակերպման սկզբունքները: Հաստատվեց «նոր» աշխարհակարգ, որի արդյունքում աշխարհի քաղաքական զարգացման կենտրոնը տեղափոխվեց Արևմտյան Եվրոպայից դուրս և ստեղծվեց քաղաքական ազդեցության երկու նոր բևեռներ՝ ԱՄՆ և Խորհրդային Միություն: Նրանց միջև գոյություն ունեցած հակասությունն ու այսպես կոչված «սառը պատերազմը» առաջացրին երկբևեռ աշխարհ:

Քաղաքական գլոբալացման գործընթացում անհրաժեշտություն առաջացավ միջազգային կազմակերպություններ ստեղծել, ինչն աշխարհում կապահովեր քաղաքական կայունություն: Այս գործընթացը սկսվել է 1945 թվականին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո, և ստեղծվեցին մի շարք միջազգային կազմակերպություններ՝ ՄԱԿ, ՆԱՏՕ, Եվրամիություն, Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն: Միջազգային կազմակերպությունները փորձում են աշխարհում ստեղծել առանց ամենայն բռնության խաղաղ միջավայր:

Քաղաքական գլոբալացումը մի գործընթաց է, որը տեղի է ունենում միջազգային կազմակերպություն-ների օգնությամբ, որոնք հոգ են տանում աշխարհում խաղաղությունն ու բարգավաճումը պահպանելու համար:

Քաղաքական գլոբալացման լավագույն օրինակը Եվրամիությունն է, որի անդամ պետություններն ունեն ընդհանուր քաղաքական մտածողություն ու իրավունք: Եվրամիության գաղափարախոսության համաձայն՝ Եվրոպան մեկ քաղաքական միավոր է՝ չնայած իր լեզվական կամ մշակութային տարբերություններին: Կազմակերպության անդամ երկրներն ընդունում են, որ «ուժը միասնության մեջ է», հետևաբար, նրանք չեն խանգարում միմյանց առաջադիմել ու ամրապնդվել: Բացի այդ, չի նվազում երկրների ազատությունն ու ինքնիշխանությունը: Ընդհակառակը, Եվրամիությանն անդամակցելը նրանց հնարավորություն է տվել ձևավորվել որպես աշխարհի քաղաքական և տնտեսական առաջատարներ:

XX դարի 80-ականների երկրորդ կեսից, մասնավորապես՝ Խորհրդային Միության նոր իշխանության կողմից իրականացվող կուրսի՝ այսպես կոչված «Պերեստրոյկայի» (Վերակառուցում) հետևանքով իրավիճակը փոխվեց՝ սոցիալական համակարգը փլուզվեց և ավարտվեց «սառը պատերազմը»:

Նկ. 12.1. ԱՄՆ նախագահ Ռոլանդ Ռեյգանի ու ԽՍՀՄ առաջին ու վերջին նախագահ Միխայիլ Գորբաչովի հանդիպումն անցկացվել է 1995 թվականին, և հենց նրանց համաձայնեցված կուրսի արդյունքում են տեղի է ունեցել կարևոր փոփոխություններն աշխարհում:

XX դարի 90-ականներից ի վեր աշխարհում սկսվում է գլոբալացման և ինտեգրման գործընթացների տարածումը, ինչը նպաստում է պետությունների ու ժողովուրդների մերձեցմանն ու նրանց համընդհանուր բարեկեցությանը: Ժամանակակից աշխարհում քաղաքական նոր կարգ է հաստատվում, և այն դեռ ձևավորման փուլում է: Երբեմն այն հիշատակում են որպես միաբևեռ աշխարհ, և այս միակ բևեռը հանդիսանում է գերտերություն ԱՄՆ-ը: Սակայն, կա նաև կարծիք, որ այսօրվա աշխարհը բազմաբևեռ է՝ մի քանի հզոր կենտրոններով (ԱՄՆ, Եվրամիություն, Ռուսաստան, Չինաստան, Ճապոնիա):

Քաղաքական գլոբալացման դրական հատկանիշներից է ազատ առևտուրը, ինչը նպաստում է արտահանման և ներմուծման աճին և կապիտալի շարժին:

Ժամանակակից աշխարհում գլոբալ քաղաքականությունը որոշակի ազդեցություն ունի ազգային պետությունների ինքնիշխանության վրա: Քաղաքական գլոբալացումը փոխակերպում է ժամանակակից աշխարհակարգը, ազգային պետականության հաստատված ձևերը և միջազգային քաղաքական կապերը: Գլոբալ քաղաքականությունը փոխում է ավանդական հարաբերությունը ներքին և արտաքին, ներպետական և միջազգային, տարածքային և ոչ տարածքային քաղաքականության միջև: Աշխարհի մեկ որևէ մասում կայացված քաղաքական որոշումները և ձեռնարկված գործողություններն արագ արտացոլվում են մնացած աշխարհի վրա: Քաղաքական կենտրոնները և դրանց կողմից իրականացված միջոցառումները, ժամանակակից հաղորդակցման միջոցների օգտագործմամբ, հնարավոր է վերածվեն համատեղ որոշումների, պայմանավորվածությունների և քաղաքական փոխազդեցությունների բարդ համակարգի: Ըստ այդմ, առաջացել է այնպիսի երևույթ, ինչպիսին «գլոբալ կառավարումն» է (Global Governance):

Գլոբալացման դարաշրջանում քաղաքական և տնտեսական որոշումների կայացման գործընթացում առանձնահատուկ դեր են կատարում «Մեծ յոթնյակը» և «Մեծ քսանյակը» Մեծ յոթնյակը (G7) աշխարհի յոթ առաջատար երկրների՝ Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Միացյալ Թագավորություն և Միացյալ Նահանգներ, ոչ պաշտոնական միավորում է: Խումբը ստեղծվել է 1975 թվականին 6 պետություններից, որոնց մեկ տարի անց միացել է Կանադան այն նպատակով, որ աշխարհի առաջատար ժողովրդավարական երկրները կարողանային քննարկել տնտեսական քաղաքականությունը՝ ընդհանուր բարգավաճման հասնելու համար: Եվրամիությունը G7-ի աշխատանքներին մասնակցում է 1977 թվականից:

Մեծ յոթնյակը 1998-2014 թվականներին կոչվում էր Մեծ ութնյակ (G8), քանի որ դրա անդամ էր նաև Ռուսաստանը: 2014 թվականին Ղրիմի բռնակցման պատճառով Ռուսաստանը հեռացվեց խմբի կազմից:

Խմբի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարները ամեն տարի հանդիպում են գագաթնաժողովում, որի ընթացքում քննարկում են աշխարհի հիմնական քաղաքական և տնտեսական խնդիրները և համատեղ միջոցառումներ են ծրագրում դրանք լուծելու համար:

Մեծ յոթնյակի գագաթնաժողովը չունի մշտական գրասենյակ կամ քարտուղարություն: Գագաթնաժողովի գործունեությունը ղեկավարում է նախագահող երկիրը, որն ամեն տարի փոխվում է: Նախագահող պետությունը խմբի աշխատանքի համար անհրաժեշտ ռեսուրսներ է ստեղծում և սահմանում նրա առաջնահերթությունները:

Մեծ յոթնյակի ինքնօրինակության հիմքը նրա ընդհանուր արժեքներն են՝ ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և հիմնական ազատությունները, ազատ շուկայի սկզբունքները և հարգանքը միջազգային իրավունքի նկատմամբ, ինչը նշանակում է նաև, որ անդամ երկրները կարող են քննարկել բոլոր հարցերը, նույնիսկ երբ նրանց դիրքորոշումները կտրուկ տարբերվում են իրարից:

Ավանդաբար G7-ի գագաթնաժողովում, բացի անդամ երկրներից, հավաքվում են նաև միջազգային կազմակերպությունների առաջնորդները: Բացի այդ, գագաթնաժողովի աշխատանքներին մասնակցում են նաև այլ պետություններ՝ նախագահող երկրի հրավերով:

Մեծ յոթնյակը և նրա տարեկան գագաթնաժողովները ունեն նաև քննադատներ, որոնք խումբն անվանում են «հին դարաշրջանի արտեֆակտ»: Չնայած դրան՝ հարկ է նշել Մեծ յոթնյակի կողմից ձեռք

բերված մի քանի կարևոր հաջողություններ, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի, մալարիայի և տուբերկուլյոզի դեմ ստեղծված գլոբալ հիմնադրամը, որի աշխատանքը 2002 թվականից մինչ այժմ 27 միլիոն կյանք է փրկել: Ինչպես նաև, նրա ձեռքբերում կարելի է համարել Փարիզի կլիմայի համաձայնագրի ստորագրումը:

Մեծ յոթնյակի գագաթնաժողովը հաճախ տեղի է ունենում բողոքի ցույցերի ֆոնին, որոնք, հիմնականում, իրականացնում են բնապահպան ակտիվիստները: Նրանք ուզում են համաշխարհային առաջնորդների ուշադրությունը կենտրոնացնել այնպիսի կարևոր հարցերի վրա, ինչպիսիք են, օրինակ՝ կլիմայի փոփոխությունները:

Մեծ յոթնյակին իր անվանումով և գործառույթներով նման է Մեծ քսանյակը (G20), որը հիմնադրվել է 1999 թվականին: 2009 թվականի ֆինանսական ճգնաժամից հետո կայացված ամենաբարձր մակարդակի որոշման համաձայն՝ Մեծ քսանյակը աշխարհի գլխավոր ռազմավարական տնտեսական ֆորումն է, որտեղ հանդիպում են անդամ երկրների ֆինանսների նախարարները և կենտրոնական բանկերի ղեկավարները:

Մեծ քսանյակը միավորում է աշխարհում տնտեսապես առաջատար և արագ զարգացող երկրներին: Նրան է բաժին ընկնում աշխարհի ՀՆԱ-ի 85%-ը, առևտրի 80%-ը և բնակչության 2/3-ը:

Օրինակ 1

Նախկին ներդրումային բանկիր և Փրինսթոնի համալսարանի տնտեսագիտության դոկտոր Մայքլ Օ'Սալիվանն իր «Ինչ կլինի գլոբալացումից հետո» գրքում (The Levelling: What's Next After Globalisation) մեզ առաջարկում է որոշակի գործողությունների ծրագիր: Հեղինակը բազմաբևեռ աշխարհի ձևավորման կողմնակից է, թեև գիտակցում է նաև, որ միջազգային կառույցները դեռ պատրաստ չեն դրան: Նա մտահոգված է տնտեսական ցածր աճի և մեծ պարտքերի համար, այդ պատճառով բոլորին կոչ է անում «Ռիսկի մասին համաշխարհային համաձայնության»:

«Մենք արդեն անցյալում ենք թողել գլոբալացումը, ուստի պետք է հրաժեշտ տանք դրան և հոգ տանենք բազմաբևեռ աշխարհի ձևավորման մասին: Նոր աշխարհում կլինեն առնվազն 3 առաջատար տարածաշրջաններ՝ ԱՄՆ, Եվրամիություն և Չինաստանի Կենտրոնական Ասիան, որոնք գնալով միմյանցից բավականին տարբեր մոտեցումներ են կիրառում քաղաքականության, ազատության, պատերազմի, տեխնոլոգիաների և հասարակության նկատմամբ: Միջին չափի երկրները, օրինակ՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Ավստրալիան և Ճապոնիան ամեն կերպ կցանկանան իրենց տեղը հաստատել աշխարհում, մինչդեռ փոքր ու զարգացած երկրները նոր կոալիցիաներ կստեղծեն, ինչպես Սկանդինավիայի և Բալթյան երկրները: XX դարի հաստատությունները՝ Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և Առևտրի համաշխարհային կազմակերպությունները կանցնեն անցյալի գիրկը»:

Ի՞նչ է տնտեսական գլոբալացումը:

Տնտեսական գլոբալացումն արտադրությանը, ապրանքներին, ծառայություններին, տեխնոլոգիաներին, տեղեկատվությանը, աշխատուժին և կապիտալի միջազգային ինտեգրմանն ուղղված միտում է: Համաշխարհային տնտեսությունը միասնական և անբաժանելի է և դրանով իսկ տարբերվում է միջազգային տնտեսությունից, որը հանդիսանում է ազգային տնտեսությունների և նրանց փոխհարաբերությունների համակարգ:

Համաշխարհային տնտեսության մեջ գլոբալացումը գնալով ավելի լայնածավալ է դառնում: Տնտեսական գլոբալացման գործընթացում ներգրավված են տարբեր երկրներ, որոնք իրար հետ առևտրով և բազմակողմ պայմանագրերով օրեցօր տեղափոխվում են զարգացման նոր փուլ: Տնտեսական գլոբալացումն աշխարհը բարձրացրել է նոր մակարդակի: Այսօրվա իրականության նախատեսմամբ, տնտեսական գլոբալացումն այլընտրանք չունեցող գործընթաց է: Հենց այս փաստն է ցույց տալիս, թե որքան կարևոր է այն յուրաքանչյուր մարդու կյանքում:

Տնտեսական գլոբալացման գործընթացում կարևոր դեր են կատարում զարգացած երկրները, քանի որ հենց նրանք են սահմանում կանոնները միջազգային տնտեսական բորսաներում:

Տնտեսական գլոբալացման ընթացքում ավելանում է գլոբալ ինտեգրումը ոչ միայն համաշխարհային շուկայում, այլ նաև ֆինանսական, առևտրային, հաղորդակցական և տեխնոլոգիական համակարգերում, ինչպես նաև օրենքներում, որոնք դուրս են գալիս ավանդական ազգային, մշակութային, էթնիկական և սոցիալական սահմաններից: Տնտեսական գլոբալացման կանոնները ստեղծել են առևտրային համաձայնագրերը, միջազգային իրավունքը և դոմինանտ երկրները:

Բջջային հեռախոսների ապրանքանիշերի աշխարհագրությունը տնտեսական գլոբալացման լավ օրինակ է:



Տնտեսական գլոբալացումը հիմնականում դրսևորվում է երեք ոլորտներում՝ արտադրությունում, առևտրում և ֆինանսական հարաբերություններում: Արտադրության գլոբալացումն առաջին հերթին ցույց է տալիս անդրազգային կորպորացիաների (ԱԱԿ) արագ զարգացումը: Քիչ թե շատ փոխկապակցված երկրներից համաշխարհային տնտեսական հասարակությունը վերափոխվել է միասնական, ամբողջական տնտեսական համակարգի, որտեղ ազգային տարրերը միասնական համաշխարհային տնտեսական օրգանիզմի բաղկացուցիչ մասերն են:

Տնտեսության գլոբալացում

Տնտեսական գլոբալացման պատճառները, միջոցները և տեսակները

Պատճառները.
- Արտադրողական ուժերի որակական հատկանիշներ:
- Միկրոգործընթացների և հաղորդակցության նոր միջոցների առաջացում:
- Տրանսպորտային տեխնոլոգիաների հեղափոխություն:

Միջոցները.
- Առևտրի ազատականացում:
- Օտարերկրյա ներդրումների կանոնակարգերի ազատականացում:
- Աշխատանքի միջազգային բաժանման հետագա շարունակություն:

Տեսակները.
- Գլոբալ շուկա:
- Գլոբալ արտադրություն:

Գլոբալ տնտեսության օգուտները

- Միջազգային համագործակցություն՝ գլոբալ խնդիրների լուծման նպատակով:
- Անդրազգային կորպորացիաների ազդեցության հզորացում:
- Գիտատեխնիկական ձեռքբերումների բարելավում և արտադրական տեխնոլոգիական գործընթացների ինտերնացիոնալացման խորացում:
- Միջազգային աշխատանքային միգրանտների ծավալների աճ:
- Գլոբալ ենթակառուցվածքի ձևավորում:
- Արտադրանքի և ծառայությունների փոխանակման ինտերնացիոնալացման խորացում:
- Կապիտալի ինտերնացիոնալացման աճ:
- Արտադրողական ուժերի գլոբալացում:
- Զարգացած միջազգային տրանսպորտային ենթակառուցվածքի ձևավորում:
- Արտադրության և սպառման միջազգային համագործակցություն՝ շրջակա միջավայրի վրա ներգործության գլոբալ խնդիրները լուծելու համար:

Գիտության և տեխնոլոգիաների առաջընթացը զգալիորեն նվազեցրել է հաղորդակցությունը և փոխադրումները խոչընդոտող գործոնները: Տեղեկատվական հեղափոխության և հաղորդակցական տեխնոլոգիաների հզոր ու արագ զարգացման շնորհիվ անցյալ դարի վերջին տասնամյակներում զգալիորեն արագացավ և ամրապնդվեց տնտեսական կյանքի ինտերնացիոնալացումը: Արբանյակների օգնությամբ Երկրի ցանկացած կետում գտնվող բաժանորդները կարող են միմյանց հետ շփվել բջջային հեռախոսների, հեռաֆաքսի կամ ինտերնետի միջոցով: Այս նորագույն հեռահաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաները ստեղծել են «վերազգային կամուրջներ», որոնց շնորհիվ ցանկացած

տեղեկատվություն կարող է հեշտությամբ հաղթահարել ֆիզիկական խոչընդոտները և պետական սահմանները: Կազմավորվել է համաշխարհային «կիբերտարածություն»:

Ժամանակակից հեռահաղորդակցական համակարգերը մեզ հնարավորություն են տալիս ամենակարճ ժամկետներում ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ցանկացած հեռավորությունից և նաև արագ կայացնել որոշումներ, որոնք պարզեցնում են կապիտալ միջազգային ներդրումների, արտադրական կորպորացիաների և շուկայավարման կազմակերպումը:

Տնտեսական գլոբալացումը ժամանակակից կյանքի որոշիչ գործոն է: Տնտեսական կյանքի միջազգայնացման գործընթացը վաղուց է ընթանում, բայց վերջին տարիներին այս ոլորտում համաշխարհային տնտեսության արագ փոփոխություններն ստեղծել են նոր պարադիգմ, և միջազգային տնտեսական հարաբերություններին նոր բովանդակություն են ավելացրել: Մի կողմից համաշխարհային ասպարեզում ի հայտ են եկել նոր շուկաներ, իսկ մյուս կողմից՝ գլոբալ ինտեգրացիոն գործընթացները աստիճանաբար ջնջել են առանձին երկրների և տարածաշրջանային միավորումների միջև նախկինում գոյություն ունեցած սահմանները: Գլոբալացումը պայմաններ է ստեղծել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և տեխնոլոգիաների փոխշահավետ փոխանակման համար: Կարելի է ասել, որ աշխարհը վերածվել է մեկ «մեծ քաղաքի», որտեղ բոլորը փորձում են շահույթ ստանալ: Այդպիսին է, ընդհանուր առմամբ, գլոբալացումը և, այդ թվում, տնտեսական ինտեգրման փիլիսոփայությունը, որը ստիպում է երկրներին և տարածաշրջաններին ապահովել մրցունակ ապրանքների և ծառայությունների արտադրություն՝ համաշխարհային տնտեսական տարածքում տեղ գրավելու համար:

Աշխարհի երկրների ազգային տնտեսությունների մեծ մասի իրարից կախվածությունը նրանց քիչ թե շատ ինքնավար տնտեսական կառույցներից փոխակերպեց գլոբալ տնտեսական օրգանիզմի բաղկացուցիչ տարրերի:

Ժամանակակից աշխարհի երկրների խնդիրն է միջազգային շուկայում դինամիզմի պահպանմամբ նպաստել տնտեսական գլոբալացման արդարությանը, հզորացնել ազատությունն ու պատասխանատվությունը, ավելի լավ գիտակցել տնտեսական գլոբալացման դժվարությունները, հաճախ ընդգրկվել գլոբալացման գործընթացի մեջ և, տարբեր երկրների հետ շփվելով, արագացնել զարգացման տեմպերը, այդպիսով ի վերջո բարելավելով բնակչության բարեկեցությունը:

8. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ժամանակակից կրթական տարածքում արդյունավետ և հաջող դասավանդման համար կարևոր է աշակերտների մոտիվացիայի բարձրացումը, ինչի համար կարևոր է աշակերտների օբյեկտիվ գնահատումը, գնահատման բազմակողմանի մոտեցումը և աշխատանքի գործընթացում գնահատման խորագրերի օգտագործումը: Աշակերտի գնահատումը ուսուցչի հիմնական և կարևոր աշխատանքներից է: Ըստ հետազոտողների (Մուիս և Ռեյնոլդս, 2005), ուսուցչի ժամանակի մեկ երրորդը ծախսվում է գնահատման վրա:

Աշակերտի գնահատումը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես են աշակերտները յուրացրել ուսումնական նյութը, որոնք են նրանց ուժեղ և թույլ կողմերը:

Գնահատման միջոցով մենք ճիշտ ենք պլանավորում ուսումնական գործընթացը և աշակերտների առաջընթացի կամ հետընթացի նախատեսմամբ կազմում ենք ուսումնական գործունեությունը:

Այսօր հանրակրթական դպրոցում օգտագործվում է գնահատման երկու տեսակ՝ որոշող և զարգացնող: Որոշող գնահատումը որոշում է աշակերտի ձեռքբերումների մակարդակը՝ կապված առարկայական ուսումնական պլանի արդյունքների հետ: Աշակերտը գնահատվում է տասը միավորանոց սանդղակով, ամենացածր միավորն է 1-ը, իսկ ամենաբարձրը՝ 10: Զարգացնող գնահատումը որոշում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և միտված է ուսման որակի բարձրացմանը:

Դասարանական գնահատումը պետք է համապատասխանի Ազգային ուսումնական պլանի 1-ին բաժնի 7-րդ գլխում նշված գնահատման սկզբունքներին, նպատակներին և խնդիրներին:

Ուսման որակը բարելավելու համար նախապատվությունը պետք է տրվի զարգացնող գնահատմանը, որը գնահատում է աշակերտին իր նախորդ արդյունքների համեմատ, չափում է անհատական առաջընթացը և, հետևաբար, հնարավորություն է տալիս աշակերտին փուլ առ փուլ կառուցել գիտելիքները:

Կարևոր է, որ աշակերտն ինքը լինի ներգրավված զարգացնող գնահատման մեջ: Ուսանման գործընթացի գնահատումը կզարգացնի սովորողի ինքնուրույն սովորելու հմտություններն ու կարողությունները, կօգնի նրան յուրացնել ուսանման ռազմավարությունները, հնարավորություն կտա նրան գիտակցաբար նպաստելու սեփական առաջընթացին և հաջողությանը: Գնահատմանը ներգրավվելու հիմնական նպատակն է աշակերտին իրազեկել ուսումնական գործընթացների մասին, ինչը նրան կսովորեցնի մտածված և ինքնուրույն կառավարել այդ գործընթացները:

Ամփոփիչ (զարգացնող և որոշող) գնահատում

Ամփոփիչ գնահատումը պետք է չափի, թե որքան լավ է աշակերտը տիրապետում և / կամ օգտագործում նպատակային հասկացությունները: Հասկացությունների տիրապետման աստիճանը գնահատելու համար այսպես կոչված ՈՒԴԱԿ աստիճանակարգումը (տաքսոնոմիան) (դիտարկելի ուսումնական արդյունքների կառուցվածքի տաքսոնոմիա, անգլերեն – SOLO – Structure of Observed Learning Outcomes), որը հանդիսանում է հարթակ գնահատման չափանիշների մշակման համար:

ՈՒԴԱԿ տաքսոնոմիան չափում է աշակերտների նվաճումներն ըստ 5 մակարդակների:

Այս մակարդակներն են.

SOLO 1. Չկապակցված կամ նախակառուցվածքային մակարդակ Աշակերտն ընդհանրապես չի հասկանում հարցը, օգտագործում է չհամապատասխանող, ոչ պատշաճ տեղեկատվություն և/կամ ընդհանրապես շեղված է հարցից:
SOLO 2. Միակապ կամ ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտը կարող է քննարկել միայն մեկ ասպեկտ և հաստատել պարզ, ակնհայտ / հստակ կապեր: Աշակերտը կարող է օգտագործել տերմինաբանություն, բանավոր փոխանցել (մտաբերել), կատարել պարզ հրահանգներ/ալգորիթմներ, շրջասել, նույնականացնել, անվանել կամ հաշվել:
SOLO 3. Բազմակապ կամ բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտը կարող է առանձին քննարկել մի քանի ասպեկտ՝ իրարից առանձնացված, առանց միմյանց հետ կապի: Նա կարող է թվարկել, նկարագրել, դասակարգել, համադրել, օգտագործել մեթոդներ, կառուցվածք, կատարել ընթացակարգեր և այլն:
SOLO 4. Ամբողջացված կամ հարաբերական մակարդակ Աշակերտը կարող է հասկանալ կապը մի քանի ասպեկտների միջև, ինչպես նաև գիտի այն, թե ինչպես են այդ ասպեկտները համադրվում, և ինչպես են ստեղծում ամբողջ, ամբողջականություն: Նրա մտածողությունը կառուցքավորված է, ուստի աշակերտն ունի ունակություն, որ համեմատի, կապակցի, վերլուծի, կիրառի տեսությունը, բացատրի խնդիրը՝ պատճառների և հետևանքների առումով:
SOLO 5. Ընդլայնված կամ ընդլայնված հարաբերական մակարդակ Աշակերտը կարող է ընդհանրացնել կառուցվածքը տրվածից/առաջարկվողից դուրս, ընկալել կառուցվածքը բազմաթիվ տարբեր տեսանկյուններից/հեռանկարներից և գաղափարները տեղափոխել նոր ոլորտ: Նա կարող է ընդհանրացնել, վարկած արտահայտել, քննադատել կամ ձևակերպել տեսություն:

ՈՒԴԱԿ տաքսոնոմիայի առավելություններից մեկն այն է, որ ուսուցիչների համար ավելի հեշտ է դառնում որոշել մակարդակը և օգնել աշակերտներին վարել ուսումնական գործընթացը:

Ամփոփիչ գնահատման համար օգտագործվում են համալիր առաջադրանքներ, որոնք պահանջում են նպատակային հասկացություններով սահմանված գիտելիքների ինտեգրված կիրառում գործառնական համատեքստերում:

Տիպիկ առաջադրանքներ ամփոփիչ գնահատման համար

Ստորև առաջարկում ենք չափորոշչով նախատեսված տիպիկ ամփոփիչ առաջադրանքների ցանկ: Աշակերտից և/կամ ուսուցչից է կախված, թե որ առաջադրանքը/ առաջադրանքները կընտրի:

- Նախագիծ (նախագիծը կարող է վերաբերել այնպիսի հետազոտական հարցի, ինչպիսին է՝ «Ինչպե՞ս պայքարենք հողի էրոզիայի և դեգրադացիայի դեմ»: Հետազոտության արդյունքները կարող են ներկայացվել տարբեր ձևերով (շնորհանդես, գրավոր զեկույց և/կամ էսսե):
- Հիմնվելով աշխարհագրական տեղեկատվական տարբեր աղբյուրների վրա՝ ստեղծել գրաֆիկներ, աղյուսակներ, դիագրամներ:
- Էսսե (աշակերտները էսսե են գրում խնդրահարույց և/կամ արդիական խնդրի վերաբերյալ, օրինակ՝ «Ինչպիսի՞ն կլինի մեր մոլորակի ժողովրդագրական պատկերը 100 տարի հետո»):
- Աշխարհագրական սեղանի և դաշտային հետազոտություն (հետազոտական աշխատանքներն անցկացվում են դասասենյակից դուրս, օրինակ՝ այս ժամանակ աշակերտներն ուսուցչի հետ գնում են բնության գիրկ կամ որևէ ձեռնարկություն և ուսումնասիրում այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ ձեռնարկության տեսակը և արտադրված արտադրանքը, կանաչ գյուղատնտեսություն և այլն):

Աշխարհագրությունից պետք է գնահատվեն աշակերտի հիմնական աշխարհագրական գիտելիքները և դրա մտածված կիրառումը, հիմնական աշխարհագրական հմտությունների ձեռքբերումը և կայուն զարգացման համար արժեքների ու մոտեցումների զարգացումը: Գնահատման տարբեր մեթոդներ օգտագործվում են հնարավորինս բնական կերպով, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան բացահայտել իրենց ունակությունները (տե՛ս՝ Լրացուցիչ գրականություն՝ «Աշխարհագրական ունակություններ»):

Աշակերտների մասին այս արժեքավոր տեղեկատվության մեծ մասը հավաքվում է ամենօրյա դիտարկումների գործընթացում, հատկապես արդյունավետ հարցումների և քննարկումների միջոցով: Նման դիտարկումները անհրաժեշտ են եզրակացություններ անելու համար, թե ինչ գիտեն աշակերտները, որոնք են նրանց ուժեղ կողմերը, և ինչը պետք է կատարելագործվի, որպեսզի նպատակներին հասնելու համար ընտրվեն ուսուցմանը համապատասխանող, պատշաճ ռազմավարություններ: Բոլոր վերը նշվածներին կարելի է հասնել՝ հիմնվելով աշակերտի աշխատանքային գործընթացի դիտարկման, ինչպես նաև աշակերտների պատասխանների վրա, մասնակցությամբ դասարանական քննարկումներին, աշակերտի աշխատանքի որոշող գնահատմամբ և արդյունավետ, որակյալ հետադարձ կապով, աշակերտների ինքնագնահատմամբ և փոխադարձ գնահատմամբ:

Աշակերտի նվաճումների մասին արժեքավոր տեղեկություններ կարող ենք հավաքել դասարանական ակտիվությանը ներգրավման ժամանակ աշակերտի դիտարկման և գնահատման արդյունքում: Այս գործողությունները ներառում են. տեղեկությունների ձեռքբերում առաջնային և երկրորդային աղբյուրներից, դաշտային դիտարկում, պարզ փորձերի հետևանքով հնարավոր արդյունքների կանխատեսում, օրինաչափությունների որոշում, աշխատանքային թերթերի լրացում, բանավոր ներկայացում, գրավոր աշխատանք, ուրվագծային և թեմատիկ քարտեզների վրա աշխատանք, դասարանային թեստեր, քարտեզների կազմում և վերլուծություն, գրաֆիկների օգտագործում և մեկնաբանություն, էլեկտրոնային լրատվամիջոցներից տեղեկատվության ստացում, ինքնուրույն աշխարհագրական հետազոտությունների անցկացում և դիտարկումների արդյունքների ներկայացում նախագծի տեսքով:

Տարբեր իրավիճակներում տարբեր դժվարության առաջադրանքների օգտագործումը ուսուցչին հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ գնահատել տարբեր կարողություններ ունեցող աշակերտի աշխարհագրական գիտելիքները/ընկալման ունակությունը:

Զարգացնող գնահատման ընթացակարգերը ուսուցիչներին արժեքավոր տեղեկություններ են տալիս աշակերտի ձեռքբերումների մասին և ազդում նրանց առաջընթացի վրա: Սակայն, ամփոփիչ գնահատումները, ինչպիսիք են միջանկյալ, կիսամյակային աշխատանքները չպետք է ծառայեն միայն գնահատական նշանակելուն, այլ պետք է ծառայեն աշակերտների նվաճումների գնահատմանը:

Դրանք պետք է ներառեն նաև զարգացնող գնահատման տարրեր, որպեսզի խրախուսենք աշակերտներին մտածել իրենց աշխատանքի մասին, ինչը միաժամանակ օգնում է ուսուցչին գնահատել դասավանդման հաջողությունը և նպատակներ նախանշել այն բարելավելու համար:

Աշակերտի առաջընթացն արտացոլող փաստաթղթերը կարող են տեղադրվել աշակերտների պորտֆոլիոյում: Սա կարող է ներառել մի պարզ փաստաթուղթ, որը հաստատում է աշակերտի ջանքերը, ինչպես նաև՝ կարող է լինել աշխատանք քարտեզի վրա, ստեղծված մոդելի լուսանկար, այցելված վայրերի մասին նշումներ և նկարներ, փորձերի անցկացումն արտացոլող փաստաթուղթ, աշակերտի գրառումներ աշխատանքային թերթերի տեսքով կամ հետազոտական նյութեր երկրորդային աղբյուրներից, օրինակ՝ ինչպիսին ինտերնետն է:

ՍՈԼՈ ՏԱՔՍՈՆՈՄԻԱՅԻ ԽՈՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՄՈՒՇ

Հանձնարարականներ խորագիրը պրակտիկայում օգտագործելու համար

Առաջին չորս մակարդակները (նախակառուցվածքային, ունիկառուցվածքային բազմակառուցվածքային, հարաբերական) գործնականում նույնական են բոլոր հասկացությունների համար, իսկ հինգերորդ՝ վերացական մակարդակը, ընդհանուր է բոլոր նպատակային հասկացությունների համար:

Խորագիրը կարող է օգտագործվել առարկայի շրջանակներում ցանկացած նպատակային հասկացության առնչությամբ: Ուսուցիչը զարգացնող գնահատման վերաբերյալ մեկնաբանությունը կգրի միայն այն սյունակում, որ նպատակային հասկացությունը ստուգում է և որ մակարդակում գտնվում է աշակերտը:

Այս խորագիրը նախատեսված է զարգացնող գնահատման և ոչ թե թեստերը ստուգելու համար, որտեղ ուշադրություն է դարձվում տերմիններին՝ «Նկարագրի՛ր-բացատրիր-գնահատի՛ր»:

Թեմա _____
Հարց _____
Համալիր առաջադրանքի պայմանը _____

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԱՓԱՆԻՇ	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:	Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով նույնականացված օրինակների վրա հիմնվելով՝ փոխադարձաբար կապակցելով դատողություն է անում առարկայի շրջանակներում բացահայտված բոլոր նպատակային հասկացությունների մասին: Կապում է համալիր առաջադրանքի միջոցով նույնականացված տվյալները (գիտելիքների ընդհանրացում, անձնական փորձի հետ զուգահեռների անցկացում) (Վրաստանի օրինակով և/կամ հնարավորության դեպքում՝ նաև այլ երկրի) և այլ կենսական իրավիճակներ: Դատողություն է անում Ազգային ուսումնական պլանի մակրոհասկացության / մակրոհասկացությունների մասին՝ հիմնվելով համալիր առաջադրանքի պայմանի վրա:		

Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է **աշխարհագրական թաղանթի** հետ կապված հարցերն ու ընթացակարգերը: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշների / նպատակային հասկացության կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է **բնակչության և տնտեսության հետ** կապված հարցերը: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշների / նպատակային հասկացության կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է **կայուն զարգացման հետ** կապված հարցերը: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշների / նպատակային հասկացության կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները:
Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ զուգորդություն /պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտն ունի բազմաթիվ զուգորդություններ՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, սակայն նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կազմակերպված, հետևողական տեսք:	Աշակերտն ունի բազմաթիվ զուգորդություններ՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, սակայն նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կազմակերպված, հետևողական տեսք:	Աշակերտն ունի բազմաթիվ զուգորդություններ՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, սակայն նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կազմակերպված, հետևողական տեսք:
Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված զուգորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտի՝ ուսումնասիրվելիք հարցի հետ կապված դատողությունը սահմանափակվում է հանգուցային հարցերի/ վերնագրի պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով:	Աշակերտի՝ ուսումնասիրվելիք հարցի հետ կապված դատողությունը սահմանափակվում է հանգուցային հարցերի/ վերնագրի պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով:	Աշակերտի՝ ուսումնասիրվելիք հարցի հետ կապված դատողությունը սահմանափակվում է հանգուցային հարցերի/ վերնագրի պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով:
Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:	Աշակերտը ճիշտ չի կարող հասկանալ հարցի հետ կապված հարցադրումները/ համալիր առաջադրանքի պայմանը:	Աշակերտը ճիշտ չի կարող հասկանալ հարցի հետ կապված հարցադրումները/ համալիր առաջադրանքի պայմանը:	Աշակերտը ճիշտ չի կարող հասկանալ հարցի հետ կապված հարցադրումները/ համալիր առաջադրանքի պայմանը:

Աշակերտի գրքում տրված ամփոփիչ համալիր առաջադրանքների գնահատման խորագրեր. ՍՈԼՈ (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի սխեմաներ

Առաջին չորս մակարդակները (նախակառուցվածքային, ունիկառուցվածքային բազմակառուցվածքային, հարաբերական) գործնականում նույնական են բոլոր հասկացությունների համար, իսկ հինգերորդ՝ վերացական մակարդակը, ընդհանուր է բոլոր նպատակային հասկացությունների համար:

Խորագիրը կարող է օգտագործվել առարկայի շրջանակներում ցանկացած նպատակային հասկացության առնչությամբ: Ուսուցիչը զարգացնող գնահատման վերաբերյալ մեկնաբանությունը կգրի միայն այն սյունակում, որ նպատակային հասկացությունը ստուգում է և որ մակարդակում գտնվում է աշակերտը:

ԹԵՄԱ 1. ԿԼԻՄԱՅԻ ԳԼՈԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Օրինակ 1

Հարցը. Տուպունգատոյի սառցադաշտը՝ Երկրի ամենափխրուն գոտիներից մեկը (սառցադաշտերի հալվելը)

Համալիր առաջադրանքի պայմանը. Կլիմայի ներկայիս փոփոխությունը սկսվելու հետ մեկտեղ արագացել է նաև սառցադաշտերի հալման գործընթացը, և այս եզակի աշխարհագրական օբյեկտներին, դրանց անկրկնելի էկոհամակարգին մեծ վտանգ է սպառնում: Ըստ գիտնականների՝ հենց սառցադաշտն է կլիմայի փոփոխության լավագույն չափանիշը:

ԱՄՆ Ձյան և սառույցի ազգային կենտրոնի տվյալներով զգալիորեն նվազել են ծանծաղուտային և լեռնային սառցադաշտերի տարածքները: Նահանջած սառցադաշտերը թողնում են հետքեր, որոնք «մեզ պատմում են դրանց անցյալի մասին»:

Հատուկ նշանակություն է շնորհվում լեռնային տարածքների գիտական ուսումնասիրությանը, կարևոր է նրանց՝ բնության պահպանության հետ կապված դժվարությունների վերհանումը, բնակչության ապրելակերպի և ավանդույթների ուսումնասիրությունը, հանգստի հնարավորությունների և ռեսուրսների պաշարի սահմանումը, կայուն տարածքային պլանավորման և տարածության կազմակերպումը:

Պատկերացրո՛ւ, որ դու «Լեռնային սառցադաշտերի պահապան» կազմակերպության անդամ ես և քո նպատակն է, որ հասարակությունը հասկանա սառցադաշտերի հալման գործընթացի դերի հետ կապված քո դերի կարևորությունը: Քո խնդիրն է ուսումնասիրել Տուպունգատո գագաթը՝ Երկրի փխրուն գոտիներից մեկը, պարզել, թե ինչպես են փոխվում տեղի շրջակա միջավայրի պայմանները, և ինչ փոխադարձ կապ կա լեռնային սառցադաշտերի հալման և մարդու գործունեության միջև:

Հանրային իրազեկվածությունը բարձրացնելու համար ստեղծի՛ր բլոգ:

Բլոգում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչպես է արտացոլվում մարդածին գործոնի հետևանքով առաջացած գլոբալ կլիմայափոխությունը Տուպունգատո լեռան և մեր մոլորակի այլ սառցադաշտերի վրա: **(Աշխարհագրական թաղանթ, կ.պ. 1)**
- Ինչպես կփոխվի տեղի բնակչության առօրյան ու կյանքի որակը Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալվելու հետևանքով, և ինչպես է պետությունը հաղթահարում այս մարտահրավերները: **(Բնակչությունը և տնտեսությունը, կ.պ. 1, 2)**
- Ինչու է կարևոր սառցադաշտերի, այդ թվում Տուպունգատո լեռան սառցադաշտի հալման դադարեցումը, և ինչպես է այս երևույթն արտացոլվում լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման վրա: **(Կայուն զարգացում, կ.պ. 1,2)**

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՓԱՆԻՇ	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս։ Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ։	Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով ընդգծված հարցի՝ «Տուպունգատոյի սառցադաշտը՝ Երկրի ամենափխրուն գոտիներից մեկը» (սառցադաշտերի հալվելը) օրինակի վրա հիմնվելով՝ փոխկապակցված դատողություն է անում առարկայի շրջանակներում բացահայտված բոլոր նպատակային հասկացությունների մասին։ Աշակերտը լիարժեքորեն ներկայացնում է առաջադրանքը՝ բլոգը։ Խորը պատկերացում ունի հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումների մասին։ Աշակերտը բերում է օրինակներ և հիմնավորում իր տեսակետները։ Օգտագործում է հետևյալ արտահայտությունները. «Ես գիտեմ, թե ինչպես է արտացոլվում կլիմայի գլոբալ փոփոխությունը Տուպունգատոյի սառցադաշտի և մոլորակի սառցադաշտերի վրա, և աշխարհին ինչպես կլուծի լեռնային սառցադաշտերի հալվելով հարուցված խնդիրները։ Կարող եմ բացատրել, թե ինչպես կփոխվի Տուպունգատոյի սառցադաշտի հալվելու հետևանքով տեղի բնակչության առօրյա կյանքը և կյանքի մակարդակը, ինչպես կարելի է լուծել այս խնդիրը»։ Սեփական տեսակետներն ամրապնդում է փաստարկներով։ Բլոգում երևում է, որ աշակերտը տիրապետում է կլիմայի փոփոխության մասին նյութին, մասնավորապես. աշխատանքում ընդգծված է կլիմայի փոփոխության ազդեցությունը լեռնային սառցադաշտերի բնակչության կյանքի վրա, դատողություն է անում հասարակական-աշխարհագրական գործընթացների դերի մասին. ինչպես է փոխել կլիմայի փոփոխությունը բնակչության զբաղվածության բնույթը, և ինչպես է արտացոլվել այս գործընթացն համաշխարհային տնտեսության վրա։ Քննարկում է կոնկրետ փաստեր, կապում կենսափորձի հետ։ Դատողություն է անում բնակչության գործունեության ազդեցության մասին՝ լեռնային սառցադաշտերի հալվելը կասեցնելու և լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման համար և հիմնավորում իր ասածը։ Տուպունգատո սառցադաշտի հալման գործընթացը համեմատում է այլ լեռնային սառցադաշտերի հետ, քննարկում է կլիմայի փոփոխության հետևանքները և անհրաժեշտությունը համաշխարհային կտրվածքում։		
Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները։	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է աշխարհագրական ոլորտների փոխադարձ կապը և դրանց ազդեցությունը կլիմայի գլոբալ փոփոխության, Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալման վրա։ Հարցը քննարկում է որպես ամբողջ/ միասնական համակարգ։ Որոշում է յուրաքանչյուր գործոնի դերը և դատողություն անում, թե ինչպես կփոխվեն աշխարհագրական ոլորտները նրանցից որևէ մեկի փոփոխության դեպքում։	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն սահմանում է Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալման ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության և երկրի զարգացման գործընթացի վրա, դատողություն է անում Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալման ազդեցության մասին ճյուղային կառուցվածքի վրա և սահմանում է կոնկրետ ճյուղերը։ Ընդգծում է գնահատման չափանիշների և կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները։	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է, թե ինչպես կլուծի կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած Տուպունգատո լեռնային սառցադաշտի հալման հարցը, և ինչպես կարտացոլվի այս գործընթացը լեռնային տարածաշրջանի բնակչության վրա։ Մասնավորապես, կնվազեցնի ոչ ռացիոնալ օգտագործումը։ Ընդգծում է կայուն զարգացման երեք գլխավոր բաղադրիչների միջև փոխադարձ կապը՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական։

Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ զուգորդություն / պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ։	Աշակերտն անվանում է և նկարագրում աշխարհագրական ոլորտները, սակայն, չի կարող կապ հաստատել և չի կարող բացատրել նրանց ազդեցությունը կլիմայի գլոբալ փոփոխության, Տուպունգատո լեռան սառցադաշտի հալման վրա։ Չի կարող կապակցել նոոոլորտի ազդեցությունը սառցադաշտերի հալման հետ և չի կարող փոխանցել հետևողականորեն։ Կարող է որոշ չափանիշներ թվարկել։	Աշակերտը գիտի, թվարկում և նկարագրում է լեռան բնակչության տնտեսության կառուցվածքը, կարող է ընտրել չափանիշներ, դասակարգել և նկարագրել, սակայն չի կարող կապակցել սառցադաշտերի հալման հետ և չի կարող բացատրել, թե ինչ ազդեցություն կունենա նրանց վրա։ Չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ։	Աշակերտը գիտի կայուն զարգացման կարևորությունը և հասկանում է դրա անհրաժեշտությունը, բայց նա չի հասկանում, թե ինչ դեր են կատարում կլիմայի փոփոխությունը և լեռնային սառցադաշտերի հալվելը բնակչության բարեկեցության համար։ Չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ։
Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված զուգորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ։	Աշակերտն անվանում և նկարագրում է աշխարհագրական ոլորտները, սակայն չի կարող կապ հաստատել և չի կարող բացատրել դրանց ազդեցությունը կլիմայի գլոբալ փոփոխության վրա։ Չի կարող կապել նոոոլորտը կլիմայի փոփոխության հետ և չի կարող փոխանցել հետևողականորեն։ Կարող է թվարկել առանձին չափանիշներ։	Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, գիտի կլիմայի փոփոխության, լեռնային սառցադաշտերի հալման և բնակչության տնտեսական գործունեության մասին, սակայն չի կարող դրանք կապել բնակչության կյանքի մակարդակի և երկրի կայուն զարգացման հետ։ Կարող է թվարկել առանձին չափանիշներ։	Աշակերտը գիտի կայուն զարգացման մասին, բայց չի կարող դրանք կապել կլիմայի փոփոխության, լեռնային սառցադաշտերի հալման հետևանքով առաջացած աշխարհի բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների հետ։ Չգիտի, թե ինչպես կարող են դրանք կապված լինել բնակչության գործունեության հետ։ Կարող է թվարկել առանձին չափանիշներ։
Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն։	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա աշխարհագրական թաղանթի բաղադրիչների միջև։ Աշակերտը չի կատարել առաջադրանքը։	Աշակերտը չկարողացավ հասկանալ փոխհարաբերությունը կլիմայի փոփոխության և լեռնային սառցադաշտերի հալման գործընթացի և բնակչության գործունեության միջև։ Աշակերտը չի կատարել առաջադրանքը։	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա կլիմայի փոփոխության և լեռնային սառցադաշտերի հալման գործընթացի միջև։ Աշակերտը չկատարեց առաջադրանքը։

Օրինակ 2

Թեմա. Կլիմայի գլոբալ փոփոխություն

Հարցը. Տեյտիոտայի գործը (փախստականներ, ներքին տեղահանվածներ)

Համալիր առաջադրանքի պայմանը.

Կլիմայի փոփոխությունն առաջացնում է տասնյակ միլիոնավոր մարդկանց արտագաղթ: Նրանք ցանկանում են փրկվել տարբեր բնական աղետներից, այդ թվում, փոթորկից, երաշտից և ջրհեղեղից: Շրջակա միջավայրի պահապանների գնահատմամբ, 2010 թվականին աշխարհում 40 միլիոնից ավելի կլիմայական միգրանտներ հարկադրված են եղել լքել բնակման միջավայրը՝ կլիմայի փոփոխության հետ կապված պատճառներով: 2020 թվականին, չնայած Քովիդ 19-ի համավարակին, նրանց թիվը գերազանցել է 34 մլն-ը: Ըստ կանխատեսման՝ էկոմիգրանտների թիվը 2050 թվականի դրությամբ հնարավոր է հասնի 200-250 միլիոն մարդու:

Պատկերացրո՛ւ, որ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) աշխատակից ես: Որպես փախստականների իրավունքների պաշտպանության ու բարեկեցության մասին հոգացող կազմակերպության անդամի քեզ հանձնարարվել է ուսումնասիրել Կիրիբատի կղզու քաղաքացի Տեյտիոտայի դեպքը, պաշտպանել նրան դատավարության ժամանակ: Նմանակած դատարավարության համար պատրաստի՛ր ճառ, որով կպաշտպանես քո պաշտպանյալի կլիմայական փախստականի իրավունքները:

Պաշտպանական ճառում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչպես է կլիմայի փոփոխությունն ազդում Կիրիբատի կղզու բնական միջավայրի վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)**
- Ինչպես կանդրադառնան կլիմայի փոփոխության հետևանքները Կիրիբատիի բնակիչների կյանքի ու կենցաղի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ 1,2)**
- Ինչպես է երկրների միգրացիոն քաղաքականությունն ազդում կլիմայական փախստականների խնդիրների և միգրացիոն ճգնաժամի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ 1,2)**
- Ինչպես կարող են լուծվել կլիմայական փախստականների խնդիրները: **(Կայուն զարգացում կ.պ.1,2)**

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԱՓԱՆԻՇ	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ ամեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:	Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով ընդգծված հարցի՝ «Տեյտիոտայի գործը (փախստականներ, ներքին տեղահանվածներ)» օրինակի վրա հիմնվելով՝ փոխկապակցված դատողություն է անում առարկայի շրջանակներում բացահայտված բոլոր նպատակային հասկացությունների մասին: Աշակերտը լիարժեքորեն ներկայացնում է առաջադրանքը՝ պաշտպանական ճառը: Խորը պատկերացում ունի հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումների մասին: Աշակերտը բերում է օրինակներ և հիմնավորում իր տեսակետները: Օգտագործում է հետևյալ արտահայտությունները. «Ես գիտեմ, թե ինչ դեր է կատարում կլիմայի փոփոխությունը տարածաշրջանի և երկրի զարգացման գործընթացում, ինչպես կարելի է մեղմել կլիմայի փոփոխությունը և բարելավել Կարիբատի կղզու բնակիչների կյանքը»: Պաշտպանական ճառում երևում է, որ աշակերտը տիրապետում է կլիմայի փոփոխության մասին նյութին, մասնավորապես. աշխատանքում ընդգծված է, թե որ գործոններից են կախված կլիմայի փոփոխությունը և տարածաշրջանում ծագած խնդիրները: Քննարկում է կլիմայի փոփոխության հետևանքները Տեյտիոտայի ընտանիքի օրինակով: Դատողություն է անում հասարակական-աշխարհագրական գործընթացների դերի մասին. ինչպես կարելի է կասեցնել կլիմայի փոփոխությունը և թուլացնել նրա բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության կյանքի ու կենցաղի վրա, և ինչպես է արտացոլվել այս գործընթացը համաշխարհային տնտեսության վրա: Քննարկում է կոնկրետ փաստեր, կապում կենսափորձի հետ: Դատողություն է անում կլիմայի փոփոխության բացասական ազդեցության կասեցման անհրաժեշտության մասին տարածաշրջանի և երկրի կայուն զարգացման գործընթացում և հիմնավորում իր ասածը, քննարկում է համաշխարհային (գլոբալ) կտրվածքում: Դատողություն է անում Ազգային ուսումնական պլանի մակրոհասկացության/ մակրոհասկացությունների մասին՝ համալիր առաջադրանքի պայմանի վրա հիմնվելով:		

Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է աշխարհագրական ոլորտների փոխադարձ կապը և դրանց ազդեցությունը Կիրիբատի կղզու բնական միջավայրի վրա: Հարցը քննարկում է որպես ամբողջ/ միասնական համակարգ: Որոշում է յուրաքանչյուր գործոնի դերը և դատողություն անում, թե ինչպես կփոխվեն աշխարհագրական ոլորտները նրանցից որևէ մեկի փոփոխության դեպքում:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն սահմանում է Կիրիբատի կղզու բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրները Տեյտիոտայի ընտանիքի օրինակով: Դատողություն է անում փախստականների խնդիրների մասին և սահմանում կոնկրետ գործոնները: Գնահատման չափանիշները որոշում է կայուն պատկերացումների միջոցով:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է, թե ինչպես կլուծի կլիմայի փոփոխության կասեցումը Կիրիբատի կղզու բնակիչների խնդիրները: Ընդգծում է կայուն զարգացման երեք գլխավոր բաղադրիչների միջև փոխադարձ կապը՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական:
Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ զուգորդություն / պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտն անվանում է և նկարագրում աշխարհագրական ոլորտները, սակայն, չի կարող կապ հաստատել և չի կարող բացատրել նրանց ազդեցությունը կլիմայի գլոբալ փոփոխության գործընթացում: Չի կարող կապակցել նոոոլորտի ազդեցությունը Կիրիբատի կղզու բնական պայմանների փոփոխության հետ և չի կարող փոխանցել հետևողականորեն: Կարող է որոշ չափանիշներ թվարկել:	Աշակերտը գիտի, թվարկում և նկարագրում է փախստականների խնդիրները Տեյտիոտայի ընտանիքի օրինակով: Կարող է ընտրել չափանիշներ, դասակարգել և նկարագրել, սակայն չի կարող դրանք կապակցել կլիմայի փոփոխության հետ: Չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ:	Աշակերտը գիտի կայուն զարգացման կարևորությունը և հասկանում է դրա անհրաժեշտությունը, բայց նա չի հասկանում, թե ինչ դեր է կատարում կլիմայի փոփոխությունը և լեռնային սառցադաշտերի հալվելը բնակչության բարեկեցության հարցում: Չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ
Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված զուգորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտն անվանում է և նկարագրում աշխարհագրական ոլորտները, սակայն չի կարող կապ հաստատել և չի կարող բացատրել դրանց ազդեցությունը Կիրիբատի կղզու բնական միջավայրի վրա: Չի կարող կապել նոոոլորտը կլիմայի փոփոխության հետ և չի կարող փոխանցել հետևողականորեն: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, գիտի կլիմայի փոփոխության մասին, թվարկում է փախստականների խնդիրները, սակայն չի կարող կապակցել բնակչության գործունեությունը և բնական պայմանները, չի կարող փոխանցել հետևողականորեն: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը գիտի կայուն զարգացման մասին, սակայն չի կարող կապակցել կլիմայի փոփոխության և բնակչության բարեկեցության հետ: Չգիտի, թե ինչպես կարող է կապված լինել երկրի զարգացման գործընթացի հետ:
Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա աշխարհագրական թաղանթի բաղադրիչների միջև: Աշակերտը չի կատարել առաջադրանքը:	Աշակերտը չկարողացավ հասկանալ փոխհարաբերությունը կլիմայի փոփոխության և երկրի զարգացման գործընթացի միջև:	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա կլիմայի փոփոխությունը մեղմելու և կայուն զարգացման միջև: Աշակերտը չկատարեց առաջադրանքը:

ԹԵՄԱ 2. ԳԼՈԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օրինակ 1.

Թեմա. Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները

Հարցը. Թուրքիա՝ Օսմանյան կայսրությունից մինչև համաշխարհային պետություն

Համալիր առաջադրանքի պայմանը. Ժամանակակից աշխարհում ընթացող գլոբալացման գործընթացի, ավելի կոնկրետ դրա արդյունքների և ազդեցության վերաբերյալ գոյություն չունի միասնական կարծիք: Գլոբալացումն ունի ինչպես կողմնակիցներ, այնպես էլ՝ հակառակորդներ, որոնք, հիմնվելով օրինակների վրա, վերլուծում են գործընթացը և դատողություն անում գլոբալացման դրական և բացասական կողմերի մասին: Գլոբալացումը կարող է նպաստել կամ ընդհակառակը, բացասական ազդեցություն ունենալ յուրաքանչյուր երկրի տնտեսության և մշակույթի զարգացման վրա:

Գլոբալացման գործընթացները նպաստում են մարդկանց կյանքի որակի բարելավմանը, արտադրական հզորությունների ավելացմանը, արտադրված արտադրանքի և ծառայությունների բազմազանությանը, ինչպես նաև նորարարություններին ու տեխնոլոգիական ձեռքբերումներին, որոնք դրական են ազդում երկրի տնտեսության զարգացման վրա:

Պատկերացրո՛ւ, որ դու Գլոբալ կառավարման ինստիտուտի աշխատակից ես: Քո նպատակն է անդրադառնալ Թուրքիայում գլոբալացման և ապագլոբալացման հարցերին Թուրքիայի բնակչության և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնացմանը:

Ստեղծի՛ր լեպբուք, որն արտահայտում է քո անձնական վերաբերմունքը/կարծիքը Թուրքիա պետության զարգացման գործում գլոբալացման գործընթացի դերի և նշանակության մասին: Լեպբուքի մեջ արտացոլի՛ր, թե որ գործընթացին ես աջակցում՝ գլոբալացմա՞նը, թե՞ ապագլոբացմանը:

Լեպբուքի մեջ հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչ դեր են կատարում աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները Թուրքիայի տնտեսական զարգացման ու նրա բնակչության, որպես համաշխարհային հասարակություն, ձևավորման գործընթացում: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1)**
- Ինչպես է գլոբալացման գործընթացն ազդում Թուրքիայի բնակչության առօրյա կյանքի և տնտեսական զարգացման մակարդակի վրա: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ 1,2)**
- Ինչպես կզարգանա գլոբալացման գործընթացը Թուրքիայում, և ինչ դեր կկատարի երկիրը կայուն աշխարհի կառուցման գործընթացում: **(Կայուն զարգացում կ.պ.1,2)**

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԱՓԱՆԻՇ	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:	Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով ընդգծված հարցի՝ «Թուրքիա՝ Օսմանյան կայսրությունից մինչև համաշխարհային պետություն (մշակութային գլոբալացում)» վրա հիմնվելով՝ փոխկապակցված դատողություն է անում առարկայի շրջանակներում բացահայտված բոլոր նպատակային հասկացությունների մասին: Աշակերտը լիարժեքորեն ներկայացնում է առաջադրանքը՝ լեպբուքը: Խորը պատկերացում ունի հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումների մասին: Աշակերտը բերում է օրինակներ և հիմնավորում իր տեսակետները: Օգտագործում է հետևյալ արտահայտությունները. «Ես գիտեմ, թե ինչ դեր են կատարում աշխարհագրական դիրքը և բնական պայմանները Թուրքիայի տնտեսական զարգացման և նրա բնակչության, որպես գլոբալ հասարակություն ձևավորման գործընթացում: Կարող եմ բացատրել, թե ինչպես է արտացոլվում մշակութային գլոբալացման գործընթացը Թուրքիայի բնակչության կյանքի ու կենցաղի և տնտեսական զարգացման մակարդակի վրա: Սեփական տեսակետներն ամրապնդում է փաստարկներով: Լեպբուքում երևում է, որ աշակերտը տիրապետում է կլիմայի փոփոխության մասին նյութին, մասնավորապես. աշխատանքում ընդգծված է, թե ինչ ազդեցություն է ունեցել մշակութային գլոբալացման գործընթացը բնակչության կյանքի ու կենցաղի վրա, դատողություն է անում հասարակական-աշխարհագրական գործընթացների դերի մասին՝ ինչպես է փոխել գլոբալացումը բնակչության զբաղվածության բնույթը, և ինչպես է արտացոլվել այս գործընթացը երկրի և աշխարհի տնտեսության վրա, քննարկում է կոնկրետ փաստեր, կապում կենսափորձի հետ: Դատողություն է անում բնակչության գործունեության ազդեցության մասին գլոբալացման գործընթացի և կայուն զարգացման վրա և հիմնավորում իր ասածը: Թուրքիայի զարգացման գործընթացը Օսմանյան կայսրությունից մինչև գլոբալ երկիր համեմատում է մեկ այլ պետության մոդելի հետ և քննարկում համաշխարհային (գլոբալ) կտրվածքում: Դատողություն է անում Ազգային ուսումնական պլանի մակրոհասկացության / մակրոհասկացությունների մասին՝ հիմնվելով համալիր առաջադրանքի պայմանի վրա:		

Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է աշխարհագրական ոլորտների փոխադարձ կապը և դրանց ազդեցությունը Թուրքիա պետության ձևավորման գործընթացի վրա: Հարցը քննարկում է որպես ամբողջ/ միասնական համակարգ: Որոշում է յուրաքանչյուր գործոնի դերը և դատողություն անում, թե ինչպես կփոխվեն աշխարհագրական ոլորտները նրանցից որևէ մեկի փոփոխության դեպքում:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն սահմանում է մշակութային գլոբալացման ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության և երկրի զարգացման գործընթացի վրա, դատողություն է անում գլոբալացման ազդեցության մասին տնտեսության ճյուղային կառուցվածքի վրա և սահմանում է կոնկրետ ճյուղերը: Ընդգծում է գնահատման չափանիշների և կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է, թե ինչպես կարտացոլվի մշակութային գլոբալացումը երկրի բնակչության ավանդույթների և ինքնօրինակության, ինչպես նաև՝ բարեկեցության վրա:
Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ զուգորդություն / պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտն անվանում է և նկարագրում աշխարհագրական ոլորտները, գիտի Թուրքիայի աշխարհագրական դիրքը, Թուրքիայի սահմանակից երկրները, Թուրքիայի լեռնագրական և ջրագրական միավորները, կլիման և բնական գոտիները, սակայն չի կարող բացատրել փոխադարձ կապը նրանց միջև: Չի կարող կապակցել նոոոլորտի ազդեցությունը երկրի բնական միջավայրի հետ: Հետևողականորեն կարող է թվարկել որոշ չափանիշներ:	Աշակերտը գիտի, թվարկում և նկարագրում է Թուրքիայի բնակչության տնտեսության կառուցվածքը, կարող է ընտրել չափանիշներ, դասակարգել և նկարագրել, սակայն չի կարող կապակցել գլոբալացման գործընթացի հետ, չի կարող բացատրել, թե ինչ ազդեցություն է գործել, չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ:	Աշակերտը գիտի կայուն զարգացման կարևորությունը և հասկանում է դրա անհրաժեշտությունը, բայց նա չի հասկանում, թե ինչ դեր է կատարում մշակութային գլոբալացումը բնակչության ավանդույթների և ինքնօրինակության պահպանման գործընթացում, ինչպես նաև՝ ինչպես կազդի բնակչության բարեկեցության վրա: Չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ:
Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված զուգորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտն անվանում է և նկարագրում աշխարհագրական ոլորտները, սակայն չի կարող կապ հաստատել և չի կարող բացատրել դրանց ազդեցությունը մշակութային գլոբալացման վրա: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, գիտի մշակութային գլոբալացման և բնակչության տնտեսական գործունեության մասին, սակայն չի կարող դրանք կապել բնակչության կյանքի մակարդակի և երկրի կայուն զարգացման հետ: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը գիտի կայուն զարգացման մասին, բայց չի կարող կապել մշակութային գլոբալացումով առաջացած փոփոխությունները ավանդույթների և ինքնօրինակության, ինչպես նաև բարեկեցության հետ: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:
Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա աշխարհագրական թաղանթի բաղադրիչների միջև: Աշակերտը չի կատարել առաջադրանքը:	Աշակերտը չկարողացավ հասկանալ փոխհարաբերությունը գլոբալացման և բնակչության գործունեության միջև: Աշակերտը չի կատարել առաջադրանքը:	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա գլոբալացման և երկրի զարգացման գործընթացի միջև: Աշակերտը չկատարեց առաջադրանքը:

Օրինակ 2.

Թեմա. Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները

Հարցը. Խաղաղության պարկը Վրաստանում: Միջպետական հակամարտությունների կարգավորման կայուն միջոց

Համալիր առաջադրանքի պայմանը. Խաղաղության պարկերի գաղափարը, որը ենթադրում է սահմանամերձ պահպանվող տարածքների համատեղ կառավարում, պետությունների միջև համագործակցությունը բարելավելու նպատակով, մտահղացվել է դեռևս XIX դարից: Ժամանակակից աշխարհի քարտեզի վրա արդեն 100-ից ավելի խաղաղության պարկ կա:

Պատկերացրո՛ւ, որ դու «Բնության պահպանման միջազգային միություն» միջազգային կազմակերպության ներկայացուցիչ ես Վրաստանից: Քո նպատակն է ուսումնասիրել երկրների փորձը, ընտրել Վրաստանի սահմանամերձ գոտում գտնվող տարածք և պատրաստել Խաղաղության պարկի նախագիծ:

Նախագծում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչպես է բնական միջավայրն ազդում Վրաստանի անվտանգության և աշխարհաքաղաքական գործընթացների վրա: **(Աշխարհագրական թաղանթ կ.պ.1,2)**
- Ինչ ազդեցություն կունենա պետական Խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի սահմանամերձ գոտում ապրող բնակչության առօրյայի վրա, և ինչպես կփոխվի նրանց կյանքի որակը: **(Բնակչությունը և տնտեսությունը կ.պ 1,2)**
- Ինչպես կանդրադառնա Խաղաղության պարկի ստեղծումը Վրաստանի կայուն զարգացման վրա տեղական և գլոբալ մակարդակներում: **(Կայուն զարգացում կ.պ.1,2)**

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԱՓԱՆԻՇ	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ	ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:	Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով ընդգծված հարցի՝ «Խաղաղության պարկը Վրաստանում: Միջպետական հակամարտությունների կարգավորման կայուն միջոց» վրա հիմնվելով՝ փոխկապակցված դատողություն է անում առարկայի շրջանակներում բացահայտված բոլոր նպատակային հասկացությունների մասին: Աշակերտը լիարժեքորեն ներկայացնում է առաջադրանքը՝ նախագիծը: Խորը պատկերացում ունի հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումների մասին: Աշակերտը բերում է օրինակներ և հիմնավորում իր տեսակետները: Օգտագործում է հետևյալ արտահայտությունները. «Ես գիտեմ, թե ինչպես է ազդում բնական միջավայրը Վրաստանի անվտանգության և աշխարհաքաղաքական գործընթացների վրա, ինչ ազդեցություն կունենա պետական խաղաղության պարկի հիմնադրումը Վրաստանի սահմանային գոտում ապրողների բարեկեցության վրա, և ինչպես կփոխվի նրանց կյանքի մակարդակը: Նախագծում երևում է, որ աշակերտը տիրապետում է նյութին գլոբալ քաղաքական մարտահրավերների և փոփոխությունների մասին, մասնավորապես. աշխատանքում ընդգծված է, թե որ գործոններից են կախված գլոբալ քաղաքական գործընթացները և տարածաշրջանում ծագած խնդիրները: Քննարկում է գլոբալ քաղաքական փոփոխությունների հետևանքները Վրաստանի օրինակով: Դատողություն է անում հասարակական-աշխարհագրական գործընթացների դերի մասին՝ ինչպես են արտացոլվում գլոբալ քաղաքական գործընթացները շրջակա միջավայրի և բնակչության կյանքի ու կենցաղի վրա: Քննարկում է կոնկրետ փաստեր, կապում կենսափորձի հետ: Դատողություն է անում գլոբալ քաղաքական գործընթացների ազդեցության մասին տարածաշրջանի և երկրի կայուն զարգացման գործընթացի վրա և հիմնավորում իր ասածը, քննարկում է համաշխարհային (գլոբալ) կտրվածքում: Դատողություն է անում Ազգային ուսումնական պլանի մակրոհասկացության / մակրոհասկացությունների մասին՝ հիմնվելով համալիր առաջադրանքի պայմանի վրա:		

Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարա-բերությունները:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է աշխարհագրական ոլորտների փոխադարձ կապը և դրանց ազդեցությունը Վրաստանի բնական միջավայրի վրա: Քննարկում է որպես ամբողջ/միասնական համակարգ: Որոշում է յուրաքանչյուր գործոնի դերը և դատողություն անում, թե ինչպես կփոխվեն աշխարհագրական ոլորտները նրանցից որևէ մեկի փոփոխության դեպքում:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն սահմանում է Վրաստանի սահմանամերձ գոտում ապրողների սոցիալ-տնտեսական խնդիրները և երկրի զարգացման գործընթացը, դատողություն է անում սահմանային գոտում ապրողների խնդիրների մասին և սահմանում կոնկրետ գործոններ: Գնահատման չափանիշները որոշում է կայուն պատկերացումների միջոցով:	Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է, թե ինչպես կլուծի սահմանային գոտում ապրողների խնդիրները: Ընդգծում է կայուն զարգացման երեք գլխավոր բաղադրիչների միջև փոխադարձ կապը՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական:
Բազմակառուց-վածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ զուգորդություն / պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտն անվանում է և նկարագրում աշխարհագրական ոլորտները, սակայն չի կարող կապ հաստատել և չի կարող բացատրել դրանց ազդեցությունը գլոբալ քաղաքական մարտահրավերների և փոփոխությունների վրա: Չի կարող բացատրել նոոոլորտի ազդեցությունը Վրաստանի բնական պայմանների փոփոխության վրա և չի կարող հետևողականորեն փոխանցել ասելիքը: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը գիտի, թվարկում և նկարագրում է Վրաստանի սահմանամերձ գոտում ապրողների խնդիրները: Կարող է ընտրել չափանիշներ, դասակարգել և նկարագրել, սակայն չի կարող դրանք կապակցել գլոբալ քաղաքական մարտահրավերների և փոփոխությունների հետ: Չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը գիտի կայուն զարգացման կարևորությունը և հասկանում է դրա անհրաժեշտությունը, բայց նա չի հասկանում, թե ինչ դեր կկատարեն քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները շրջակա միջավայրի պահպանության միջոցառման մեջ: Չի կարող փոխանցել կանոնավոր և հաջորդականությամբ:
Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված զուգորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Աշակերտն անվանում է և նկարագրում աշխարհագրական ոլորտները, սակայն չի կարող կապ հաստատել և չի կարող բացատրել դրանց ազդեցությունը Վրաստանի բնական միջավայրի վրա: Չի կարող կապել նոոլորտը քաղաքական մարտահրավերների և փոփոխությունների հետ և չի կարող փոխանցել հետևողականորեն: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, գիտի գլոբալ քաղաքական մարտահրավերների և փոփոխությունների մասին, սակայն չի կարող դրանք կապել բնակչության գործունեության և բնական պայմանների հետ, չի կարող փոխանցել հետևողականորեն: Կարող է թվարկել առանձին չափանիշներ:	Աշակերտը գիտի կայուն զարգացման մասին, բայց չի կարող կապել գլոբալ քաղաքական մարտահրավերներն ու փոփոխությունները բնակչության բարեկեցության հետ: Չգիտի, թե ինչպես կարող են դրանք կապված լինել երկրի զարգացման գործընթացի հետ:
Նախակառուց-վածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա աշխարհագրական թաղանթի բաղադրիչների միջև: Աշակերտը չի կատարել առաջադրանքը:	Աշակերտը չկարողացավ հասկանալ փոխհարաբերությունը գլոբալ քաղաքական մարտահրավերների և փոփոխությունների և երկրի զարգացման գործընթացի միջև: Աշակերտը չի կատարել առաջադրանքը:	Աշակերտը չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կա գլոբալ քաղաքական մարտահրավերների և փոփոխությունների և երկրի կայուն զարգացման միջև: Աշակերտը չկատարեց առաջադրանքը:

Զարգացնող գնահատման կարևորությունը

Զարգացնող գնահատումը վերահսկում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և նպաստում ուսանման որակի բարելավմանը: Զարգացնող գնահատումը նպաստում է նաև աշակերտների մոտիվացմանը, աշակերտներին տրամադրում տեղեկություններ, թե ինչպես կարելի է բարելավել ուսանման արդյունքները, օգնում է նրանց համարժեք ինքնագնահատման, ուրիշին գնահատելու կարողության ձևավորման և հաջողության հասնելու հարցում:

Զարգացնող և ամփոփիչ գնահատումների միջև հիմնարար տարբերությունը գնահատման ընթացակարգի անցկացման ժամանակն է: Օրինակ՝ ամփոփիչ թեստավորումն անցկացվում է ուսումնական դասընթացի վերջում, իսկ զարգացնող թեստավորումը՝ դասընթացի սկզբում և դրա ընթացքում: Զարգացնող գնահատման գործիքներն այնպես են ստեղծված, որ ավելի սերտորեն են կապված ուսումնական գործընթացի և ուսումնական նյութերի հետ, ուստի դրանք ավելի հաճախակի և դինամիկ են օգտագործվում: Զարգացնող գնահատման ընթացակարգը պետք է իրականացվի այնպիսի ժամանակ, երբ ուսուցիչը կկարողանա դրա հիման վրա փոփոխություն կատարել ուսուցման գործընթացում, իսկ աշակերտը պետք է կարողանա համապատասխան փոփոխություններ կատարել ուսանման գործընթացում, կամ գնահատումից ստացված հետադարձ կապը կուժեղացնի նրա մոտիվացիան:

Զարգացնող գնահատման նպատակն է օգնել աշակերտին կատարելագործել իր հմտությունները, տարբեր խորհուրդների, հանձնարարականների կամ խնդրի լուծման ուղիների մշակման միջոցով: Այսպիսի դիտողությունների ժամանակ աշակերտն ուսուցչի մեկնաբանությունների օգնությամբ անընդհատ ստանում է այնպիսի տեղեկությունների, որոնք նրան օգնում են ավելի լավ սովորել, գիտակցել սեփական ուսման ընթացքը: Ուսուցիչը զարգացնող գնահատման միջոցով պլանավորում է ուսումնական գործընթացը և ուսուցման տեմպն այնպես, որ նրա գործողություններն ուղղված լինեն աշակերտի զարգացմանը:

Զարգացնող գնահատումն օգտագործում է այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ բանավոր մեկնաբանությունները, բանավոր / գրավոր խորհուրդները, դիտարկման թերթիկը, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման սխեման, հարցարանը, կարողության զարգացման մակարդակի գնահատումը և այլն: Այսպիսով, զարգացնող գնահատումն իրականացվում է որոշակի աշակերտի առաջընթացի հիման վրա աշակերտի սեփական ձեռքբերումների համեմատ՝ թե ինչ մակարդակի էր տիրապետում և գնահատման պահին ինչ մակարդակի է տիրապետում:

Զարգացնող գնահատման ձևը բանավոր կամ գրավոր մեկնաբանություններն են, որոնք արվում են ինչպես կիսամյակի ընթացքում, այնպես էլ դրա ավարտին: Մեկնաբանությունները նկարագրում են աշակերտի ուժեղ և թույլ կողմերը և պարունակում են հանձնարարականներ ուսանման բարելավման մասին: Հետազոտողների կարծիքով, մեկնաբանությունները դասավանդման շատ արդյունավետ մեթոդ են: Հետազոտող Ջոն Հեթին (1992) քննարկել է գրեթե 8000 հետազոտություն և եզրակացրել. Ամենահզոր մեթոդը, որը բարելավում է աշակերտի ակադեմիական առաջադիմությունը, մեկնաբանություններն են: Ըստ այդմ՝ կրթության որակի բարելավման ամենապարզ բաղադրատոմսը կլինի. «Որքան հնարավոր է հաճախ արեք մեկնաբանություններ»:

Հետազոտությունների արդյունքում երաշխավորված են մեկնաբանություններ անելու հետևյալ մեթոդները.

1. Ուսուցչի մեկնաբանությունները պետք է ուղղված լինեն աշակերտի արդյունքների բարելավմանը: Մեկնաբանությունն օգտակար է, եթե այն մանրամասնորեն բացատրում է աշակերտին, թե ինչն է լավ ստացվել և ինչը՝ ոչ: Աշակերտին միայն ակնարկելը, որ պատասխանը ճիշտ չէ, բացասաբար է ազդում նրա վրա: Իսկ նշելը, որ աշխատի այնքան, մինչև հասնի որոշակի արդյունքի, նրա ակադեմիական աճի գործոններից մեկն է:

2. Ուսուցչի մեկնաբանությունները պետք է լինեն ժամանակին: Օրինակ՝ հանձնարարությունը, թեստը ավարտվելուն պես արված մեկնաբանությունը համարվում է ամենարդյունավետը, քան մեկնաբանությունը թեստի որոշակի մասն ավարտելուց հետո: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ ուշ արված մեկնաբանություններն ավելի քիչ ազդեցություն ունեն աշակերտի և նրա ակադեմիական առաջադիմության վրա:
3. Ուսուցչի կողմից արված մեկնաբանությունները պետք է վերաբերեն կոնկրետ չափանիշների: Պետք է սահմանվի չափանիշ, որը միտված է գիտելիքների որոշակի մակարդակի և հմտությունների ու կարողությունների զարգացման: Մեկնաբանությունները պետք է կապված լինեն հենց այս սահմանված չափանիշների հետ: Նման մեկնաբանությունը շատ ավելի կարևոր է: Այն ծառայում է աշակերտի տարբեր կարևոր կարողությունների զարգացմանը:
4. Աշակերտները ևս կարող են արդյունավետ մեկնաբանություններ անել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշակերտները ևս կարող են իրենց առաջընթացին արդյունավետորեն հետևել (Թրամել, Շլոս և Ալֆեր, 1994): Աշակերտները սովորելու ընթացքում գրի են առնում իրենց հաջողությունները, դիմում են ինքնագնահատման: Սա օգնում է նրանց տիրապետել կոնկրետ հմտությունների, ինչպես նաև բարձր ուսումնական արդյունքների հասնել:

Ուսուցչի կողմից ժամանակին արված, արդյունքների բարելավմանը և կոնկրետ կարողությունների տիրապետմանը միտված մեկնաբանությունները ուսումնական գործընթացը կդարձնեն ավելի հետաքրքիր և արդյունքին միտված: Մեկնաբանությունների ոչ պատշաճ հաճախականությամբ օգտագործումը բացասաբար է ազդում ուսուցման արդյունավետության և ճկունության վրա:

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Օգտագործած գրականություն

1. Մ. Բլիաձե, «Կայուն զարգացման նպատակները. https://goo.su/DpjUWaX
2. Մ. Բլիաձե և ուրիշներ, Գիտությունը և տեխնոլոգիաները. «Մեր տիեզերքը». https://vet.ge/api/fi les/educational_resources/621f86dcd16c28001cf9eb3d
3. Մ. Բլիաձե և ուրիշներ, Գիտությունը և տեխնոլոգիաները: «Արդյունաբերությունը, կյանքն ու կենցաղը». https://vet.ge/api/fi les/educational_resources/621f88bfd16c28001cf9ecc1
4. Մ. Բլիաձե և ուրիշներ, Գիտությունը և տեխնոլոգիաները. https://vet.ge/api/fi les/educational_res ources/621f8917d16c28001cf9ed9b
5. Մ. Բլիաձե և ուրիշներ, Բնակման միջավայրը և էկոլոգիան. https://goo.su/6b3n2
6. ՄԱԿ-ի մոդելավորում, Մասնակցի գրքից՝ Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիա», Թբ., 2006.
7. Վեբսթեր Ք. «Վերանայի՛ր, մերժի՛ր, նվազեցրո՛ւ»: British Counuil, Թբ.,2007:
8. Խունձուկիշվիլի Մ., Բիվեր Ս. Զարգացնող գնահատումը և տարբերակված ուսուցումը, Դասագիրք ուսուցիչների համար: Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն, Թբ. 2018
9. Ջեյմս Ֆ. Սիլվեր, Աշխարհագրություն, Մեթոդական նյութեր ուսուցիչների համար: Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն, Թբ., 2016
10. Մ. Բլիաձե, Հետազոտության վրա հիմնված ուսուցում. http://mastsavlebeli.ge/wp-content/uploads/2022/10/Mastsavleblis-Tsigni-2021-2-WEB.pdf
11. Մ.Բլիաձե, Ն. Զաալիշվիլի, Զ. Բերիա, Ն. Արաբուլի, Գիտությունը և տեխնոլոգիաները.
    Թեմա N1. Մեր աշխարհը. https://vet.ge/api/fi les/educational_resources/ 621f86dcd16c28001cf9eb3d
    Թեմա N2. Արդյունաբերությունը, կյանքն ու կենցաղը. https://vet.ge/api/fi les/educational_resources/621f88bfd16c28001cf9ecc1
    Թեմա N3. Տեխնոլոգիաներն ու բժշկությունը. https://vet.ge/api/fi les/educational_resources/621f8917d16c28001cf9ed9b
    Թեմա N4. Բնակման միջավայրն ու էկոլոգիան. https://vet.ge/api/fi les/educational_resources/621f89a4d16c28001cf9eec0
12. Մ. Բլիաձե, Կայուն զարգացման նպատակները.https://goo.su/DpjUWaX
13. Մ. Բլիաձե, Մ. Զիբզիբաձե. Կլիմայի փոփոխությունը, Կենսաբազմազանություն, Թափոնները և բնության աղտոտումը, Ջուրը և ջրային ռեսուրսները, Էներգիա և էներգետիկ ռեսուրսներ. https://www.ecolog.online/masala?fbclid=IwAR2YNn1k61CY8GJ5yWMIXw- fZjYET4_fEj6YuTi3XwxEVOPPkUHg-wHZmg
14. Մ. Սեխնիաշվիլի, «Քանի երկիր կա այսօր աշխարհում». http://mastsavlebeli.ge/?p=27667
15. Մ. Սեխնիաշվիլի, Զարգացնող գնահատումը ուսումնական գործընթացում. http://mastsavlebeli.ge/wp-content/uploads/2022/10/Maszavleblis-wigni-16-WEB.pdf
16. Մ. Սեխնիաշվիլի, Սինգապուր – «Առյուծի քաղաք». http://mastsavlebeli.ge/?p=23206
17. Մ. Սեխնիաշվիլի, Գլոբալ գործարք և մեկ երկրագունդ. http://mastsavlebeli.ge/?p=31979
18. Մ. Սեխնիաշվիլի, Ապառազմականացված գոտիները և ջրային ռեսուրսները. http://mastsavlebeli.ge/?p=1298
19. Լ. Ալփաիձե, Շանհայ: Արևմտյան պատուհան Չինաստան, Գրառումներ հասարակական աշխարհագրության դասերի համար. http://mastsavlebeli.ge/?p=31620
20. Մ. Ռատիանի, Ջուրը և դրա հետ կապված խնդիրները. http://mastsavlebeli.ge/?p=1197

Հետաքրքիր կայքեր քարտեզների մասին.

https://mapmakerclassic.nationalgeographic.org/
https://www.google.com/earth/versions/
http://unintentionalmaps.blogspot.com/
http://www.maps-for-free.com/
http://www.loc.gov/rr/geogmap/guide/gmilltoc.html
http://www.journalofmaps.com/
http://old.enciclopedia.com.pt/articles.php?article_id=1498

Աշխարհագրական խաղեր.

http://www.hhmi.org/biointeractive/earthviewer-online-and-downloadable-version
http://kids.nationalgeographic.com/world/
https://itunes.apple.com/us/app/what-is-there-learn-geography/id660164295?mt=8
http://world-geography-games.com/
https://www.commonsensemedia.org/app-reviews/ansel-and-clairs-adventures-in-africa
https://www.commonsensemedia.org/app-reviews/stack-the-countries
https://geoguessr.com/

Միջազգային բնապահպանական և էկոլոգիական կազմակերպություններ

Բնության պահպանության միջազգային միություն (անգլ.՝ International Union for Conservation of Nature; IUCN). – https://www.iucn.org/
Չարլզ Դարվինի հիմնադրամ (անգլ.՝ Charles Darwin Foundation). https://www.darwinfoundation.org/en/
Գլոբալ նեսթ (անգլ.՝ Global Nest). https://www.gnest.org/
Կենդանիների պաշտպանության համաշխարհային ընկերություն (անգլ.՝ World Society for the Protection of Animals –WSPA). https://www.worldanimalprotection.org/
Էկոլոգիական մակնշման միջազգային ցանց (ing. Global Ekolabelling Network – GEN). https://globalecolabelling.net/
Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (Global Environment Facility, GEF). https://www.thegef.org/
Միջազգային կանաչ խաչ. https://www.gcint.org/
Միջազգային դիտարկման ինստիտուտ. http://www.worldwatch.org/
Շրջակա միջավայրի եվրոպական գործակալություն (անգլ.՝ European Environment Agency – EEA). https://www.eea.europa.eu/
Ակումբ «Սիերա» (անգլ.՝ Sierra Club). – www.sierraclub.org

Հաշվիչներ

Էկոլոգիական ոտնահետքերի հաշվիչ. https://footprintcalculator.henkel.com/en
Աշխարհի բնակչության հաշվիչ. https://countrymeters.info/en

Օգտակար հղումներ

ՄԱԿ-ի զարգացման ծրագիր. http://www.undp.org/
ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը Վրաստանում. http://www.ge.undp.org/content/georgia/ka/home.html
Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն, ՅՈՒՆԵՍԿՕ. – https://en.unesco.org/
ՄԱԿ-ի Կանանց կազմակերպություն. https://georgia.unwomen.org/ka
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ՝ ՅՈՒՆԻՍԵՖ. https://www.unicef.org/
ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր. UNEP. https://www.unenvironment.org/
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ. – www.unfpa.org
Համաշխարհային բանկ. http://www.worldbank.org/
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն. www.who.int
Արժույթի միջազգային հիմնադրամ. https://www.imf.org/
Գյուղատնտեսության զարգացման միջազգային կազմակերպություն. https://www.ifad.org/
Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպություն. https://public.wmo.int/
Առևտրի համաշխարհային կազմակերպություն. https://www.wto.org/
Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն. https://www.unwto.org
www.wikipedia.org
www.unece.org
www.environmenthouse.ch
www.atlapedia.com
www.nationalgeographic.com
http://mastsavlebeli.ge/?cat=18